

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

сиря 1 ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
СЕРИЯ 1 АРМЕНОВЕДЕНИЕ
VOLUME 1 ARMENIAN STUDIES

№ 3 (144)

ԵՐԵՎԱՆ - 2014

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 1967 թվականից:
Журнал выходит три раза в год. Издается с 1967 года.
The Bulletin is published thrice a year. It has been published since 1967.

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ»
"БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛСАРАНИ"
"BANBER YEREVANI HAMALSARANI"

Գլխավոր խմբագիր՝ **Միրզոյան Յ. Ղ.**
խմբագրական խորհուրդ.
Ալեքսանյան Ա. Ս., Ավետիսյան Լ. Վ. (գլխ. խմբագրի տեղակալ), **Գաբուզյան Ա. Յ.,**
Գոնչար Ն. Ա. (գլխ. խմբագրի տեղակալ), **Խաչատրյան Ա. Կ., Հարությունյան Է. Ա.,**
Հովակիմյան Ա. Է. (պատասխ. քարտուղար), **Հովսեփյան Լ. Ս., Սիմոնյան Ա. Յ.**

Главный редактор: **Мирзоян Г. К.**
Редакционная коллегия:
Аветисян Л. В. (зам. главного редактора), **Алексамян А. С., Арутюнян Э. А.,**
Габузян А. А., Гончар Н. А. (зам. главного редактора), **Овакимян А. Э.**
(ответ. секретарь), **Овсебян Л. С., Симонян А. Г., Хачатрян А. К.**

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**
Editorial Board:
Aleksanyan A. S., Avetisyan L. V. (Deputy editor-in-chief), **Gabuzyan A. H.,**
Gonchar N. A. (Deputy editor-in-chief), **Harutyunyan E. A., Hovakimyan A. E.** (Ex-
ecutive Secretary), **Hovsepyan L. S., Khachatryan A. K., Simonyan A. H.**

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ - АРМЕНОВЕДЕНИЕ - ARMENIAN STUDIES

խմբագրական խորհուրդ - Միրզոյան Յ. Ղ. (պատասխանատու խմբագիր),
Ավետիսյան Յու. Ս., Գալստյան Ս. Ա., Հովհաննիսյան Պ. Յ., Ղազինյան Գ. Ս.,
Սինասյան Է. Գ., Սիմոնյան Ա. Յ., Քալանթարյան Ճ. Ա.

Редакционная коллегия: **Мирзоян Г. К.** (ответственный редактор),
Аветисян Ю. С., Галстян С. А., Казинян Г. С., Калантарян Ж. А.,
Минасян Э. Г., Оганисян П. А., Симонян А. Г.

Editorial Board: **Mirzoyan H. Gh.** (managing editor), **Avetisyan Yu. S.,**
Galstyan S. A., Ghazinyan G. S., Hovhannisyan P. H., Kalantaryan Zh. A.,
Minasyan E. G., Simonyan A. H.

© Բանբեր երևանի համալսարանի - 2014
© երևանի պետական համալսարանի հրատարակչություն - 2014

ՀՈՔԻ ԳՐՔԻ՝ ԻՍԻՔԻՈՍ ԵՐՈՒՄԱՂԵՄԱՅՈՒ ԵՎ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՄԵԿԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԵՐՍՆԵՐԸ

ԷԼՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Սուրբ Գրիգոր Տաթևացին ապրել և ստեղծագործել է այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ վտանգված էր ոչ միայն հայրության կեցությունը, այլ նաև հավատի պահպանումը, որի համար հայոց վարդապետները, «տիւ և գիշեր մաքառելով ընդդէմ քրիստոսատեաց աղթարմայիցն»¹, ուսուցանում էին իրենց աշակերտներին և եկեղեցին զերծ պահում թշնամիներից: Տաթևացին գլաձոր-տաթևյան համալսարանների լավագույն ավանդների կրողն ու շարունակողն է, ամբողջացնողն ու լրացնողն է իր նախորդներից՝ Մխիթար Գոշից, Վանական Վարդապետից, Ներսես Մշեցուց, Եսայի Նշեցուց, Հովհան Որոտնեցուց փոխանցված ավանդների: Հայ միջնադարի փիլիսոփայական և աստվածաբանական մտքի սյուներից է Տաթևացին: Նա գիտական մտքի խոշոր համակարգողն է, որի հոգևոր ժառանգությունը մեծ հետք է թողել հայ աստվածաբանական և փիլիսոփայական մտքի պատմության մեջ: Մեզ է ավանդել հսկայածավալ մատենագրական ժառանգություն՝ քարոզներ, լուծմունքներ, մեկնություններ, դավանաբանական, իմաստասիրական աշխատություններ: Սրանց մեջ ուրույն տեղ են գրավում սուրբգրային մեկնությունները, որոնք կարոտ են մանրակրկիտ ուսումնասիրության: Այստեղ մենք կանդրադառնանք Գրիգոր Տաթևացու՝ աստվածաշնչյան Հոբի գրքի լուծմունքին, որն ունի «Նորին Գրիգորի աշակերտի եռամեծի Յովհաննու Որոտնեցույ լուծմունք դժուարիմաց բանից ի մեկնութիւն գրոցն Յոբայ եւ ի բանս մեկնչաց» խորագիրը:

Աստվածաշնչի Հոբի գիրքը գրված է բանաստեղծական պատկերավորությամբ, հարուստ բառապաշարով, դարձվածքներն ու սուր հարցադրումները ամենասովորական մանրուքն անգամ շոշափելի ու զգալի են դարձնում: Մարդկային սրտի ամենախորունկ խորհուրդները և ամենավեհ զգացումներն արտահայտելու միջոցներից մեկն է բանաստեղծությունը, որի տարրերն Աստվածաշնչում շատ են: Հոբի գիրքը եբրայական բանաստեղծության լավագույն նմուշներից է, որին հանդիպում ենք ոչ միայն Սաղմոսաց, Առակաց գրքերում, այլև Երգ Երգոցում, Երեմիայի Ողբում և մարգարեական գրքերում: Եբրայական բանաստեղծական ոճին բնորոշ է գրական զուգընթացությունը (parallelism): Բանաստեղծն իր ուժգին հույզերն արտահայտելու համար գործածում է չափազանցություններ: Հոբի գրքի հեղինակի բանաստեղծական հմտությունները նպաստում են բացահայտելու գլխավոր հերոսի՝ Հոբի խորը և ուժգին զգացումներն ու ապ-

¹ **Թովմա Մեծոբեցի**, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 15:

րունները: Աստվածաշնչի Յոթի գիրքը բաղկացած է հինգ մասերից²:

Յոթը քրիստոնեական եկեղեցու ավանդության մեջ հանդես է գալիս որպես Յիսուս Քրիստոսի նախատիպար: Եվ պատահական չէ այն խոսում փաստը, որ Յայ առաքելական սուրբ եկեղեցին Մեծ պահքի շրջանում բուլոր ուրբաթ օրերի ճաշու ընթերցվածքները Յոթի գրքից է վերցրել՝ որպես Քրիստոսի չարչարանքների նախատիպ, իսկ Ջատկի ճրագալույցի ընթերցվածքը՝ որպես Քրիստոսի Յարության նախակարապետ³:

Յոթն ապրել է Ուգ (երբեմն հանդիպում ենք նաև Յուս, Օսիդ) անվանումով մի երկրում, որն առկա է միայն Ծննդոց գրքում, այն էլ որպես անծնանուն. «Եւ որդիք Արամայ. Յուս, եւ Էմուդ, եւ Գադեր, եւ Մոսոք»⁴: Ենթադրվում է, որ այս քաղաքը կամ երկիրը (այսպես հաճախ անվանվում էին աստվածաշնչյան քաղաքները) տեղակայված է եղել Միջագետքում: Յայ միջնադարյան հեղինակներից Ստեփանոս Սյունեցու (Ը դար) Յոթի գրքի մեկնության *պատճառ*-ի հատվածներից մեկում գտնում ենք. «Բայց զգերեզմանն Յոթայ այժմ յԱրաբիա ցուցանեն, եւ զտեղին, յորում նստեր ի հարուածսն»⁵: Ըստ Տաթևացու՝ «Եւ է ի մէջ Արաբիոյ և Եդոմայ, զոր այժմ կոչի Թիլգուրան, ուր գերեզման նորա է»⁶, իսկ Յոթի լուծնունքում բացատրում է. «Յոթ անուն չորս ինչ նշանակէ՝ նախ՝ հայր լսի, երկրորդ՝ համբերող, երրորդ՝ վիհ, չորրորդ՝ խորհուրդ, զի յինքեան ունէր զխորհուրդ Ադամայ և զՔրիստոսին»⁷: Իսկ ըստ «Բառարան Սուրբ Գրոց»-ի՝ «էր յարևելս Եդոմայ, հաւանականապէս ոչ հեռի ի Պասարայէ»⁸: Ինչպես տեսնում ենք, հստակ է մի բան, որ վերոնշյալ քաղաքը (երկիրը) գտնվում է Միջագետքում, և չի բացառվում տեղացի ժողովրդի բանավոր ստեղծագործությունների ազդեցությունը գրքի շարադրման վրա:

Մեզ է հասել Գրիգոր Տաթևացու՝ Յոթի գրքի լուծնունքի ինքնագիր օրինակը, որը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (ծեռ. 1115): Այն բաղկացած է ցանկից, բուն նյութից, առաջաբանից և հիշատակարանից: Ինչպես հիշատակարանում է նշվում, լուծնունքը գրվել է Մեծփականքում հաստատված դպրոցի ուսանողության համար՝ քարոզխոսության և ճառելու նպատակով: Այն հստակ բաժանված է մասերի, որպեսզի նրանց հասու լինի և դյուրըմբռնելի. «...ընծայեցի ի պատիւ սուրբ տեղույս ուսումնասէր անձանց ուղղադաւան մտաց, և ի գլուխս բաժանելով վասն մտաւոր տեսութեան և ի զարդ ուսման ի պէտս բեմբասացութեան և ի խրատս զրուցատրութեան»⁹: Յեղինակի թե՛ «Յարցմանց»-ի, թե՛ «Ոսկեփորիկ»-ի ինքնագիր հիշատակարաններում նշվում է գրվածքը մասերի բաժանելու մասին,

² Ավելի մանրամասն տես **Գր. Դարբինյան**, Ներածություն Յին Կտակարանի, Սբ. Էջմիածին, 2000, էջ 244:

³ Տես «Ճաշոց, գիրք Յայաստանեայց եկեղեցւոյ», երրորդ տպ., նմանատպութիւն 1872 թ. Բ տպագրութիւնից, ի Վաղարշապատայ, ՌՆԽԸ-1999, էջ 255-256:

⁴ Ծննդ. Ժ 23, նաև Ա Մնաց. Ա 17:

⁵ Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ծեռ. 1981, ք. 208ա, նաև՝ ՄՄ, ծեռ. 1879, ք. 75ա:

⁶ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Յարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 327:

⁷ ՄՄ, ծեռ. 1115, ք. 8բ:

⁸ «Բառարան Սուրբ Գրոց հանդերձ պատկերօք, աշխարհացուցօք և տախտակօք», Կոստանդնուպոլիս, 1881, էջ 382:

⁹ ՄՄ, ծեռ. 1115, ք. 123 բ:

ինչից կարող ենք հստակ հետևություն անել, որ Տաթևացու առաջնային խնդիրներից է եղել իր գործերը հասու դարձնել ունկնդրին և հետագա ընթացողին, որպեսզի նրանք հայ եկեղեցու դավանանքի ծիրից դուրս չմնան: Եվ կարծում ենք՝ պատահական չէր, որ լեկթեմուրյան արշավանքների, բռնությունների, նաև «աղթարների» ոտնձգությունների ժամանակ նա նախ ուսուցանեց Յոթի համբերության և քաջասրտության, Աստուծոն չլքելու, չարին չհետևելու, Եկեղեցին ուղղադավան պահելու և սերունդներին փոխանցելու մասին: Այս հանրագիտարանային մտածելակերպ ունեցող գործիչը, ապրելով ԺԴ-ԺԵ դարերում, չէր կարող տեղյակ չլինել իրենից առաջ եղած Յոթի գրքի թե՛ Յայ եկեղեցու և թե՛ Ընդհանրական եկեղեցու հայրերի մեկնություններին:

Իսիքիոս¹⁰ Երուսաղեմացու կենսագրության մասին մեզ շատ քիչ բան է հայտնի. ապրել և գործել է 5-րդ դարում, աշակերտել ս. Գրիգոր Աստվածաբանին¹¹: Իսիքիոս Երուսաղեմացու Յոթի գրքի մեկնությունը¹² մեզ է հասել միայն հայերեն թարգմանությամբ՝ պահպանված Վանական Վարդապետի նույնանուն մեկնության մեջ, որով և ծանոթանում ենք Իսիքիոսի երկին: Յոթի գրքի Իսիքիոսի մեկնության թարգմանությունը հայտնի է եղել հայ միջավայրում և լայն կիրառություն ունեցել հետագա դարերի մեկնիչների կողմից՝ Ստեփանոս Սյունեցու, Դավիթ Քոբայրեցու, Վանական Վարդապետի: Վերջինիս մեկնությունը լայնածավալ, քաղվածո մեկնություն է¹³, բացի Իսիքիոսից՝ օգտվել է նաև այլ հեղինակներից՝ Եփրեմ Ասորի, Ստեփանոս Սյունեցի¹⁴, Դավիթ Քոբայրեցի¹⁵:

Աստվածաշնչի գրքերի մեկնությունների խթանաբանությունները հասկանալի դարձնելու համար հայ մատենագրության մեջ ԺԱ-ԺԳ դարերում ստեղծվում են դրանց «պատճառ»-ները: «Պատճառ»-ը մեկնողական գրականության ժանր է՝ նախակրթություն, նախամուտք, որում վերլուծվում և պարզաբանվում է տվյալ աստվածաբանական կամ փիլիսոփայական երկի ստեղծման ժամանակը, շարժառիթը, հեղինակային պատկանելությունը: «Պատճառ»-ները մի տեսակ ներածական նախամուտք են և

¹⁰ Ընդհանրական եկեղեցու հայրերից, ճգնել է Պաղեստինի անապատներից մեկում, սերտել Ս. Գիրքը, Երուսաղեմի արքեպիսկոպոսի կողմից 412 թ. երեց է կարգվել: Ըստ Կյուրեղ Սկյութապոլսեցու վկայության՝ 428-429 թթ. մասնակցել է Երուսաղեմի Ս. Եվթիմոսի տաճարի օծմանը: Մահկանացուն կնքել է 450 թ.-ից հետո:

¹¹ Նրա մատենագրական վաստակի և կենսագրական մանրամասների մասին տես Charles Renoux-ի կազմած Իսիքիոսի Յոթի մեկնության քննական բնագիրը, PO, t. 42, 1983, էջ 11-59, նաև՝ **Յ. Զ. Չրաքեան**, Իսիքիոս երեց Երուսաղեմացի, «Բազմավեպ», 1909, մայիս, թ. 5, էջ 193-200, նաև՝ **Յ. Քյոսեյան**, Եկեղեցու հայրեր, վարդապետներ (IV-VIII դդ.), Եր., 2007, էջ 190-192:

¹² Տես **Յ. Զ. Չրաքեան**, Իսիքիոսի Յովբայ մեկնութեան գրական արժեքը, «Բազմավեպ», 1912, թիւ 7-8-9, էջ 399-408:

¹³ Տես **Յ. Ոսկեան**, Յովհաննես Վանական և իւր դպրոցը, Վիեննա, 1922, էջ 26-27:

¹⁴ Այս մասին առավել մանրամասն տես «Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց», Ե, Իսիքիոսի երկիցու Երուսաղեմացոյ Մեկնութիւն Յոբայ, Վենետիկ, 1913, Յ. Զ. Չրաքեանի գրած Ներածութիւն, էջ ԽԱ-ԽԲ (այսուհետ՝ Յ. Զ. Չրաքեան, Ներածութիւն և էջ):

¹⁵ Տես նույն տեղը, էջ ԼԸ-Խ: Նաև որոշակի ակնարկ տես **Յ. Ներսէս Վ. Ակիմեան**, Մատենագրական հետազոտութիւններ, քննութիւն եւ բնագիր, հտ. Ա, Վիեննա, 1922, էջ 80-81, նաև՝ **Յ. Ն. Ակիմեան**, Դավիթ վարդապետ Քոբայրեցի, «Հանդէս ամսօրեայ», 1908, թիւ 4, 5, էջ 141:

դրվում են մեկնություններից առաջ¹⁶: Մեզ հասած Գրիգոր Աբասյանի կազմած «Գիրք Պատճառաց» պայմանական խորագիրը կրող երկուն ի շարս այլ «պատճառ»-ների, կա նաև Զոբի գրքի Իսիքիոսի մեկնության «պատճառ»-ը¹⁷: Սովորաբար Աստվածաշնչի գրքերը, այդ թվում Զոբինը, ըստ «Պատճառաց գրոց»-ի, պատկանում են «լայն» շարքին¹⁸ և ընդմիջարկվում են «նուրբ գրեանք»-ով, որոնք մի տեսակ կապող օղակ են Զին և Նոր Կտակարանների գրքերի միջև: Զ. Ներսես Ալիմյանը «Գրիգոր որդի Աբասայ՝ հեղինակ Պատճառաց գրոց» հոդվածում անդրադառնում է Վիեննայի Մխիթարյան մատենադարանի թիվ 47 ձեռագրում առկա «պատճառ»-ներին¹⁹, որը ՄՄ 1879 հնագույն ձեռագրի կրկնօրինակն է:

Իսիքիոսի երկի մեկնության մեթոդն առավել բնորոշ է ալեքսանդրյան դպրոցի մեկնաբանության եղանակին, քանզի ակներև է նրա մեկնության այլաբանական ոճը, երբեմն նաև բառերի այլաբանական ըմբռնումն ու մեկնումը, որի պատճառը Աստվածաշնչի Զոբի գրքի առանձնահատկությունն է, քանի որ շատ հատվածներ պետք է հասկանալ այլաբանորեն: Այս ամենով հանդերձ՝ Իսիքիոսն իր մեկնության մեջ զանց չի առնում նաև բառական-բացատրական մեթոդը, որն ավելի բնորոշ էր անտիոքյան դպրոցին²⁰: Նույնը կարող ենք վերագրել նաև Տաթևացուն, որովհետև իր լուծմունքում օգտագործելով այլաբանական մեթոդը՝ նա կիրառել է նաև տառացի-բառացի բացատրական մեթոդը: Եվ ինչպես Զայ Եկեղեցու որոշ մատենագիրներ, այնպես էլ Տաթևացին, երբեմն կազմել է «շղթա»՝ մեկնությունների շարք, որոնցում տարբեր մեկնիչների մտքերն ու շարադրանքները յուրովի է մեկնել, նոր իմաստներ ավելացրել: Տաթևացին բավականին խտացված, համառոտ ձևով է իր խոսքն արտահայտում երկում, որը երբեմն բնորոշ է ինչ-որ «նշումներ» անելուն, որոնք բանավոր խոսքի ժամանակ պետք է ծավալվեն: Զնուտ մանկավարժը, անշուշտ, գրավոր խոսքն ընդլայնել է դասախոսությունների ժամանակ, հատկապես այս դեպքում, երբ իրեն էին վստահված նաև Մեծօփա վանքի սաների դաստիարակությունն ու կրթությունը:

Տաթևացին Զոբի գրքի լուծմունքի հիշատակարանում նշում է, որ օգտվել է Զոբի գրքի Վանական Վարդապետի քաղվածո մեկնությունից:

¹⁶ Տե՛ս **Ս.-Է. Շիրինյան**, Մեկնողական ժանրի կազմավորումը և զարգացումը Զայաստանում, «Աշտանակ» հայագիտական պարբերագիրք, թիվ 9, Եր., 2000, էջ 36-64:

¹⁷ Տե՛ս ՄՄ, ձեռ. 1879, ք. 3աբ: Այստեղ կարելի է նշել, որ Զոբի գրքի Իսիքիոսի մեկնության *պատճառ*-ը համընկնում է Զ. Բ. Չրաքյանի, նաև Ը. Որնուի կողմից հրատարակված մեկնության սկզբի հետ:

¹⁸ Տե՛ս **Զ. Ն. Ալիմեան**, Պատճառաց գիրքը, «Հանդես ամսօրեայ», 1907, էջ 228-235: Առավել մանրամասն տե՛ս **Մանես Էռնա Շիրինյան**, Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը (հայկական և հունական դասական ու բյուզանդական աղբյուրների բաղդատությամբ), Եր., 2005:

¹⁹ Տե՛ս **Զ. Ն. Ալիմեան**, Գրիգոր որդի Աբասայ՝ հեղինակ պատճառաց գրոց, «Հանդես ամսօրեայ», 1907, էջ 132-135, նաև **Զ. Ն. Ալիմեան**, Պատճառաց գիրքը, «Հանդես ամսօրեայ», 1907, էջ 228-235, 271-274:

²⁰ Մեկնողական դպրոցների մասին առավել մանրամասն տե՛ս **Փ. Անթապյան**, Զայ մեկնաբանական գրականության տեսական նախահիմքերի շուրջ, «Բանբեր Մատենադարանի», № 15, Եր., 1986, էջ 60-94, **նույնի**՝ Վարդան Արևելցի, կյանքն ու գործունեությունը, գիրք Բ, Եր., 1989, էջ 175-215: Որոշ պատմական անդրադարձների մասին տե՛ս **Ե. Տեր-Մինասյան**, Ընդհանուր եկեղեցական պատմություն, Էջմիածին, 1908, էջ 140-152:

Սակայն պետք է նշել, որ նույն հիշատակարանում Տաթևացին խոսում է նաև այլ մեկնիչներից օգտվելու մասին. «...ընթերցմամբ հաւաքեցի գր-
 ժուարալոյծ բանս Յորայ և զմեկնչաց նորա»²¹, մինչդեռ Յ. Ք. Չրաքեանը
 գրում է, որ «Տաթևացին յանուանէ միայն զՎանականն կը ճանչնայ»²², և
 Վանականի միջոցով՝ նաև մյուս մեկնությունները: Եզրակացնել, որ
 Տաթևացին անվանապես Վանականից բացի Յորբի գրքի այլ մեկնիչների
 գրվածքների ծանոթ չէ, կարծում ենք, այնքան էլ ճիշտ չէ: Հատկապես, երբ
 Վանականի բերած անհեղինակ մեջբերումները Տաթևացու երկերում փո-
 խարհինվում են հեղինակային մեջբերումներով: Իսիքիոսի մեկնությունը
 մինչև Յոր ԻԱ 29 համարն է, որից հետո ոչ մի տեղ Վանական Վարդա-
 պետն իր մեկնության մեջ չի նշում Իսիքիոս (երբեմն նաև Եւսիքիոս) անու-
 նը: Տաթևացին, ինչպես նշել է հիշատակարանում, լուծմունքը դյուրության
 համար բաժանել է մասերի. սկզբում ցանկի նման գրել է համառոտ «Են-
 թավերնագրերը», որից հետո ներկայացրել նյութը: Տաթևացու բացատ-
 րությունները երբեմն բավականին համառոտ են, նույնիսկ մեկ բառով ար-
 տահայտված, որոնք Աստվածաշնչի Յորբի գրքում չենք հանդիպում, սա-
 կայն նախորդ մեկնիչների գործերում գտնում ենք այդ բառերի առավել
 ծավալուն մեկնությունը, ինչպես օրինակ՝

<p>Իսիքիոս Բազում ինչ մեզ Աստուած արձանս առ յօգտակար տեսիլս կանգնեաց, բազում և մեծամեծ իմաստասիրու- թեան ետ տարացոյս...²³: (թ. 134)</p>	<p>Տաթևացի Բան. Արձանս: Լծ. Որպէս քար կանգ- նենք ի ճանապարհս²⁴: (թ. 8ա)</p>
---	---

Գտնելով նմանություններ և՛ մտքի, և՛ ձևակերպման մեջ՝ չենք կարող
 չնկատել Տաթևացու մտքի թռիչքը, որ երևում է գրվածքի գրեթե բոլոր էջե-
 րում: Որպես վկայություն ասվածի՝ բերենք մի քանի օրինակ.

<p>Իսիքիոս Պատարագս ըստ թուոյ ուստերաց և դստերացն մատուցանէր: Իսկ քանի էին սոքա՞. տասն էին ըստ թուոյ: Իսկ ապա ընդ զգալի պատարա- գացս, զիմանալիսն ի միտ առ և զճ- գնողին զփոյթ բարեպաշտութեանն իմացիր ըստ օրինացն տասն պա- տուիրանացն: ...Իսկ և զուարակ մի մատուցանէր ըստ Քրիստոսի քա- ղաքավարութեանն, որ ըստ նմանու- թեան զուարակի վասն մեղաց մե- րոց զենաւ: (թ. 152-153)</p>	<p>Տաթևացի Նախ՝ զի տասն էին թուով՝ եօթն ուս- տերք և երեք դստերք, ըստ թուոյ նո- ցա մատուցանէր: Երկրորդ՝ ի սրբու- թիւն տասն զգայարանաց նոցա: Եր- րորդ՝ ի խորհուրդ տասնաբանեան օրինացն՝ տասն պատարագ մատու- ցանէր և ըստ նմանութեան Քրիստո- սի՝ մի զուարակ, որ վասն մեղաց մե- րոց մեռաւ, զի ըստ օրինացն և ըստ Աւետարանին կայր: Չորրորդ՝ ի խրախութիւն զինւոյ տասն մեղս գործի, այսինքն՝ բազմակերութիւն,</p>
---	--

²¹ ՄՄ, ձեռ. 1115, ք. 123բ:
²² **Յ. Ք. Չրաքեան**, Ներածութիւն, էջ ԽԳ:
²³ Մեջբերումների ձեռագրային էջերը նշվում են ըստ Յ. Ք. Չրաքեանի կազմած
 տպագրի:
²⁴ **Գրիգոր Տաթևացու**՝ Յորբի գրքի լուծմունքը դեռևս անտիպ է, ուստի բնագրա-
 յին մեջբերումները ներկայացնում ենք ՄՄ 1115 ինքնագրի հիման վրա:

Բ՝ արբեցութիւն, Գ՝ զմայլումն զգա-
յութեանց, Դ՝ փափկութիւն մարմնոյ,
Ե՝ փոփոխէ զխորհուրդն, Չ՝ այլայլէ
զբանն, Է՝ այլն զգործն, Ը՝ զիմաս-
տութիւնն յիմարս, Թ՝ // զհանդրատն
խռովէ, Ժ՝ պատուիրանացն Աստու-
ծոյ հեղգութիւն գործէ, վասն որոյ ա-
սէ առաքեալ. Սի՛ արբենայք զինուով,
յորուն զեղխութիւն է (Եփես. Ե 18):
Վասն այն Յոբ տասն պատարագաւ
սրբէր տասն մասնաւոր մեղսն, որ
գտանի ի յարբեցութիւն, և մի զուա-
րակ՝ ի սրբութիւն վասն ականայիւ
խորհրդոյ մեղացն, զոր աղօթէ մար-
գարէն. Ի գաղտնեաց իմոց սուրբ ա-
րա զիս (Սաղմ. ԺԸ 13-14): (թ. 9բ-
10ա)

Լ. Խաչիկյանը, խոսելով Եղիշեի «Արարածոց մեկնութիւն» երկի՝ Գրի-
գոր Տաթևացու երկերի վրա թողած ազդեցության մասին, իրավացիորեն
նշում է. «Տաթևացին իր օգտագործած աղբյուրները ձևափոխում է ըստ իր
գիտական հայացքների, փոխում է նրանց շարադրանքը, այն համապա-
տասխանեցնելով իր աշխատության առանձնահատկություններին, որը
կազմված է հարցերի ու պատասխանների ձևով (նկատի ունի *Գիրք Յարց-
մանցը* - Է. Ս.): Հաճախ աղբյուրի որևէ ամբողջական հատված Գրիգորը
բաժանում է մի քանի կետերի, շարահյուսում այլ աղբյուրների տվյալնե-
րին և այլն»²⁵: Ասվածին կարող ենք հավելել նաև այն, որ Տաթևացին, Հո-
բի գրքի բոլոր մեկնություններն իրար կապելով, ստեղծել է յուրօրինակ մի
գրվածք, որը հասու էր իր ժամանակաշրջանի անհատին: Բազում են այն
օրինակները, որոնցում երևում են Տաթևացու ինքնուրույնությունը, մտքի
հստակ արտահայտումը, շարադրման պարզությունը (իր բարդությամբ
հանդերձ), նրա համակողմանի իրազեկությունը: Իր միտքը բացատրելու
համար լուծմունքում հաճախ օգտագործում է ինքնաստեղծ բառեր (օրի-
նակ՝ *աւղընթաց*²⁶, *աւղապատիր*²⁷), բառերի բացատրության համար օգ-
տագործում է նոր հոմանիշներ (օրինակ՝ *ստորմակերպ*²⁸ բառին Տաթևա-
ցին նշում է ևս մեկ հոմանիշ, որը որպես հոմանիշ առկա չէ բառարաննե-
րում. «զգեստ ստորմակերպ, որ է *դեղձան*») և այլն: Ունենալով մանկա-
վարժական և գիտական միտք՝ ջանք չի խնայել, որ իր սաներն ամենայն
մանրամասնությամբ ուսանեն Հոբի համբերության և քաջասրտության
մասին:

²⁵ Լ. Խաչիկյան, Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», խմբագրությամբ՝ Լ. Տեր-
Պետրոսյանի, Եր., 1992, էջ 212:

²⁶ ՄՍ, ձեռ. 1115, ք. 117ա:

²⁷ Նույն տեղում, ք. 106 բ:

²⁸ Նույն տեղում, ք. 97 բ: Հայկազեան բառգիրքը նշում է. «որպէս ստորմիջ խորա-
միտ, մքին, խառնակ կամ պէսպիսակ, բազմագունի», «Նոր բառգիրք հայկազեան լե-
զուի», հտ. Բ, էջ 751: Իսկ Համան Արևելցին լրացնում է. «ստորմակերպ, որ ի թագաւո-
րաց տունս հազիւ գտանի» (ՄՍ, ձեռ. 1007, ք. 165 ա):

Տաթևացու խնդրո առարկա գրվածքում մի տեսակ խտացված է յուրաքանչյուր աստվածաբանական, դավանաբանական միտք, որի բազմակողմանի բացատրությունները (ինչպես ինքն է երբեմն նշում երկում) հարկ է լինում փնտրել *Չարցմանցում* կամ *Քարոզգրքերում*։ «Եւ գտցես զայս ի Չարցմանց յերորդ հատորն, ժԹ համարին»²⁹, «Վասն սգոյ տես ի Չարցմունք ժ հատորն, ի Դ համարն»³⁰ կամ «Ի Քարոզն տես»³¹ և այլն։

Իսիքիոս Երուսաղեմացու Չոբի մեկնությունն ինքնատիպ է իր ոճով, մտքի շարադրմամբ, աստվածաբանական լուծումներով։ Թե՛ Իսիքիոսը, թե՛ Տաթևացին, ելնելով Չոբի գրքի ընձեռած հնարավորություններից, հաճախ են շոշափում աստվածաբանական-դավանաբանական հարցեր։ Երկուսն էլ անդրադառնում են Քրիստոսի աստվածությանը, Սուրբ Կույսից մարմնանալուն, աստվածային նախախնամությանը։ Քանի որ մեզ է հասել Իսիքիոսի ոչ ամբողջական մեկնությունը, բնականաբար դավանաբանական անդրադարձներն ավելի քիչ են Իսիքիոսի երկում, որովհետև թե՛ Տաթևացին, թե՛ Վանական Վարդապետը և մյուսները դավանաբանական խնդիրներին հատկապես անդրադարձել են Չոբ ԼԸ-ԼԹ գլուխները մեկնելիս, որը պայմանականորեն վերնագրվում է *Ո՞վ է դա՞* («Ո՞վ է դա՞ որ թաքուցանէ յինէն զխորհուրդս» բառերով սկսվում է Աստծո խոսքը Չոբի հետ (Յոբ. ԼԸ 2)), որը Չոբի գրքի կիզակետն է, որովհետև գործող անձերի բոլոր հարցերին, կասկածներին, թյուրըմբռումներին Աստված է տալիս պատասխան։

Իսիքիոսի և Տաթևացու մեկնություններն իրարից էականորեն տարբերվում են մեկնության ոճով և նպատակով։ Տաթևացու նպատակն է հնարավորինս շատ տեղեկություններ հաղորդել իր լսարանին, այդ պատճառով էլ նրա լուծումներում, աստվածաբանական հարցերից զատ, կարելի է տեղեկություններ գտնել թե՛ փիլիսոփայությունից, թե՛ դավանաբանությունից, թե՛ քրիստոնեական կենցաղից, բնագիտությունից, աշխարհագրությունից և այլն։ Քանի որ *Գիրք պատճառաց*-ում Չոբի գրքի Իսիքիոսի մեկնության *պատճառ* է համարվում մեզ հայտնի մեկնության սկիզբը (134-141 համարները՝ ըստ տպագրի), ապա կարելի է ասել, որ Իսիքիոսի մեկնության նպատակը փորձությունների մեջ համբերություն սովորեցնելն է՝ օրինակ ունենալով Չոբի համբերությունը («քանզի համբերութիւնն կարէ փրկել միայն, կատարել զփութալին, որով զարդարութիւն անձին և խորհրդոց ուղղեսցուք»), ուսուցանել աղոթքի զորությամբ մարտնչել ու հաղթել, քրիստոնեավայել կենցաղ և պահվածք ունենալ։ Սա նշմարվում է նաև հետագա գլուխների մեկնության մեջ, որտեղ հիմնականում շեշտադրվում են քրիստոնեական կենցաղավարությունը, առաքինասեր բարքով ապրելը և համբերելը (օրինակ՝ «Քանզի նա վասն համբերութեանն պսակաց և երանութեանց արժանի էր»³², «Մերկացեալ ի մեծութենէն՝ ևս առաւել պայծառացոյց զիւր արդարութիւնն ի ձեռն համբերութեանն»³³, «Մեծ և բարձր

²⁹ ՄՄ, ձեռ. 1115, ք. 10 ք։

³⁰ ՄՄ, ձեռ. 1115, ք. 12 ա։

³¹ Նույն տեղում։

³² Նույն տեղում, էջ 248-249։

³³ Նույն տեղում, էջ 250։

պարհսպ ինձ շնորհեաց զհամբերութիւն, զորոյ զամբողջութիւնն ոչ կարեն քակել թշնամիքն և ոչ բազում մեքենայիւք կործանել»³⁴):

Եթե Իսիքիոսը մեկնության մեջ սկզբում բերում է նախ աստվածաշնչյան համարը, հետո՝ մեկնում, ապա Տաթևացին իր լուծմունքում միշտ չէ, որ աստվածաշնչյան համարները գրում է սկզբում, և լուծմունքի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ բացի աստվածաշնչյան համարներից՝ տեղ են գտնել նաև այլ մեկնիչների կողմից օգտագործված բառաբացատրությունները, որոնք ևս մեկնվում են: Տաթևացու մտքի ճկունության և գիտական հզոր ներուժի շնորհիվ դրանք չեն խանգարում լուծմունքի կուռ կառուցվածքին, մեկնվող բառերը կամ բառակապակցությունները շատ հաճախ կամրջի դեր են կատարում, կապում նախորդ և հաջորդ համարները: Տաթևացու լուծմունքի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ աստվածաբանական մեկնաբանություններին զուգահեռ շատ հաճախ տրվում են նաև փիլիսոփայական բացատրություններ:

Այսպիսով, հայ միջնադարյան մատենագիր Գրիգոր Տաթևացու՝ Յոթի գրքի լուծմունքն իր ուրույն և յուրահատուկ տեղն ունի Յոթի գրքի մեկնությունների կողքին: Իհարկե նա ծանոթ էր Իսիքիոս Երուսաղեմացու աշխատությանը, օգտագործել է նրա երկը ուղղակի և միջնորդավորված ձևերով, սակայն որպես մեծ աստվածաբան, օգտվելով իր նախորդների թողած ժառանգությունից, ամբողջացրել և յուրահատուկ ոճով ի մի է բերել Յոթի գրքի լուծմունք-մեկնությունը՝ այն ի սպաս դնելով ժամանակաշրջանի դպրոցներում հոգևոր դասի ուսուցմանը: Այս աշխատությունը այսօր ևս արդիական է և մեծապես նպաստում է Աստվածաշնչի Յոթի գիրքն ընկալելու:

Բանալի բառեր – *Յոթի գիրքը, Իսիքիոս Երուսաղեմացի, Գրիգոր Տաթևացի, Վանական Վարդապետ*

ЭЛЯ САРИБЕКЯН – *Соотношение между толкованиями Исихиоса Иерусалимского и Григора Татеваци книги Иова.* – В статье анализируется толкование книги Иова, осуществлённое богословом, философом, писателем, летописцем и миниатюристом XIV-XV вв. Григором Татеваци. Первым из армянских книжников к этой ветхозаветной книге обратился Степанос Сюнеци (VIII в.), от комментариев которого до нас дошли лишь отрывки. Напротив, трактовка Ванакана Вардапета (XII в.) сохранилась полностью и примечательна тем, что позволяет познакомиться с толкованиями книги Иова, оставленными Исихиосом Иерусалимским, Ефремом Сирином, Степаносом Сюнеци, Давидом Кобайреци. В статье рассмотрено прямое и косвенное влияние, оказанное толкованием Исихиоса Иерусалимского на толкование Григора Татеваци; сопоставляются цитаты, отмечается своеобразие и индивидуальные особенности названных авторов.

Ключевые слова: *книга Иова, Исихиос Иерусалимский, Григор Татеваци, Ванакан Вардапет*

³⁴ Նույն տեղում, էջ 257:

ELYA SARIBEKYAN – *Correlation of the Book of Job by Grigor Tatevatsi and Isychios of Jerusalem.* – Current article is devoted to the *interpretation of the Book of Job* by Grigor Tatevatsi – an Armenian theologian, philosopher of XIV-XV centuries. The influence of the *Commentary of the Book of Job* by Isychios of Jerusalem (is known only thanks to Armenian translation) on the homonymous work of Tatevatsi is examined with the textual examples. Grigor Tatevatsi had composed both in symbolic-allegorical and literal-verbal methods. He had widely used the theological extensive literary heritage of the previous authors, but, at the same time, had created his substantive style, using philosophical and theological terms and explanations.

Key Words: Book of Job, Isychios of Jerusalem, Grigor Tatevatsi, cause, Vanakan Vardapet

**ԹԱԼԻՆԻ ՆՈՐԱՅԱՅՏ ՎԻՄԱԳԻՐԸ ԵՎ ՀԱԶԱՐԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Բագրատունյաց թագավորության արքունական գործակալությունների և դրանք ղեկավարող իշխանավորների մասին մատենագրական աղբյուրներից քիչ բան է հայտնի: Պակասը մասամբ լրացվում է վիմագիր հիշատակությունների շնորհիվ՝ «Հայոց մարզպան»¹, «Հայոց տանուտեր»², «Հայոց ասպետ»³... Թվարկվածների շարքին է դասվում նաև Թալին քաղաքի VII դ. Ս. Կաթողիկե եկեղեցու նորահայտ արձանագրությունը⁴:

Ավերվածությունից իր փառահեղությունը չկորցրած հոյակերտ տաճարի հյուսիսային արտաքին պատի արևմտյան կողմում երկու տողով արձանագրված է հետևյալը.



¹ «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Եր., 1966, էջ 44, 46, 48, 49: Հայոց մարզպանը արքունի կառավարիչն էր, ներկայիս ըմբռնմամբ՝ երկրի վարչապետը: Ժամանակի պատմիչ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը հազարապետի և մարզպանի պաշտոնները նույնացնում է, երբ խոսում է Արշակունյաց թագավորության անկումից հետո երկրի կառավարիչների մասին (տե՛ս **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ**, Տիեզերական պատմություն, թարգմ., առաջ. և ծանոթ. Վ. Հ. Վարդանյանի, Եր., 2000, էջ 128, 131): Այդ, հազարապետը հավասարազոր է մարզպանի-վարչապետի, երբ հանդես է գալիս «մեծ» մակդիրի հետ միասին՝ «մեծ հազարապետ» (տե՛ս **Հ. Մանուկյան**, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Եր., 1934, էջ 71):

² Տե՛ս «Վիմական տարեգիր», ցուցակ ժողովածոյ արձանագրութանց հայոց, կազմեաց Կ. Կոստանեանց, Ս.Պետերբուրգ, 1913, էջ 10-11, նաև՝ **Օրբելի И.** Надписи Мрена // «Հայագիտական հետազոտություններ», Եր., 1974, էջ 35: Հայոց տանուտերը կարգավորում էր վարչական, իրավական և այլ հարաբերությունները կենտրոնի ու համայնքների միջև: «Տանուտերութեանն» անդրադարձել են **Հ. Օրբելին** (տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. I, էջ 37), **Հ. Բարթիկյանը** (տե՛ս «Эникион» в Византии и столице армянских Багратидов Ани в эпоху византийского владычества (1045-1064 гг.) // ՊԲՀ, 1968, № 2, էջ 125-126), **Ս. Ավագյանը** (տե՛ս «Տանուտրութիւն» տերմինը Անիի XI դ. արձանագրության մեջ, ՊԲՀ, 1971, № 2, էջ 175-189), **Ռ. Մաթևոսյանը** (տե՛ս «Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը», Եր., 1990, էջ 180-182):

³ Տե՛ս **Ա. Գ. Մանուչարյան**, Նորահայտ հիշատակություն «Հայոց ասպետ» վիմագրությամբ, ԵՊՀ ստվածաբանության ֆ-կ, «Տարեգիրք», Բ, Եր., 2007, էջ 157-161: Հայոց ասպետը արքայի թագադիրն է: Բագրատունյաց թագավորությունում այդ պաշտոնը կատարել են Պահլավունի իշխանները (Վասակ Հոլում և Գրիգոր Մագիստրոս):

⁴ Արձանագրությունն առաջին անգամ տեսել ենք վիմագրագետ Գ. Սարգսյանի հնագիտական օրագրում:

✦ ԵՍՔՈՒՐԴ-ՅԱԶԱՐԱ
ՊԵՋԱՇՈՒՄԻՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՅՈՒՄՆԱԿ

✦ ԵՍՔՈՒՐԴ, ՅԱԶԱՐԱ/ՊԵՋ

ԱՇՈՏԻ՝ ՇՆԱՆՆԵՐԻ, Ի ԱՂՆԻՄԱՅ:

Ոչ դասական բոլորածն երկաթագրով, բայց X դ. բնորոշ տառածնե-
րով փորագրված այս անթվագիր արձանագրության ժամանակը որոշվում
է Աշոտ Շահանշահի գահակալության տարիներով: Հետաքրքրական է, որ
Շահանշահ տիտղոսը համառոտագրված է վիմագրերում գրեթե չհանդի-
պող ձևով, երբ փորագրվել է միայն բառի առաջին տառը, այն էլ առանց
պատիվ-հորիզոնական գծիկի կամ համապատասխան վերջակետանման
նշանների, թեև Շ-ից ավելի առաջ նշմարվում է տարբերակիչ կետ: Աշոտ
Շահանշահը վիմագրում վկայված է «**ի Անայ**», հետևապես նա Ռդորմած
հորջորջվող, գթասիրտ արքան է, ով գահակալել է 953-977 թվականնե-
րին⁵:

Ինչ վերաբերում է Քուրդ հազարապետին, ապա այդ անունով իշխան
(Քուրթ ձևով), ըստ Հ. Աճառյանի, հիշատակվում է 895 թվականին⁶: Քուրթը
մեկն է Ամատունի այն հինգ քաջ և անվանի եղբայրներից, որոնք, ինչպես
Շապուհ Բագրատունի պատմիչն է հայտնում, Սմբատ Ա արքայի (890-914)
հրամանով դավաճանության համար պատժում են Վասպուրականի գահե-
րեց Աբունրվան Արծրունի իշխանին և նահանգի տեղապահությունը հանձ-
նում Դերենի որդի Գագիկին⁷:

Չի բացառվում, որ այս ծառայության դիմաց Սմբատ թագավորն Ամա-
տունիներին շնորհել է հազարապետության պաշտոնը, ինչը նրանց էր
վստահված Արշակունիների վերջալույսին:

Պատմիչի տեղեկությունից իմանում ենք, որ ոչ բոլոր Ամատունիներն
են 798 թ. արաբական հալածանքներից խույս տալու նպատակով այդ
տոհմի ներկայացուցիչ Համան իշխանի և նրա հոր՝ Շապուհի գլխավորու-

⁵ Բնագրի երկրորդ տողում առկա են սխալներ, ինչը հաճախ ենք հանդիպում վի-
մագրերում: Իրականում պետք է փորագրվեր. «...ՀԱԶԱՐԱ/ՊԵՋ ԱՇՈՏՈՅ ՇՆԱՆՆԵՐԻ
ՊԵՋԱՇՈՒՄԻՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՅՈՒՄՆԱԿ»:

⁶ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Եր., 1962, էջ 224:

⁷ Տե՛ս «Պատմութիւն Շապուհ Բագրատունւոյ», ի լոյս ածին Գ. Տեր-Մկրտչեան և
Մեսրոպ Եպիսկոպոս, Էջմիածին, 1921, էջ 71-76: Մեկ այլ տեղ պատմիչն այդ եղբայր-
ներին կոչում է Արծրունի (էջ 69)՝ հավանաբար ակնարկելով նրանց վասպուրականյան
ծագումը՝ Արտագ գավառից, ուր նրանք իշխում էին Արշակունիների օրոք մինչև Այրա-
րատ տեղափոխվելը: Ամատունիներին էր պատկանում նաև Վասպուրական աշխարհի
Անձախիձոր գավառի Կոտորոց նշանավոր ամրոցը, որն աղբյուրների վկայությամբ
գտնվում էր Կոտուր գետի ափին՝ Խոյ քաղաքից արևմուտք (տե՛ս Թ. Խ. Հակոբյան,
Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տե-
ղանունների բառարան, հ. 3, Եր., 1991, էջ 227):

թամբ 12.000 հայ շինականների հետ միասին հեռացել Բյուզանդական կայսրության սահմաններում գտնվող առափնյա Խաղտյաց երկրամասը, ինչպես ընդունված է կարծել⁸:

Թալինի այս նորահայտ վիճագրում Քուրդը հիշատակված է «հազարապետ Աշոտի՝ Շահանշահի», որը նույնն է՝ ինչ «հազարապետ արքունի»: Քանի որ Բագրատունիների օրոք ուղղակի վկայություններ չունենք հազարապետի գործառույթների վերաբերյալ⁹, ապա հարկ է հիշել Արշակունյաց ժամանակներում այդ պաշտոնը վարող նախարարների պարտականությունները: Հազարապետությունը «երկրի տնտեսական-հարկային վարչությունն էր, որը միավորում էր իր մեջ նաև հասարակական աշխատանքների, այսինքն՝ պետական պարիսկների տնօրինությունը: Հազարապետն ուներ պաշտոնյաների («համարակար»-հարկահավաքների) մի ամբողջ խումբ: Վերջիններս գյուղական համայնքների ավագների՝ դեհկանների միջոցով շինականներից գանձում էին պետական հարկերը: Հազարապետին էին ենթարկվում «շահապները»՝ քաղաքների թագավորական տնտեսները, որոնք պատասխանատու էին քաղաքային բնակիչներից ու արհեստավորներից հարկեր գանձելու համար: Պետական պարիսկների կատարման հսկողությունը հանձնարարված էր հազարապետին ենթակա հատուկ պաշտոնյային՝ «գարիկպետին», որը գյուղական համայնքներից անհրաժեշտ քանակությամբ բանվորական ուժ էր հավաքում համապատասխան նշանակություն ունեցող աշխատանքների՝ քաղաքների ամրությունների կառուցման, ջրանցքների անցկացման, անտառտնկումների և ճանապարհների, կամուրջների կառուցման համար և այլն: Հազարապետի գործակալությունը Ամատունի նախարարական տոհմի ժառանգական արտոնությունն էր»¹⁰: Պետք է նկատել, որ մինչև Ամատունիներին անցնելը հազարապետի պաշտոնը, ինչպես Փավստոս Բուզանդին է վկայակոչում Հ. Մանանդյանը, եղել է Գնունիների մենաշնորհը¹¹:

«Հազարապետն էր սահմանում պետական հարկերն ու հսկում նրանց գանձմանը, նա էր իրականացնում նաև հասարակական հարկադիր աշխատանքները»¹²:

Հ. Մանանդյանի պարզաբանմամբ՝ Նոր Կտակարանի հայերեն թարգմանությունում «հազարապետ» բառը հաճախ համապատասխանում է *oikonomos* «տնօրեն, տնտես» ձևին (տե՛ս Ա. Պետ. Դ, 10, Ա. Կորնթ. Դ, 1-2)¹³:

⁸ Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 1, Եր., 1974, էջ 277:

⁹ Մ. Օրմանյանը հազարապետ է կարծում Վեստ Սարգսին (տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, ս. էջմիածին, 2001, էջ 1428), բայց ժամանակի պատմիչ Լաստիվերտցին նրան սոսկ հոգաբարձու, խնամակալ է կոչում (տե՛ս «Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտոյ», աշխ.՝ Կ. Յուզբաշյանի, Եր., 1963, էջ 57):

¹⁰ «Հայ ժողովրդի պատմություն», ԳԱ հրատ., հ. II, Եր., 1984, էջ 140:

¹¹ Տե՛ս Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 69: Գնունիները հայոց հազարապետ են հիշատակվում Արշակ Բ-ի օրոք (345-368): Այն բանից հետո, երբ Գնունիները Մեծ Հայքի 387 թ. բաժանումից շատ չանցած հեռացել են բյուզանդական մաս (տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 3, Եր., 1977, էջ 141), հազարապետության գործակալությունը վստահվել է Ամատունիներին:

¹² Կ. Ղաֆադարյան, էջեր հայոց միջնադարյան մշակույթի ու պատմության, Եր., 2007, էջ 111:

¹³ Տե՛ս Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 70:

Հովհաննավանքի պարսպին ժամանակին արձանագրված Նանա Ջաքարյան-Բագրատունու XII դ. վերջի շինարարական վկայագրում և Հրագրանի տարածաշրջանի Արտավազ վանքի վիմագրում **մեծ հազարապետ**¹⁴ հիշատակությունն արտահայտում է մեծ սպարապետ, մեծ զորապետ իմաստ, քանի որ վերաբերում է Հայոց և Վրաց ամիրսպասալար Սարգիս Ջաքարյանին:

Թալինի նորահայտ արձանագրության պարագայում առավել մոտ են «հազարապետ» բառի Ստ. Մալխասյանցի և Հ. Աճառյանի մեկնությունները: Առաջինի դիտարկմամբ. «Հազարապետը արքունական տան ելևնուտքը կառավարողն է, տնտեսը»¹⁵, իսկ մեծանուն լեզվաբանի ստուգաբանությամբ՝ «Հազարապետը տնտեսն է, թագավորական տան մատակարարը, հարկային և շինարարական գործերի վերակացուն կամ գլխավորը»¹⁶:

Նկատելի է, որ հազարապետի պաշտոնը եղել է ոչ միայն Բագրատունյաց կենտրոնական, այլև Հայաստանի նահանգային մանր թագավորությունների արքունիքներում: Դրա վկայությունը Սիսիանի Սյունի վանքի (VI-VII դդ.) «Վարագո Սինեաց հազարապետ»¹⁷ հիշատակությունն է: Անշուշտ, արձանագրությունը Սյունյաց թագավորության շրջանի է (970/87-1170). նույն վանքում 997 թ. հիշատակվում է. «Սմբատ՝ որդի Աշոտ՝ Սինեաց իշխանաց իշխանի»¹⁸:

Հարկ է նշել, որ Հայաստանում «հազարապետ» եզրույթի գործածությանը աղբյուրներում հանդիպում ենք մինչև XIX դ. կեսը, բայց ուշ միջնադարից սկսած՝ արդեն երկակի իմաստով: Առաջինը, որն ավելի կենսունակ գտնվեց, կիրառվել է իր նախնական՝ «կառավարիչ, տնտես» նշանակությամբ, ինչպես, օրինակ՝ Բռնակոթի Ս. Գրիգոր եկեղեցու մուտքի բարավորի 1848 թ. շինարարական արձանագրությունում. «Ես՝ Սինեաց հազարապետ Մելիք Թանկի Մելիք-Կարապետեան, շինեցի գավիթս և կաթողիկես»¹⁹ և Մայր աթոռ Ս. Էջմիածնում Ամենայն հայոց կաթողիկոս, Հայրենյաց պաշտպան Ներսես Ե Աշտարակեցու գահակալության օրոք (1843-1857) հազարապետի պաշտոնով ծառայողի առկայության փաստմամբ²⁰:

Երկրորդ իմաստով **հազարապետ**ն ուշ միջնադարում գործածվել է զինվորական համապատասխան կոչման պարագայում, ինչը տրամաբա-

¹⁴ Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Եր., 1948, էջ 112-113, Գ. Սարգսյան, Թեղենյաց վանքի պեղումները և վիմագրական նորություններ, զեկուցումների հիմնադրույթներ, ԳԱ ՀԱԻ, 1987, էջ 70: Մեծ հազարապետը վաղ միջնադարում ունեցել է «անհամեմատ ավելի բարձր դիրք և ավելի ընդարձակ իշխանություն: Մեծ հազարապետը Սասանյան Պարսկաստանի մեծ վեզիրն էր և ամենաբարձր պաշտոնյան. նա վարում էր պետական բոլոր գործերը, թե՛ ներքին, թե՛ արտաքին» (Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 70-71): Մեծ հազարապետը, ինչպես սկզբում ասել ենք, համապատասխանել է այսօրվա վարչապետին:

¹⁵ «Հայերեն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հ. III, Եր., 1944, էջ 9:

¹⁶ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. III, Եր., 1977, էջ 6:

¹⁷ «Դիվան հայ վիմագրության», պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Ս. Բարխուդարյան, Եր., 1960, էջ 88:

¹⁸ Նույն տեղում, էջ 89:

¹⁹ Նույն տեղում, էջ 126: Պետք է ենթադրել, որ Սյունյաց հազարապետ Մելիք Թանկի Մելիք-Կարապետյանը զբաղվել է Ջանգեզուրի մահալի, ապա օկրուգի պետական տուրքերի գանձման և շինարարական գործերի վերակացությամբ:

²⁰ Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Գ, Ս. Էջմիածին, 2001, էջ 4442:

նորեն մակաբերվել է **տասնապետ, հիսնապետ, հարյուրապետ, զնդապետ** աստիճանաշարքի ազդեցությամբ:

Դոնի Ռոստովի (Նոր Նախիջևանի) Ս. Նիկողայոս եկեղեցուն անփոփոխաբերական կայսերական բանակի սպա Յովհաննես Աբրահամյանի (Իվան Աբրամով) տապանաքարի²¹ և Մոլդովայի Գրիգորիոսով քաղաքի Իգնատիյան հայկական գերեզմանոցի 1800 թ. շիրմաքարի²² արձանագրություններից պարզվում է, որ հազարապետը համապատասխանել է **փոխզնդապետ (подполковник)** զինվորական աստիճանին:

Հազարապետը՝ որպես սպայական բարձր աստիճանի անվանում, կարճ կյանք է ունեցել, լիովին դուրս է եկել գործածությունից՝ իր տեղը զիջելով փոխզնդապետ բառի կիրառությանը:

Ինչպես տեսնում ենք, հազարապետն առավել կենսունակ ու գործածական մնացել է իր նախնական՝ տնտես, կառավարիչ, վերակացու իմաստով:

Վերադառնալով Քուրդ հազարապետի նորահայտ արձանագրությանը՝ ստենք, որ արքունական գործակալի այցելությունը Թալին և հիշատակությունը թողնելը, մեր կարծիքով, կապված է եղել մոտավորապես 970-973 թ. կործանիչ երկրաշարժից²³ տուժած, հնարավոր է հյուսիսային մասը վնասված, տեղի Ս. Կաթողիկե եկեղեցու վերականգնմանը արքայից արքա Աշոտ Գ Ողորմածի հանձնարարականով սատարելու հետ: Ըստ այդմ, Քուրդ հազարապետի անթվակիր արձանագրության ժամանակն ավելի է որոշակիանում՝ սահմանափակվելով 970-977 թվականների հատվածում:

Բանալի բառեր – Թալին, Քուրդ հազարապետ, եկեղեցի, վիմագիր, վերձանություն, թագավոր, պատ, գործառույթ

АШОТ МАНУЧАРЯН – Новонайденная лапидарная надпись из Талина и исторические функции должности тысяцкого. – На северной стене церкви Катогики (VII в.) в г. Талине вырезана надпись: «Я Курд, тысяцкий Ашота Шаханшаха из Ани». Дата отсутствует, но надпись датируется годами царствования Ашота III Милосердного из династии Багратуни – 953–977. В средние века тысяцкий принадлежал к высшей знати и выполнял функции главного налогового надзирателя и эконома. В позднее средневековье это понятие недолгое время использовалось как воинское звание, приблизительно соответствовавшее подполковнику.

Тысяцкий Курд приехал в Талин по поручению царя. Приезд был связан с восстановлением церкви Катогики, северная часть которой была разрушена землетрясением в 970–973 г., что конкретизирует датировку надписи периодом с 970-го до 977 г.

²¹ Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ VIII, Ռուսաստանի Դաշնություն, աշխատասիրությամբ՝ Գր. Մ. Գրիգորյանի, Եր., 1999, էջ 145:

²² Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ VII, Ուկրաինա, Մոլդովա, կազմեց՝ Գր. Մ. Գրիգորյան, Եր., 1996, էջ 312:

²³ Տե՛ս Храм Звартноц: Причины и время разрушения. ԴԲՀ, 1984, С. Пирюзян, А. Матевосян, Л. Шахсуварян, № 3, էջ 189-194: Հեղինակները, խոսելով Չվարթնոցի տաճարի կործանման մասին, եզրակացնում են, որ դա տեղի է ունեցել «970-973 թթ. ժամանակահատվածում Արագածի հարավային փեշերում՝ Թալին-Արուճ բնակավայրերի շրջանում (ավելի մոտ առաջինին)... 8 բալ ուժգնությամբ երկրաշարժից» (նույն տեղում, էջ 193-194):

Ключевые слова: *Талин, Курд тысяцкий, церковь, лапидарная надпись, расшифровка, царь, стена, функция*

ASHOT MANUCHARYAN – *Newly Brought to Life Inscription of Talin and the Historical Functions of the Post of Major.* – On the North wall of VII century church saint Katoghike, which is in Talin, the following inscription is engraved: “I am a Kurd, the major of Ashot Shahanshah of Ani”. There is no date on the inscription, though it dates from the enthronement years of Bagratuni king Ashot the Merciful that is from 953 to 977. In the Middle Ages the Major was a palatial agent, who was the chief tax inspector and economist of the country. Late in the Middle Ages the name Major was for a short time also used as a military rank corresponding to lieutenant-colonel.

Kurd major's visit to Talin was connected with the king's commission to support the reconstruction of the North part of saint Katoghike church, which suffered from the earthquake in 970/3. This fact makes the time of engraving the inscription more definite which is 970-977.

Key words: *Talin, Kurd major, church, lapidary inscription, deciphering, king, wall, newly brought to life, function*

ԹԱԳՈՒՅԻՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒՄԸ ՅԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

ՎԻԿՏՈՐՅԱ ՎԱՍԻԼՅԱՆ

Հելլենիստական դարաշրջանի Հայաստանում թագավորների հետ միասին թագուհիները ևս ունեցել են աստվածային պաշտամունք ու պատիվներ, որի արմատները սերում են դեռևս Երվանդյան, Սելևկյան, Պտղոմեոսյան արքայատոներից:

Հելլենիստական աշխարհում, տիրակալի աստվածային պաշտամունքից զատ, տարածված էր նաև նրա «բախտի, ճակատագրի» պաշտամունքը: Այսպես՝ Տիգրան Բ-ի աստվածացված կերպարի դարձերեսին ներկայացվում էր երկրի հովանավոր «Բախտի, ճակատագրի» Տյուխե (Խոջի) դիցուհին¹:

Հելլենիստական քաղաքները՝ որպես իրենց պաշտպան և իշխանության խորհրդանիշ, հաճախ էին դիմում աստվածացված միապետի կերպարին, որպեսզի արժանանան արքայական բարեգթության և խնամակալության, կամ էլ շնորհակալություն հայտնեն՝ այդ կերպ նրան պատիվ և երկրպագություն շնորհելով:

1. Քաղաքամայր դիցուհու կերպարը անտիկ Հայաստանի պատկերագրության մեջ

Հայոց թագուհիների պատկերագրության համար նախատիպ ծառայեց մայր աստվածուհի Անահիտի և երկրի պահապան դիցուհիների պատկերագրությունը: Այն մեծապես ազդվեց նաև հռոմեական և հելլենիստական թագուհիների պատկերագրման առանձնահատկություններից: Թագավորական իշխանության հզորությունն ու ուժը շեշտելու համար Հայոց արքաները հաճախ էին անդրադառնում քաղաքամայր պահապան դիցուհու կերպարին: Նման ավանդույթը լայնորեն տարածված էր Արևելքում, որը դրսևորվեց նաև Հայաստանում: Օրինակ՝ արժաթյա, պղնձյա դրամի դիմերեսին աշտարակաձև եռամաս թագով պատկերվում է Արտաշատի քաղաքամայր պահապան դիցուհին (հավանաբար՝ Քաղաքամայր Տյուխեն): Նրա կիսադեմը նայում է դեպի աջ, իսկ դարձերեսին ներկայացված է հաղթանակի թևավոր աստվածուհի Վիկտորյան²: Դրամի վրա կան հունարեն արձանագրություններ (նկ. 1): Նշված օրինակում «քաղաքամայր

¹ Խոջի-ի պաշտամունքը ծաղկեց հռոմեական դարաշրջանում՝ մասնավորապես Օգոստոս կայսեր կառավարման տարիներից սկսած, և շարունակվեց մինչև Կոստանդիանոսի կողմից քրիստոնեության ընդունումը:

² Արքաներին և կայսրերին հաղթանակ բերող հռոմեական Վիկտորյա (հմմտ.՝ հունական Նիկե) աստվածուհին հաճախ էր ներկայացվում արքաների դրամների դարձերեսին՝ ձեռքին դափնեպսակ, որը նա տալիս էր հաղթողին:

դիցուհու» կերպարը բավականին հանդիսավոր է և էթնիկ. ուղղահայաց երկար քթով, լայն բացված աչքով և կիսաբաց շրթունքներով այն նմանվում է հունական դրամների պատկերագրին, քանի որ հատվել է հենց հունական գաղութում: Ներկայացված է մազերի պարուրածն սանրվածքով, որը հանգույցով ամրացված է ծոծրակին և մազերին փաթաթված շորի զուգահեռ ծալքավորմամբ թափվում է ուսերին, ինչը նրան հաղորդում է հանդիսավոր և փառահեղ կեցվածք, իսկ պարանոցին կրում է շքեղ կրծքազարդ: Այն իր տիպաբանական և պատկերագրական հատկանիշներով հիշեցնում է «Ոսկեմայր» Անահիտ դիցուհուն, որը ողջ երկրի հովանավոր և «մայրաքաղաքի» պահապան դիցուհին էր³:

Հելլենիստական Արտաշատ մայրաքաղաքից գտնված և ՀՊԹ-ում⁴ պահվող պղնձե մանրադրամի⁵ դիմերեսին ներկայացված է Արտաշատ քաղաքի «բախտի դիցուհի» Տյուխեի գլխաքանդակը՝ զարդարված պարսպածն եռամաս թագով, կիսադեմով դեպի աջ, իսկ դարձերեսին՝ Վիկտորյա-Նիկե հաղթանակի աստվածուհին՝ դեպի ձախ քայլվածքով, առաջ պարզած աջ ձեռքում՝ հաղթանակի պսակը, իսկ ձախում՝ կրծքի մոտ, բռնել է դափնու ճյուղ⁶: Պահպանվել են հունարեն արձանագրությունները՝ Մեծ Հայքի Արտաշատ մայրաքաղաքի անունով և թողարկման տարեթվով: Դիցուհու պատկերագրության մեջ հատկանշական են հունական դիմագծերը, որը կատարող վարպետների՝ հելլենիստական ավանդույթներով տարվածության արդյունք է: Մազերի ոլորուն հերահարդարանքը ներկայացնում էր Հունաստանի պահապան դիցուհիների պատկերագրությունը, որը հավաքվում էր ծոծրակի շուրջը և ներքև էր թափվում ծալքերով: Այս տիպը սկսեց կիրառվել Տիգրան Մեծի դրամների դիցուհու պատկերներում: Պարանոցը զարդարում է շքեղ կրծքազարդը, որը համատեղվում է մազերի շուրջ հավաքված քողի մանրամասն ծալազարդարանքի հետ: Հարկ է նշել նաև, որ հագուստը փակում է դիցուհու պարանոցը, որը խոսում է նրա զբաղեցրած բարձր դիրքի մասին. երկրի պահապանի խորհրդանիշն է: Այն ծագումով առավել վաղ է, քան Հայաստանում հանդիպող մյուս «քաղաքամայր դիցուհիները»: Համանման մյուս դրամը թողարկվել է Ք. ա. 181-ին, որը գտնվել է մայրաքաղաք Արտաշատի ավերակները պեղելիս (նկ. 2): Էռնստ Բաբելոնի կարծիքով՝ այս դրամի օրինակով Արտաշատը ընդգրկվեց դրամահատական քաղաքների շարքը:

Նշված դրամները, մեր կարծիքով, ծոծրակ են Արտաշատ մայրաքաղաքի պահապանին՝ ազգայնացված Տյուխե աստվածուհուն: Քաղաքի պահապան դիցուհին՝ պորտաքարի վրա նստած, սիրված պատկերատիպ էր հելլենիստական դրամների պատկերագրության մեջ: Դիցուհու գլխին դրված է քաղաքի պարիսպների աշտարակածն թագը, որը նմանվում է Սիրիայում դրոշմված Սելևկյան քաղաքների պահապան դիցուհիների կրած

³ Տես **Խ. Մուշեղյան**, Հայոց պատմության դրամագիտականը, Մաս Ա, Եր., 1997, էջ 28-29:

⁴ Տես «Armen'ie Tre'sors de l'Arme'nie ancienne des origines au IVe sie'cle», Paris, 1996, էջ 162:

⁵ Քաղկոս:

⁶ Տես **Չ. Պտուկեան**, Հայաստանի վերաբերեալ հռոմեական դրամներ և մեդալիոններ, Վիեննա, 1971, էջ 191-194:

խույրին: Հայտնի է, որ հելլենիստական դարաշրջանում Տյուխեն միախառնված կերպար էր, ուստի և Տիգրան Մեծի դրամների վրա նույնպես կարելի է հանդիպել վերջինիս կերպարին՝ որպես երկրի և թագավորական սերնդի պահապան աստվածություն: Տիգրան Մեծի դրամների պատկերագրության մեջ հատկապես տարածված էր դարձերեսի կենտրոնում ներկայացվող Անտիոքի քաղաքամայր դիցուհին՝ աշտարակած և թագը գլխին, բարձունքի վրա նստած՝ դեպի աջ շրջվածությամբ, ձեռքին արմավենու ճյուղ, իսկ ոտքերի տակով հոսում է Որոնտես (Եփրատ) գետը՝ դեպի աջ լողացող մարդու ներկամարմին կերպարանքով: Աջ կողմում արձանագրված է *ΒΑΣΙΛΕΩΣ*, ձախում՝ *ΤΙΓΡΑΝΟΥ*: Տիգրանը իր դրամների դարձերեսին դրոշմում էր Անտիոքի դիցուհու արձանի վերատպված կերպարը, իսկ հետագայում՝ աստվածուհու՝ ավանդական հայկական պատկերագրությամբ արձանը, որպես Ասորիքի նվաճող, կանգնեցնում Անտիոքիայի փոխարեն:

Դրա ապացույցն են Տիգրան Մեծի դրամները, որոնցում, ի տարբերություն սելևկյան և հռոմեական դրամների վրա պատկերված Անտիոքիայի կիսամերկ, նրբին շղարշով եզերված պատկերագրության, լայն, թանձր և երկար հագուստով դիցուհու կերպարն է: Այստեղ ներկայացված թագուհի-աստվածուհու կերպարը՝ իր չքնաղ դիմագծերով, մազերի ոլորած և հարդարմամբ և հերակապ հանգույցով, երկար պարանոցը պսակող մարգարտաշար մանյակով և եռամաս աշտարակած և թագով, մեզ հիշեցնում է հայոց թագուհիների և դիցուհիների պատկերագրությունը: Սակայն դրանցում շեշտված են գեղեցիկ էթնիկ դիմագծերն ու ավանդական պատկերագրական տիպը՝ ավելի հստակ, ճշգրիտ և առավել մշակված:

Նմանօրինակ պղնձե դրամների թողարկումն Արտաշատում կատարվել է նրա քաղաքային շուկայի ներքին պահանջով: Նույնպիսի պատկերագրի հանդիպում ենք Տիգրան Մեծի մյուս դրամների վրա՝ Դամասկոսի անձնավորմամբ քաղաքամայր դիցուհու կերպարում՝ պտղաբերության եղջյուրով: Դրանք հատվել են Անտիոքում, Դամասկոսում, Տիգրանակերտում, Դելֆիում, որոնց վրա հանդիպում ենք ոչ թե Անտիոքիայի, այլ «ազգայնացված» հայոց դիցուհի-թագուհու կերպարին:

2. «Հայուհիների» պատկերումը Տիգրան Մեծի դրամների վրա

Տիգրան Մեծի դրամների դարձերեսին հաճախ էր ներկայացվում վերոհիշյալ Անտիոքի պահապան դիցուհու կերպարը՝ ձեռքին արմավենի կամ դափնեպսակ, իսկ այլ տարբերակներում կարելի է հանդիպել ոսկուց սափոր, որը նա մեկնում է Սիրիային իշխող Տիգրանին: Եփրատ-Որոնտես գետը պատկերվում է ինչպես տղամարդու, այնպես էլ կնոջ կերպարանքով: Որպեսզի արժանանար գերված երկրների ժողովուրդների հարգանքին և ակնածանքին, Տիգրան Մեծն իր դրամների դարձերեսին դրոշմում էր այլ երկրների հովանավոր դիցուհիների պատկերները, որոնք արմավենու կամ դափնու ճյուղեր էին մեկնում հաղթող արքային: Հետագայում՝ աշխարհակալ տերություն ստեղծելուց հետո, դրանք փոխարինվեցին «քաղաքամայր դիցուհու» ավանդական պատկերագրությամբ՝ որպես նորաստեղծ տերության հովանավոր, պաշտպան և միահեծան աստվածուհի (նկ. 3):

Մեր կարծիքով՝ այդ էր պատճառը, որ Անտիոքիայի և «ազգայնացված Տյուխեի» անձնավորմամբ ներկայացված կանանց դիմաքանդակները տարբերվում էին Տիգրանի հատած դրամներից: Հատկանշական է, որ Ատրպետի ուսումնասիրած այս պատկերագրությամբ դրամները՝ մերկ դիցուհու կերպարով, համարվում են Աստղիկ դիցուհու՝ Հունաստանից բերված քանդակի վերատպություններ⁷: Նրա սրունքները ծածկված են թափանցիկ շղարշով, ներկայացված է գահին բազմած, սիրիականին բնորոշ արմավենու ճյուղի փոխարեն այժ ձեռքում բռնել է լեռնային արծիվ, իսկ ձախում՝ պտղաբերության եղջյուր: Այս կերպարին հետագայում հանդիպում ենք Արտաշես, Արշակ և Վաղարշակ արքաների դրամների պատկերագրության մեջ: Անահիտը դրամների վրա սովորաբար նայում է այժ, իսկ այս ենթադրյալ «Աստղիկը» դեպի ձախ. այս հատկանիշներով հավանաբար փորձում են շեշտել, որ պատկերվածները տարբեր դիցուհիներ են: Տիգրան Մեծը Հայաստան էր տեղափոխում տարբեր երկրներում պաշտամունքի արժանացող աստվածությունների, որի համար էլ ժողովրդի կողմից արժանացել էր «Աստվածասեր» մականվանը: Մեր կարծիքով՝ նա հատուկ էր ներկայանում տարբեր աստվածուհիներից հովանավորված, որպեսզի ամրացներ իր դիրքերը նվաճված երկրներում և դառնար առավել ժողովրդական և սիրված, ընդունվեր որպես «Արքաների արքա» և աստվածների զարմից ծնված:

Արտաշես I, Արշակ I, Արտավազդ II արքաների պատկերաքանդակներով դրամների դարձերեսին հաճախ ներկայացվում է Աթենաս-Քաղաքամայր դիցուհին՝ գահին նստած, որի այժ ձեռքում հաղթության հրեշտակ Վիկտորյան է: Նա դափնիով պսակում է դիցուհու գլուխը, իսկ ձախում բռնում առատության եղջյուրը: Ոսկեծին դիցուհու հագին բեհեզից հագուստ է, որի ծալքերը տարածվում են աթոռից ներքև, գահը պահում են հուշկապարիկները, իսկ դրամները կրում են «Աստվածասեր» մականությունը⁸:

3. Հայոց թագուհիների պատկերումը հելլենիստական Հայաստանում

Հելլենիստական Հայաստանի թագուհու պատկերագրական տիպը մենք կարող ենք վերակազմել ըստ մի քանի պահպանված դրամների, դրոշմների, հարթաքանդակների և մատենագրական վկայությունների: Թագուհիների պատկերներով պահպանված դրամների մեծ մասը վերագրվում է Էրատո թագուհուն, ինչը նույնպես վիճարկելի է, քանզի թագուհիների արտաքինի վերաբերյալ մեր ունեցած տեղեկությունները սուղ են:

Էրատոն⁹ եղել է Արտաշիսյան հարստության վերջին ներկայացուցիչը, Տիգրան III-ի դուստրն է և Տիգրան IV-ի քույրը¹⁰: Նա Մեծ Հայքի թագուհին էր, ծննդյան և մահվան թվերը անհայտ են, հայտնի չէ նաև նրա

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 204-205:

⁸ Տե՛ս **Ատրպետ**, Հայ թագաւորների դրամները, «Ազգագրական հանդես», XXIII գիրք, Թիֆլիս, 1912, № 2, էջ 27-67:

⁹ Հունարեն՝ սեր, անունը փոխառված է հունական երաժշտության համանուն մուսայից (մ. թ. VIII-V դդ., մ. թ. II - թ. հ. II դդ., մ. թ. VI - XII դդ.), տե՛ս **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Եր., 1945, էջ 295-298:

¹⁰ Տե՛ս «Հայուհիներ», հ. 1, Եր., 2011, էջ 23:

ծննդավայրը: Թագուհու կերպարը վերականգնված է ըստ Էրատոյի և Տիգրան IV-ի երկպատկեր արծաթյա դրամի, որի մի երեսին Տիգրան IV-ի, իսկ դարձերեսին քրոջ դիմապատկերն է՝ «Էրատո՝ թագուհի հայոց» մակագրությամբ: Ցավոք, Էրատոյի գահակալման մասին մեզ հասել են շատ քիչ տեղեկություններ, այն էլ՝ խիստ կցկտուր, և ամբողջությամբ չեն ներկայացնում թագուհու կերպարը:

Էրատոյի գահակալության շրջանն անչափ հակասական և բարդ էր Մեծ Հայքի Արտաշիսյան հարստության համար. մի կողմից՝ աշխարհակալ Հռոմ, մյուս կողմից՝ Պարթևստան: Հայոց գահակալներն ի դեմս Տիգրան III-ի, ապա նաև նրա որդու և դստեր՝ Էրատոյի և Տիգրան IV-ի, նպատակ ունեին զերծ պահել թագավորությունը վերահաս կործանումից: Սակայն մ. թ. ա. 1 թվականին հյուսիսի բարբարոսների դեմ մղած պայքարում սպանվում է Տիգրան IV արքան, իսկ Էրատոն հրաժարվում է գահից: Էրատոյի երկրորդ գահակալությունը տեղի է ունենում Ք. ծ. 6-12 թթ.: Այս անգամ նա գահակալում է միանձնյա: Սակայն այդ խառնակ ժամանակաշրջանում նրան այդպես էլ չի հաջողվում փրկել թագավորությունը, քանի որ Արտաշիսյան տոհմից արու ժառանգ չկար, և Էրատոն, փաստորեն, այս արքայատոհմի վերջին ներկայացուցիչն էր: Էրատոն հայոց հնագույն ժամանակների միակ տիրակալն է, որ գահ է բարձրացել երեք անգամ¹¹:

Ստորև ներկայացված դրամները վկայում են, որ Տիգրանը և Էրատոն համատեղ են կառավարել երկիրը (մ. թ. ա. մոտ 8 - մ. թ. 1 թթ.)¹²: Նրանք դեռևս իրենց կենդանության ժամանակ պաշտվել են որպես կենդանի աստվածներ և համեմատականներ ունեն Պտղոմեոսյան դինաստիայի ներկայացուցիչների հետ¹³:

10 պղնձյա դրամների դիմերեսին Էրատո թագուհին ներկայացված է կիսադեմով դեպի աջ, իր եղբայր և ամուսին Տիգրան IV-ի կողքին, հետին պլանում՝ հայկական ատամնավոր թագով, իսկ դրամների դարձերեսին ներկայացված է Արարատ լեռը¹⁴: Մեր կարծիքով, դրանք որոշ հատկանիշներով նմանվում են պտղոմեոսյանների պատկերագրությանը (նկ. 4):

Էրատո թագուհու դեմքը մեզ հայտնի է փարիզյան և վիեննական դրամներից՝ իր ամուսին Տիգրան IV-ի դիմապատկերի դարձերեսին. նա ներկայացված է Տիգրան Մեծի թագով, որը զարդարված է թագի վերևից երկու կողմերից կախված երկշար մարգարիտներով (նկ. 5): Այս երկու թագերը, սակայն, իրարից տարբերվում են. մեկը զարդարված է գոհարներով, մյուսը՝ աստղերով: Իրենց տեսակով և ծագմամբ դրանք նմանվում են արքայականներին: Ուսումնասիրողները որպես Էրատո են դիտել նաև Փարիզի մատենադարանում պահվող նարնջագույն հանքաքարի վրա դրոշմված խորաքանդակ-զարդաքանդակը՝ ի դեմս Բաբելոնի¹⁵, Լայարդի¹⁶,

¹¹ Տե՛ս «Հայուհիներ», հ. 1, էջ 23:

¹² Տե՛ս **Յ. Տ. Ներսեսեան**, Հայ դրամագիտական ուսումնասիրութիւններ, Եր., 2000, էջ 554, **Tacitus**, Annals, II, 3, II, 4, **Dio Cass.**, LV, 9, 4, 10a, 5, **Ա. Ստեփանյան**, Պատմության կերպարանափոխությունները Մեծ Հայքում, Գիրք Ա, Եր., 2012, էջ 244-245:

¹³ Տե՛ս **Саргсян Г.** Царица Эрато // «Кавказ и Византия», № 6. Ер., 2006, էջ 14-23:

¹⁴ Տե՛ս **Ռ. Վարդանյան**, Լուկիոս Վերոսի օրոք Հայաստանում թողարկված պղնձե դրամներ, ՊԲՀ, № 2, Եր., 2004, էջ 234-253:

¹⁵ Տե՛ս **E. Babelon**, La Gravure en pierres fines, came'es et intailles, Paris, 1860, էջ 193:

¹⁶ Տե՛ս **A. Layard**, The Monuments of Ninive, London, 1849-53, տախտակ 65, էջ 18:

Լանգլուայի¹⁷ (նկ. 6): Վ. Հացունու կարծիքով ևս այս թագուհին Երատոն է՝ վարսերի և կերպարի կատարման նմանությունների պատճառով¹⁸: Նա թագուհուն ներկայացնում է բարձր սանրվածքով, վարսերի մի մասը հավաքված է գլխի ետևի կողմում, իսկ մյուսը՝ հյուսված դեպի վերև, գլխին դրված է կոնաձև, եռանաս, եռանկյունաձև ելուստներով խույր՝ ձևով նման Արտաշեսյանների թագին, սակայն զարդարված է վեցաթև աստղերով: Խույրը ծածկված է երկշար մարգարիտներով: Թագուհու ուսի վրա ամրացված թիկնոցը հավաքված է ճարմանդով: Հանքաքարի վրա պատկերված թագուհին, անշուշտ, հայուհի է, և այս կարծիքը հաստատվել է բոլոր ուսումնասիրողների կողմից: Այս դեպքում արդեն այնքան էլ չի կարևորվում՝ սա Արշակունյաց արքայատոհմի Տիգրան IV արքայի կին Երատո թագուհին է, թե մեկ այլ հայ թագուհի:

Ինչ վերաբերում է փարիզյան Երատոյի դիմապատկերին, ապա կարող ենք ասել, որ, չնայած մաշվածությանը, լավ պահպանվել է թագուհու սանրվածքը. մազերի մի մասը ողորկ հավաքված է գագաթին, մյուս մասը գլխի շուրջ կազմում է ուռուցիկ և ոլորուն պսակ, իսկ գլուխը զարդարում է դիադեման¹⁹: Կնոջ նման դիմապատկերներ հանդիպում են Կլեոպատրայի և Լիվիայի կերպարներում: Նման հերահարդարանքով թագի շուրջ ամփոփված վարսերը հավաքվում են ծոծրակին:

Վերոնշյալ երկու դրամների վրա էլ, ըստ պահպանված մակագրությունների, պատկերված է Երատո թագուհին: Մի դեպքում նա ներկայացված է գլուխը պսակող ճակատագարդով և հռոմեական պատկերագրությամբ, իսկ մյուսում՝ տիգրանյան թագով և ավանդական ձևով: Այս օրինակներով մենք կարող ենք հստակորեն բաժանում կատարել երկրում գոյություն ունեցող տարբեր պատկերագրական տիպերի և ազդեցությունների միջև: Երկու տիպերին էլ հատկանշական է թագուհուն թագակապ և ճակատով անցնող հանգույցով ներկայացնելու ավանդույթը (նման Արտաշեսի, Տիգրան Մեծի, Արտավազդի դրամներին), որը կապվում է ծոծրակի վրա և թագավորական իշխանության ներկայացման ու պահպանման հարցում կարևոր և առանցքային նշանակություն ունի: Այն ընդգծում էր թագավորական տան միանձնյա ներկայացուցչի և գահակալի հատկանիշները:

Հայոց թագուհիների կերպարները պատկերացնելու համար ունենք նաև հռոմեական եռապետության ժամանակ հատված դրամներից օրինակներ (մ. թ. ա. 20 թ.), որոնցից երեքը՝ Պետրոնիոս Կուրպիլիանոսի և մեկը՝ Ակվինիոս Ֆլորոսի, ձուլված նույն կաղապարով: Դրանք այժմ պահվում են Լոնդոնի Բրիտանական թանգարանում: Նրանց վրա Հայաստանը ներկայացված է սգավոր հայ կնոջ կերպարանքով: Ծնրադիր հայոց թագուհին նստած է գետնին՝ ձեռքը ծնոտին հեմած: Ուսումնասիրողները դրանք համարում են հայոց թագուհու կերպարներ՝ հինք ընդունելով խույրը և հագած մինթանը²⁰, որոնցով հայ թագուհիները հանդես էին գալիս

¹⁷ Տե՛ս V. Langlois, Numismatique de l'Arménie, Paris, 1859, էջ 39-40:

¹⁸ Տե՛ս Վ. Հացունի, Պատմութիւն հին հայ տարագին, Վենետիկ, 1924, էջ 76-77:

¹⁹ Ճակատագարդ, գլխին դրվող պսակ, թագ:

²⁰ Անթև կարճ զգեստ, հագուստ:

նույնիսկ ուշ շրջանի ազնվական կանանց կերպարներում: Նման պատկերագրությամբ դրամներից չորսը թվագրվում են 163-164 թթ., որոնք պատկանել են Լուկիոս Վերոս կայսերը և այժմ գտնվում են հռոմեական արքունական հավաքածույուն: Նրանց վրա պատկերված թագուհիների մազերը պսակաձև հավաքված են գլխի շուրջը՝ թագավորական ոճով, որն առկա է «Հայաստանը պարտյալ» մակագրությամբ բոլոր դրամների և քանդակների վրա: Մեր իշխանուհիները կրում էին խույր, որը կոնաձև էր, նեղ և տափակածայր՝ գագաթի վրա հարթ կամ ատամնավոր: Այս ձևը բնորոշ էր կանանց խույրերին, ինչը կհանդիպենք առավել ուշ հայ թագուհիների մյուս կերպարներում նույնպես: Պատմուճանն ունի պճղնավոր զարդապատկերում, որը կամ նստելու համար, կամ էլ իբրև սգավորի՝ ազդերի վրա է հավաքված:

4. «Մայր Հայաստանի» անձնավորմամբ հելլենիստական դրամները²¹

Հռոմեական կայսրերն ու զորավարները, հանրապետական Հռոմի իշխանության ժամանակաշրջանից սկսած, թողարկում էին ոսկուց, արծաթից, պղնձից դրամներ՝ ձոնված Հայաստանի նվաճմանը²²: Հարկ է նշել, որ այդ «պատվին» էին արժանանում հռոմեական իշխանության թշնամի և նվաճված բոլոր երկրները²³:

Հռոմեական դրամների վրա Հայաստանի նվաճման մասին հայտարարություն առաջին անգամ ներկայացվեց հենց Մարկոս Անտոնիոսի օրոք: Հատկանշական է, որ հենց Հռոմից սկսվեց Հայաստանի խորհրդանշական պատկերումը թագուհու խորհրդանշական կերպարով: Առավել հետաքրքրական էր այն, որ Հռոմը իրեն ենթակա տերությունները ամբողջական քարտեզի տեսքով արդեն հելլենիստական խճանկարներում ներկայացրեց, որտեղ տարածաշրջաններից յուրաքանչյուրն անձնավորված էր: Հայաստանին բաժին ընկավ «Պարտված թագուհու» կերպարը: Պարտված պետությունները հռոմեական դրամների վրա ներկայացվում էին կենդանիների կամ տարբեր այլաբանական անձնավորումների տեսքով (Անտիոքը, Բրիտանիան, Սիցիլիան, Աֆրիկան, Գալլիան, Հայաստանը և այլն)²⁴:

Մարկոս Անտոնիոսի և Կլեոպատրայի կողմից Հայաստանի զավթումը (Ք. ա. 32-31 թթ.) ներկայացնող թագավորի և թագուհու պատկերագրությամբ մի շարք դրամներ հայտնաբերվել են Հայաստանի տարածքում: Դրանի դիմերեսին ներկայացված է Մարկոս Անտոնիոս կայսրը, նրա ետևում հայկական թագ է պատկերված, իսկ շուրջը գրված է՝ **ANTONI, ARMENIA. DEVICTA.** («Անտոնիոս, Հայաստանը՝ նվաճված»): Դրանի դարձերեսին ներկայացված է Կլեոպատրայի կիսանդրին դեմքով դեպի աջ,

²¹ Տե՛ս **Ձ. Պտուկեան**, նշվ. աշխ., էջ 30-53:

²² Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, եր., 1971, էջ 625, 631:

²³ Տե՛ս **Խ. Մուշեղյան**, Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ. թ. ա. V դ. - մ. թ. XIV դ.), եր., 1982, էջ 93:

²⁴ Օրինակ Լուցիոս Դոստիլիոս Սասեռնայի դեմարների վրա Գալլիան (այժմ՝ Ֆրանսիա) անձնավորված է տխուր, հերածակ կույսի գլխով, իսկ Քվինտուս Մետելլուս Սցիպիոնի դրամների վրա Աֆրիկան ներկայացված է կնոջ դեմքով, քթի փոխարեն փղի կնճիթով:

գլխին՝ դափնեպսակ, ականջին՝ օղ, պարանոցին՝ մանյակներ, ուսին՝ արքայական ծիրանի, իսկ շուրջը գրված է՝ **CLEOPATRAE. REGINE. REGVM. FILOM, REGVM**, ինչը նշանակում էր՝ «Կլեոպատրա՝ թագավորների և իր որդիների թագավորության թագուհի» (նկ. 8): Վերջինս գտնվել է Սիսիանի Սառնակունք գյուղից և պահվում է Հայաստանի պատմության թանգարանում:

Նմանօրինակ դրամներ կան Փարիզի և Բրիտանական թանգարանների հավաքածուներում: Դրանք թողարկվել են Մարկոս Անտոնիոսի և Կլեոպատրայի կողմից հայոց արքա Արտավազդ II-ին և նրա ընտանիքին Արտաշատից Ալեքսանդրիա քաղաքներում հետո: Անտոնիոսն իր թողարկած դրամների վրա հռչակված է որպես Հայաստանը նվաճող: Փաստորեն, հռոմեական դրամների պատկերագրության մեջ առաջին անգամ ենք հանդիպում Հայաստանի նվաճման վերաբերյալ նման պաշտոնական հայտարարության, որը այսպիսի պատկերագրությամբ դրամների ստեղծման նախաօրինակ կարող էր լինել²⁵: Արծաթից և պղնձից հատված այս դրամների վրա թագակիր հայոց թագուհին նստած է գետնին՝ որպես իշխանության կորստի և ստորացման նշան: Մի ձեռքը դեմքի կամ ծնոտի տակ է դրված՝ որպես ափսոսանքի և հուսալքության նշան, իսկ մյուս ձեռքով հենվել է գետնին. սովորաբար կողքին ընկած են զենքերը, որոնք խորհրդանշում են իշխանության անկումը, ուժի զավթումն ու պարտությունը:

Մարկոս Ավրելիոսի (161-181 թթ.)՝ ոսկուց, արծաթից, պղնձից դրամների դիմապատկերների դարձերեսին նույնպես ներկայացված է հայոց թագուհին. սովորաբար պատկերված է տխուր և գետնատարած, իսկ ձեռքերը հենած են կամ գետնին, կամ իր զենք ու զրահին՝ աղեղ, կապարձ, վահան, զինանշան, իսկ ներքևում գրված է՝ **ARMEN**: Այսօրինակ դրամներ կան Փարիզի Ազգային գրադարանում և Լոնդոնի Բրիտանական թանգարանում:

Տրայանոսի (98-118 թթ.)՝ պղնձից սեստերի վրա հանդիպում ենք Հայաստանի նվաճման առթիվ նմանատիպ տեսարանի՝ թողարկված 115 թ.-ին՝ Արևելքում: Դիմերեսին Տրայանոս կայսեր կիսանդրին է՝ ռազմի կայսերական թիկնոցով, իսկ դարձերեսին Տրայանոս կայսրը պատկերված է կանգնած՝ ռազմական հագուստով և զրահաշապիկով, գլխին՝ դափնեպսակ, աջ ձեռքում սաղավարտն է, իսկ ձախով հենվել է միզակին: Նրա ոտքերի մոտ ընկած են սրեր և վահաններ, թիկունքին կանգնած է հաղթանակի դիցուհին, որը պսակ է բերում, իսկ առջևում անձնավորված Հայաստանի կերպարն է՝ դեպի ձախ գլխիկոր նստած կնոջ կերպարանքով: Ներքևում գրված է՝ **ARMENIA**: Պահվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում:

«Պարտված Հայաստանը»՝ հայոց թագուհու ծնկաչոք և հուսալքված կերպարով հանդիպում ենք Մարկոս Ավրելիոսի, Լուկիոս Վերոսի, Մարկոս Անտոնիոսի, Տրայանոսի դրամների վրա՝ կռած Հայաստանի նվաճման առթիվ (նկ. 9, նկ. 10): «Պարտված Հայաստանը» հայոց թագուհու կերպարանքով:

²⁵ Հայտնի է, որ Մարկոս Անտոնիոսը Հայաստանից եգիպտոս վերադառնալուց հետո՝ Ք. ա. 34 թ., Ալեքսանդրիայում, իբրև նոր աշխարհակալության հիմնադիր, արևելյան երկրները բաժանել է իր ժառանգներին: Եգիպտոսի թագուհի Կլեոպատրայից ծնված իր վեցամյա որդուն՝ Ալեքսանդրին, բաժին է տվել Հայաստանը՝ միաժամանակ նրան հայտարարելով Մեդիայի (Մարաստանի) և Պարթևաց թագավոր:

րով սովորաբար ներկայացված է հռոմեական զորավարների դրամների դարձերեսին՝ ծնկաչոք, ձեռքը դրված ծնոտին կամ կայսրից ազատություն և գթություն շնորհելու աղաչական դիրքով՝ գլխիկոր և հուսալքված: Նա գթություն խնդրելու դիրքով երբեմն ձեռքերը կարկառուն է դեպի հռոմեական կայսրը: Այս դրամների վրա հանդիպում ենք «Հայաստան» մակագրությանը՝ կետավոր շրջանակով:

Հայաստանի անձնավորմամբ հայոց թագուհիների պատկերագրության ուսումնասիրության համար հարուստ նյութ են Լուկիոս Վերոսի դիմաքանդակի դրոշմամբ հռոմեական ոսկե, արծաթե և պղնձե դրամները²⁶ (նկ. 9): Ներկայացված են հռոմեական զորքերի հաղթանակը և Հայոց թագավորության անկումը՝ պարտյալ թագուհու կերպարով: Լուկիոս Վերոսի դրամների պատկերագրությունը Հայաստանի թագավոր նշանակելու արարողությունն է, ընդ որում՝ թագավորն իր պսակը ստանում է գահին բարձր բազմած հռոմեական կայսեր ձեռքից: Լատիներեն մակագրությունն ավետում է Հռոմի միաժամանակյա հաղթանակը Արևելքում՝ Հռոմեական կայսրության գլխավոր մրցակիցների՝ Հայաստանի և Պարթևստանի նկատմամբ: Հայկական թեմայով թողարկված հռոմեական պղնձե դրամները բուն Հռոմի սահմաններից դուրս չէին գալիս, և պատահական չէ, որ Հայաստանի տարածքից մնանօրինակ դրամներ մինչ օրս չեն հայտնաբերվել:

Լուկիոս Վերոսն առաջինն էր, որ պարտված հայոց թագուհու ներկայացմամբ՝ «Պարտված Հայաստան» մակագրությամբ դրամներ թողարկեց: «Պարտված Հայաստանը» թեմայով դրամներում թագուհու կերպարը ներկայացված է ծալքավոր պատմուճանով, որը որպես սգավոր կնոջ խորհրդանիշ հավաքված է ազդերի վրա, կրում է միմթան՝ մնան հռոմեական դրամների կանանց կերպարներին, և դրանց վրա պարզորոշ զգացվում է հելլենիստական ազդեցությունը: Սակայն հայ թագուհիները պատկերվում են նաև տղամարդկանց հատուկ ծալքավոր վարտիքով, որն էլ բնորոշ էր իրանական պատկերագրությանը:

Այս դրամների վրա դրոշմված են նաև պատերազմական ավարը, դրոշները, թափված զենքերը, որոնք խորհրդանշում էին Հայաստանի պարտությունը²⁷:

Լոնդոնի Բրիտանական թանգարանում գտնվող հռոմեական դրամների վրա (մ. թ. ա. II դ.) «Պարտված Հայաստանը» գրությամբ ներկայացված է ծնրադիր Հայաստանը՝ հայ թագուհու կերպարով, գլխին՝ ատամնավոր թագ՝ եզերված թագակապ հանգույցով²⁸: Որպես Հռոմեական կայսրության պարտյալ՝ նրան ներկայացրել են մի պարզ պարեգոտով, որի տակից երևում է երկար ու նեղ փողքերով անդրավարտիքը՝ ըստ հայապարթև տարազի: Այդ «պարտված թագուհիները» կոչված էին ներկայացնելու պետության և հայրենիքի հետ կանանց նույնացումը, բայց դրանք հավասարապես գործում էին որպես նվաճված տարածքների յուրացման խորհրդանիշներ:

Նեապոլի թանգարանի Նեպտունի (Basilica Neptuni) սրահում ներկայացված են վիմաքանդակներ, որոնք կերտվել են Ադրիանոս կայսեր

²⁶ Տե՛ս Վ. Հացունի, նշվ. աշխ., էջ 84-85:

²⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 75-76:

²⁸ Տե՛ս Առաքել Պատրիկ, Հայկական տարագ. Եր., 1967, էջ 21:

(117-138 թթ.) օրոք և զարդարվել նրա հաջորդ Անտոնիոսների կողմից: Քանդակները հռոմեական զավառները խորհրդանշող մարդապատկերներ են, որոնք պահպանվել են մինչ օրս և ավանդական-տեղական տարազներով են: Դրանցից մեկը «Արմենիան» է, որը հայկական խույրի և տարազի պատճառով մասնագետների կողմից Հայաստանի խորհրդանշական պատկերն է համարվում²⁹ (նկ. 7): Հռոմեական կայսրության տիրույթները ներկայացվում էին յուրաքանչյուր երկրին բնորոշ կերպարով (օր. պարտված զինվորի, ծնկաչոք արքայի, հերարձակ կնոջ կամ էլ կենդանիների այլաբանությամբ): Հետաքրքիր է, որ Հայաստանը խորհրդանշվում էր հայապարթև տարազով և կնոջ կերպարով՝ թուր և կապարճ բռնած: Նրա գլխարկը կամ սաղավարտը վերևից հատած կոն, ծոծրակակալով է, բազմածալ մի թիկնոց ուսերի վրայով ճարմանդով հավաքված է աջ կողմում: Ազնվական ծագմամբ կինը հավանաբար թագուհի է՝ տղամարդուն բնորոշ զգեստավորմամբ և զենքերով: Մեր կնոջ կերպարը ամազոնուհիների³⁰ նման երկսեռ է. «Մայր Հայաստանը», որը տարբեր լեզուներում իգական սեռի է, այստեղ ներկայացված է առնական տղամարդու հագուստով: Այն տարբերվում է կանանց հագուստներից կարճ պարեզոտով և վերնազգեստով, որոնք էլ հատուկ են միայն տղամարդկանց: Իսկ իշխանական ճոխ տարազը տարբերվում է ժողովրդականից: Մեր թագուհու կերպարը գլխին կրում է կոնաձև խույր՝ ծայրը տափակ կտրված, դեմքը բաց է և վիժակով ծածկում է ծոծրակը: Խույրի այս ձևը մեզ հիշեցնում է փոյուզիական գլխարկները:

Արտաքինից ազնվական հիշեցնող այս «իշխանուհին» կրում է բաճկոն, որը, ինչպես պարթևականը, ծալքերով իջնում է ծնկներին և ուղիղ վերջավորությամբ ավարտվում: Հագուստի թևքերը պսակվում են երիզածն թեզանիքներով: Զգեստն անթև է՝ լայն ու բազմածալ, որը ներքնազգեստի վրայից է հագած, քանի որ առաջամասում հավաքվում է վերև և ծալքեր է կազմում որովայնի շուրջը: Ներքևի երկու ծայրերում կախված է մեկական նուռ կամ զարդ: Հագուստն ունի լայն գոտի, որի ծայրերը հանգուցված են մեջքին: Լայն, ճոխ, բազմածալ թիկնոցը ծածկում է թիկունքը, արքունական ծիրանիի նման ճարմանդվում է աջ ուսին և իջնում երկար զարդարուն զգեստին հավասար, որի ծայրերից ուռենու ճյուղեր են կախված: «Արմենիան» հագել է երկար գոտևոր վարտիք և փեշերը քշտած երկարաթև պատմուճան:

«Արմենիայի» վարտիքը նույնպես պարթևական է, որը հասնում է մինչև ոտնաթաթերը և հավաքվում ներքևում: Կոշիկները լավ չեն երևում, բայց ծածկում են թաթերը: Վ. Հացունու կողմից ուսումնասիրված այս քանդակի սուրն ու կապարճը հայկական տարազի մաս չեն համարվում. դրանք զուտ դեկորատիվ նշանակություն ունեն³¹:

²⁹ Տե՛ս **Սվետլանա Պողոսյան**, Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր, Եր., 2001, էջ 75:

³⁰ Հետաքրքիր է այստեղ ամազոնուհու, ռազմիկ, անպարտելի կնոջ կերպարի ընտրությունը. այն պատահական չէր: Այս ավանդույթը վաղուց գոյություն ուներ հռոմեացիների մոտ. նրանց պատկերել որպես նվաճված և գերված երկրների խորհրդանշական այլաբանություններ, որպեսզի առավել շեշտվեր կայսրության հզորությունը:

³¹ Տե՛ս **Վ. Հացունի**, նշվ. աշխ., էջ 82-85:

Հայոց «թագուհու» սաղավարտը առջևից բաց է, դիմացից՝ եզրագծելով դեմքը, ականջակալներով փակել է ականջները, իսկ մազերը հավաքված են ծոծրակին: Հայոց թագուհիները, ըստ հռոմեական վկայությունների, քողի կամ գլխազարդի փոխարեն կրել են թագավորական ոսկյա, դիմաբաց սաղավարտներ, երբ երկար ուղևորությունների և պատերազմների ժամանակ ուղեկցել են իրենց ամուսիններին: Սակայն սաղավարտը նաև թագուհու սեռը սքողելու և նրա անձը պաշտպանելու նշանակություն է ունեցել³²:

Հատկանշական է նաև հայոց թագուհիների պատկերումը գետնին՝ հռոմեական կայսեր առջև ողորմածության և աղաչական ձեռքերի դիրքով: Սա հռոմեացիների կողմից որպես հայոց թագավորական իշխանության տապալման և երկրի հպատակման նշան էր ներկայացվում, սակայն միաժամանակ թագուհու կերպարով երկրի այլաբանությունը մեզ հնարավորություն է տալիս հայազգի իշխանուհիների և թագուհիների պատկերագրական առանձնահատկությունները ներկայացնելու:

Եզրակացություններ

Առկա նյութերի շնորհիվ մենք կարող ենք հայոց թագուհիների պատկերագրության մեջ առանձնացնել իրանական և հելլենիստական ոճերի համատեղումը: Հանդերձանքում առանձնանում են առօրյա և մինչև ոտնաթաթերն ու ձեռքերի դաստակները հասնող փակ հագուստները, արական վարտիքները և ծալքավոր կարճ պարեգոտները. օրինակ՝ «Հայաստանը՝ պարտված» մակագրությամբ թագուհիների պատկերագրման մեջ (նկ. 7) հանդիսավոր, հունական ոճով թիկնոցներն ու հագուստները, որոնք ցուցադրում են վիզը, ուսերն ու բազուկները՝ թեթևակի ճարմանդվելով աջ ուսին և խոր ծալքերով հանդիսավոր իջնելով ներքև. օր. Փարիզի մատենադարանի «Էրատոյի» կնքադրոշմի վրայի հագուստները և հերահարդարանքը (նկ. 6): Հայոց թագուհիների պատկերման մեջ հաճախ ենք հանդիպում զարդեր, մարգարտաշար մանյակներ, ականջօղեր, թագակապ հանգույցներ, արքայական թիկնոցներ, ճակատազարդեր, արքայական խուլյեր և այլն:

Իրանական ազդեցությունն են կրում թագուհիների հագուստում տղամարդու երկար վարտիքների համատեղումը կարճ պարեգոտների հետ: Պարթևական ծագում ունեն թագերի վրա ներկայացված աստղերը և աստամնավոր վերջավորությունները, որոնք, մեր կարծիքով, Արևի՝ Միթրա-Միիր պարթևական աստծուն համադրելու նպատակ են հետապնդում: Հելլենիստական ազդեցության մասին են խոսում թագուհիների պատկերագրության մեջ հունահռոմեական դիմագծերը, հերահարդարանքն ու հանդիսավոր հագուստները:

Մեր կարծիքով, պատկերագրական տիպի ծագմամբ, ինչպես նաև ուղղուն հերահարդարանքի, թագակապ հանգույցի, ծալքավոր հագուստների, մարգարտաշար մանյակների և գեղեցիկ դիմագծերի կատարմամբ հայոց թագուհիները ժառանգել են «քաղաքամայր դիցուհու» արդեն իսկ ընդունված և տարածված տիպը՝ իրենց վերագրելով աստվածային ծա-

³² Տե՛ս նույն տեղը, էջ 80:

գում և երկրի հովանավորի ու պահապանի հատկանիշներ:

Էրատո թագուհու պատկերներ համարվող դրամները և Վիեննայում պահվող հայուհու դրոշմակնիքը պատկերագրական տարբեր տիպեր են: Հայոց թագուհիները ներկայացված են տարբեր հագուստներով, թագերով, դիմագծերով, գլխագարդերով: Միաժամանակ հետաքրքիր է այն փաստը, որ նույն էրատոյին վերագրվող վիեննական դրոշմակնիքի վրա ներկայացված հայուհին կրում է Արտաշիսյաններին բնորոշ ատամնավոր, կոնաձև խույր՝ պսակված վեցական վեցաթև աստղերի պատկերագրությամբ (նկ. 6): Պարզորոշ է, որ կնիքի վրա պատկերված է հայոց թագուհի, սակայն ո՞ւմ է ներկայացնում, չենք կարող ասել, քանի որ որպես Արտաշիսյան թագուհի՝ պատմիչներից մեզ են հասել միայն էրատոյի մասին մատենագրական վկայությունները:

Թագուհին Արտաշիսյանների վերջին ներկայացուցիչներից մեկն է, ինչը պարզորոշ երևում է նրա հռոմեական դիմագծերից և արքայական ծիրանիով ձևավորված «պաշտոնական» պատկերագրությունից: Ծիրանին ճարմանդով հավաքված է աջ ուսագլխին: Սակայն մեզ քաջածանոթ «Տիգրանյան խույրի» փոխարեն հայոց թագուհին կրում է աստղազարդ խույր, ինչը ցույց է տալիս նրա պարթևական ծագումը:

Աստղերի պատկերումը Արտաշիսյան թագերի վրա մենք կարող ենք տեսնել Արտաշեսի, Տիգրան Մեծի, Արտավազդի դրամների պատկերագրության մեջ: Երեքական աստղերով զարդարված թագի կարող ենք հանդիպել «Պարտված Հայաստանը» մակագրությամբ Մարկոս Անտոնինոսի դրամների դարձերեսներին ներկայացված հայկական թագերի և նույն մակագրությամբ մյուս հռոմեական կայսրերի կռած դրամների «պարտյալ» թագուհիների խույրերի վրա:

Ինչպես նշում է Վ. Հացունին, պարտադիր չէր, որ Արտաշիսյանների ներկայացման համար կրկնվեին թագերի խորհրդանիշները՝ օր.՝ Տիգրան Մեծը ստեղծեց իր թագի պատկերագրությունը³³: Բոլոր Արտաշիսյանները չէին, որ պատկերվում էին Տիգրան Մեծի նման՝ ոչ նրա գահակալությունից առաջ և ոչ էլ նրա գահակալությունից հետո:

Սակայն «Վիեննական հայուհու» պատկերագրության մեջ մենք տեսնում ենք վեցական աստղեր՝ վեց թևերով, երեքական՝ վերևում և ներքևում: Արդյո՞ք սա չէր վերաբերում էրատո թագուհու երեքամյա գահակալման և որպես միանձնյա թագուհի վերընտրվելուն: Ինչպես նշվեց, աստղերի պատկերումը կարող էր պարթևական ազդեցության հետևանք լինել, բայց Տիգրան Մեծը վերցրեց նաև հռոմեական պատկերագրության ավանդույթները: Ինչպես օրինակ՝ մի դեպքում կարող էր պատկերվել հռոմեական հերահարդարանքով և անմորուս, իսկ մյուս դեպքում՝ պարթևների նման ներկայացվեր երկար գիսակներով և մորուքով:

Հայոց թագուհիները նույնպես Հռոմ արտահանվող դրամների վրա կարող էին ներկայացվել հռոմեական իշխանուհիների նման գլխագարդերով, իսկ երկրի ներսի դրամաշրջանառության համար՝ Արտաշիսյան խույրերով: Խույրերի ատամնավոր ելուստաձև բաժանումը համեմատվում էր արևի ու լուսատուի խորհրդանիշների հետ և Միիր-Միթրայի արևի ժա-

³³ Տե՛ս նույն տեղը, էջ 76-77:

ռանգ լինելու իրանական ավանդույթներից էր փոխառված, ինչպես Եգիպտոսում, երբ փարավոնները աստվածային խորհրդանիշներով էին հանդես գալիս՝ որպես երկրային աստվածներ:

Հայոց թագուհու պատկերագրական կերպարի վրա մեծ ազդեցություն է ունեցել նաև Եգիպտական Պտղոմեոսյան թագուհիների դրամների պատկերագրությունը՝ պայմանավորված Հայաստանում Արտավազդ արքայի գահակալումից սկսած Հայաստան ներմուծվող դրամների շրջանառությամբ:

Խորհրդավոր աստղերի պատկերումը կարող էր նաև ներկայացնել այն տարածքները, որոնք վերոնշյալ թագուհու իշխանության տակ էին՝ որպես «Քաղաքամայր դիցուհիների» ժառանգորդուհի:

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ որպես Արտաշիսյանների վերջին ներկայացուցիչ՝ Էրատոն հայոց պատմության մեջ անկումային ժամանակաշրջանի թագուհի էր, և նրա ղեկավարման ժամանակ Հայաստանը մի քանի անգամ մտավ Հռոմի գերիշխանության տակ, երկիրը բաժանվեց մի շարք շրջանների և տարբեր թագավորական գավառների:

Այս դեպքում դրոշմակնիքի վրա ներկայացված «հայոց թագուհին» կարող էր լինել պատմական Հայաստանի առանձին երկրամասի իշխող թագավորական տան ներկայացուցիչ, որը իշխանություն ուներ միայն տվյալ տարածքում³⁴: Նա, անշուշտ, եղել է Արտաշիսյանների զարմից և որպես հռոմեական իշխանություններին ենթակա ղեկավար՝ ներկայացվել է հռոմեական դիմագծերով և հատկանիշներով:

Սակայն պարզ չէ, արդյո՞ք նա Էրատոն թագուհին էր, թե՞ երկրի ներսում ձևավորված առանձին թագավորության ներկայացուցչուհի և դրածո գահաժառանգ:

Մի բան ակներև է՝ նա, անշուշտ, հայուհի է, ինչպես նշում են կնիքին անդրադարձած բոլոր ուսումնասիրողները, և Արտաշիսյանների իշխանության անկումային շրջանի գահակալ՝ ենթակա Հռոմի գերիշխանությանը:



Նկար 1



Նկար 2

³⁴ Տե՛ս V. Langlois, նշվ. աշխ., էջ 39-40:



Նկար 3



Նկար 4



Նկար 5



Նկար 6



Նկար 7



Նկար 8



Նկար 9



Նկար 10

Բանալի բառեր – *Արտաշատ, Տիգրանակերտ, Մարկոս Անտոնիոս, Էրատո, Տիգրան Մեծ, Մայր Հայաստան, Վիկտորյա, Արտաշես, Անտիոք*

ВИКТОРИЯ ВАСИЛЯН – *Изображение цариц в эллинистическом искусстве Армении.* – Эллинистический мир обожествлял царскую чету, образы царя и царицы традиционно запечатлевались художниками и ваятелями. В статье на материале ряда монет и рельефов рассматривается иконография цариц в армянском искусстве эллинистического периода. Монеты, о которых идёт речь, хранятся в музеях Вены и Парижа. По мнению специалистов, на них изображена сестра и жена Тиграна IV царица Эрато. Судя по характерным чертам лица, женщина с царской короной на голове и в царском одеянии – армянка. К сожалению, за нехваткой материалов оба эти мнения сугубо предположительны.

Считается, что на монетах, хранящихся в Британском музее в Лондоне под названием “Покорённая Армения”, также изображены армянские царицы эллинистических времён; на них надеты армянская корона и армяно-парфянская национальная одежда.

Ключевые слова: *Арташат, Тигранакерт, Марк Антоний, Эрато, Тигран Великий, Мать Армения, Викторья, Арташес, Антиохия*

VICTORYA VASILYAN – *Depiction of Queens in the Hellenistic Art of Armenia.* – In the Hellenistic world the images of the King and the Queen were reflected in the artworks.

The article discusses the question of iconography of Queens in the Hellenistic art of Antique Armenia based on coins and reliefs.

We are presenting the characteristics of iconographic image of the Armenian queen based on coins which are on display in the museums of Vienna and Paris. According to specialists, these are the images of Erato – the Queen of Armenia, sister and the wife of the King Tigran IV. In our opinion it is a Queen with an Artashesyan royal crown and gown, characteristic Armenian features and she is representing an Armenian woman. With high probability her image could be the image of the Queen Erato. Unfortunately, we cannot definitely substantiate that suggestion because of the lack of materials.

The similar images of Armenian Hellenistic Queens are also on the coins on display in the British Museum in London named “Conquered Armenia”. On these coins the Queen is depicted with Armenian royal crown and wearing Armenian-Parthian national dress.

Key words: *Artashat, Tigranakert, Mark Antony, Erato, Tigran the Great, Mother Armenia, Viktorya, Artashes, Antioch*

**ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՔՈՂԱՐԿՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼԸ (PR)
Յ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ՔԱՋ ՆԱԶԱՐԸ» ՀԵՔԻԱԹՈՒՄ**

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈՔՅԱՆ

Յ. Թումանյանի «Քաջ Նազարը» հեքիաթը զարմանալի «բախտ» է ունեցել, ինչպես իր իսկ հերոսը՝ Նազարը: Միայն թե ստեղծագործությունը «փառքի» է արժանացել իրական արժանիքների շնորհիվ՝ ի տարբերություն դարձյալ իր հերոսի: Նախ՝ այն բարձր է գնահատել հենց ինքը՝ Ամենայն հայոց բանաստեղծը, որը հայտնի էր իր ստեղծագործությունների նկատմամբ չափազանց բժախնդիր վերաբերմունքով. «...Իմ կարծիքով, ես միայն մի հեքիաթ եմ մշակել կարգին..., և դա «Քաջ Նազարն» է»¹, - գրել է նա: Այնուհետև, թեպետ մինչ այդ էլ հեքիաթը բազմաթիվ տարբերակներ է ունեցել ռուսական, գերմանական, կովկասյան ժողովուրդների բանահյուսության մեջ² և հայտնի է եղել հայ ընթերցողին, այնուհանդերձ, ինչպես իրավացիորեն նկատել է Ս. Աղաջանյանը, «Լինելով տարբեր ազգերին պատկանող բազմաթիվ... համանման մոտիվներով ժողովրդական հեքիաթների ստեղծագործական վերամշակման արդյունք՝ «Քաջ Նազարն» ըստ էության նաև սկզբնաղբյուր է»³: Գրականագետը նկատի ունի Լ. Հախվերդյանի այն դիտարկումը, որ, ոգեշնչվելով հեքիաթի հավերժական պոռթկեմատիկայով, մի շարք հայ գրողներ մեր գրականության մեջ ձևավորել են քաջնազարական⁴ թեմատիկան (Դերենիկ Դեմիրճյան, Ավ. Իսահակյան, Ստ. Ջորյան, Համաստեղ, Մկրտիչ Սարգսյան և այլք): Եթե հավելենք նաև հեքիաթի նկատմամբ գրականագիտական մտքի ունեցած մեծ հիացմունքն ու բարձր գնահատականները, նրա բացառիկ ժողովրդականությունը, ապա կարող ենք ասել «բախտավոր» հեքիաթ:

Հեքիաթին տրվել են ամենատարբեր հիացական գնահատականներ: Գրականագետները միակարծիք են այն հարցում, որ «Քաջ Նազարի թագավորությունը մարդկային հիմարության վրա բարձրացող թագավորություն է»⁵, և որ «...հանգամանքներն առնուձեռն են նրան իրենց ուսերին ու բարձրացնում են հասարակական աստիճաններով»⁶: Հեքիաթը մինչ այժմ քննվել-դիտարկվել է գրական-գեղարվեստական տեսանկյունից, իսկ Ս. Աղաջանյանի վերջերս հրապարակած հոդվածում հերոսի վարքը, միջավայրը, այդ երկուսի փոխհարաբերությունները ենթարկվում են հոգեբանական խոր վերլուծության:

Հեքիաթի բազմակողմանի վերլուծությունները, թվում է, սպառած պի-

¹ «Հայ նոր գրականության պատմություն», 5 հատորով, հ. V, Եր., 1979, էջ 332:

² Տե՛ս նույն տեղը:

³ Ս. Աղաջանյան, Մեզ անծանոթ Քաջ Նազարը, «ՎԷՄ» համահայկական հանդես, թիվ 3, 2013, էջ 140:

⁴ Տե՛ս Էդ. Ջրբաշյան, Թումանյանի գեղարվեստական արձակը / Յովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Եր., 1994, էջ 741:

⁵ Լ. Հախվերդյան, Թումանյանի աշխարհը, Եր., 1996, էջ 400:

⁶ «Հայ նոր գրականության պատմություն», հ. V, էջ 333:

տի լինեին ասելիքը, սակայն ստեղծագործության նորովի ընթերցումը մեզ զարմանալի մի բացահայտման առիթ տվեց. հեքիաթի հիմքում ընկած է մարդկանց քողարկված կառավարման մոդելը, այն մեխանիզմը, որի շնորհիվ բոլոր ժամանակներում, հնում գուցե տարերային, իսկ մեր օրերում արդեն համակարգված ու մեծ հաջողությամբ գործի է դրվում PR կառույցների կողմից: Անշուշտ, անհեթեթ կլիներ նույնիսկ մտածելը, որ Թունանյանը, թեկուզև անուղղակիորեն, մատնանշում է այն մեթոդներն ու PR հնարքները, որոնք այսօր արդեն համապատասխան մասնագիտական գրականության մեջ ունեն իրենց անվանումները և պարբերաբար գործի են դրվում, և որ հեքիաթը գրված է PR տեխնոլոգիաների կիրառման տեսանկյունից: Սակայն մի բան ակնհայտ է. գրողին անչափ հետաքրքրել է այն հարցը, թե ինչպես իրենից ոչինչ չներկայացնող մեկը կարող է հասնել մեծ բարձունքների և իրեն ենթարկել գուցե շատ ավելի արժանավորների: Այս հարցերի պատասխանները գտնելու համար գրողը դիմել է ժողովրդի իմաստնությունը խտացնող այս հեքիաթին, քանի որ հեքիաթներում նկարագրվող մարդկային հարաբերությունները իրական կյանքում տեղ ունեցող մարդկային նմանօրինակ հարաբերությունների կրկնությունն ու յուրովի անդրադարձումն են⁷: Իսկ թե ինչպես են իրական կյանքում նազարները հասնում բարձունքների, հասարակության մեջ բարձր դիրք գրավում, կքննենք հեքիաթի օրինակով, այլ կերպ ասած՝ այն կվերլուծենք PR տեխնոլոգիաների կիրառման տեսանկյունից:

PR եզրույթը մեր բառապաշար է մտել համեմատաբար վերջերս, բայց որպես երևույթ այն հազարամյակների պատմություն ունի: PR տեսաբան, քաղաքագետ Վ. Մեդինսկին նշում է, որ «հասարակական հաղորդակցության ղեկավարման արվեստը գոյություն է ունեցել միշտ, իսկ ռուսական պատմությունը դրա հիասքանչ օրինակներ է տալիս՝ Վլադիմիր Մոնոմախից սկսած մինչև Իոսիֆ Ստալին»⁸: Մեդինսկին այս ոլորտում հաջողությունների հասած անձանց անվանում է PR-ի ինտուիտիվ հանճարներ⁹: Մեր օրերում կատարելագործված տեխնոլոգիաները ներառել են արդեն գոյություն ունեցող բազմաթիվ հնարքներ ու մեթոդներ, որոնք նախկինում ավելի հաճախ կիրառվել են նաև ներգալաբար՝ հանգեցնելով մեծ արդյունքների: Նմանօրինակ ինտուիտիվ PR-ի ենք հանդիպում «Քաջ Նազարը» հեքիաթում: Նշենք, որ PR-ը այլ կերպ անվանում են նաև **հանրության քողարկված կառավարում**, որի մոդելը հետևյալն է՝ ազդեցության թիրախի վերաբերյալ տեղեկատվության հայթայթում, ազդեցության թիրախներ ու խայծեր, ատրակցիա կամ ձգողականություն, թիրախին գործողության դրդելը և գործողության նախաձեռնողի հաղթանակը: «Քաջ Նազարը» հեքիաթում դրսևորված են այս մոդելի բոլոր օղակները՝ բացառությամբ առաջինի՝ ազդեցության թիրախի վերաբերյալ տեղեկատվության հայթայթում, քանի որ Նազարի (հետայսու նրան կանվանենք **PR օբյեկտ**) քայլերը կանխամտածված-ծրագրված չէին, ինչպես լինում է սովորաբար: Այստեղ ուշագրավ է այն, որ Նազարը, լինելով PR օբյեկտ, ո-

⁷ Տե՛ս **Ա. Վարդանյան**, Հովհաննես Թունանյանի հեքիաթները, Եր., 1986, էջ 36:

⁸ **Мединский В.** Неодяи и гении PR. От Рюрика до Ивана IV Грозного. СПб., 2011, с. 12.

⁹ Տե՛ս նույն տեղը:

րոշ դրվագներում գործում է որպես PR սուբյեկտ, քանի որ հենց նրա նախաձեռնությամբ է գործի դրվում քողարկված կառավարման մոդելը (ինչպես տերտերի մոտ գնալն ու իր «քաջագործությունը» ներկայացնելը): Դա գլխավորապես կատարվում է բնագոյային, ինտուիտիվ մակարդակում, ինչը բնորոշ է համանման կերպարներին: Ըստ այդմ՝ Նազարը հանդես է գալիս նաև որպես սեփական PR արշավի կազմակերպիչ, թեև հիմնականում միայն քողարկված կառավարման մոդելի երկրորդ օղակում: Այստեղ ազդեցության թիրախի (հասարակության) վերաբերյալ տեղեկատվության հայթայթման հեղինակը ակամա դարձել է տերտերը: Նա՝ որպես ուսյալ անձնավորություն (անվանենք նրան մտավորականության ներկայացուցիչ), ճանաչում է միջավայրի պահանջումները, հետաքրքրություններն ու թուլությունները, ուստի դրոշակի վրա գրում է այն տողերը, որոնք ոչ միայն հաճելի կլինեին Նազարին, այլև կհետաքրքրեին միջավայրին: Այսինքն՝ գրության բովանդակությունը պայմանավորված էր ժամանակաշրջանի՝ ուժի, քաջության նկատմամբ ունեցած պաշտամունքով: Թեպետ այն գրվեց ծաղրելու մտադրությամբ, բայց ենթագիտակցորեն ընտրվեց լսարանի պահանջումները բավարարող երկտող: Այսպիսով, կարելի է ընդունել, որ Նազարը մուտք գործեց հանրություն՝ ունենալով լսարանի համար համապատասխան խայծ-գրություն, որի շնորհիվ էլ գործի դրվեցին քողարկված կառավարման հաջորդ օղակները:

Ներկայումս ցանկացած PR արշավի բոլոր փուլերը նախապես ծրագրվում են: Նախքան գործընթացը սկսելը առաջնահերթ է բրենդի անվանում ընտրելը՝ անկախ այն բանից՝ այն ապրա՞նք է, ծառայությո՞ւն, թե՞ հասարակական-քաղաքական գործիչ: Վերջինս մեր օրերում սովորաբար հանդես է գալիս իր սեփական անուն-ազգանունով, չեն բացառվում նաև պատվանուններն ու մականունները, որոնք ավելի հաճախ ժողովուրդն է տալիս տվյալ գործչին՝ դրանով իսկ ոչ միայն բնութագրելով նրան դրական կամ բացասական կողմերով, այլև արտահայտելով իր հստակ վերաբերմունքը՝ համակրանքն ու հակակրանքը: «Անձնանվան կիրառումը առհասարակ առանձնահատուկ ուշադրության է արժանացել հնում: Մարդկանց անվանակոչում էին խստիվ սահմանված կարգով, ինչը մասնակիորեն պահպանվել է նաև մինչև մեր օրերը»¹⁰, - նշում է PR մասնագետ Գ. Պոչեպցովը: Հիշենք՝ Աշոտ Երկաթ, Տիգրան Մեծ, Ռիչարդ Առյուծասիրտ, Իվան Ահեղ և այլն: Վ. Մեդինսկին, PR տեսանկյունից անդրադառնալով Ռուսաստանի շուրջ տասնարյա պատմությանը, քննելով ռուս ցարերի գործունեության մինչ այդ անհայտ էջերը, գրում է. «Դեռևս 2-3 դար առաջ պատմության դասագրքում հայտնվելու երաշխիք կարող էր լինել բարձր ծագումը: Բայց մի՞թե քիչ են նաև մոռացված արքաները»¹¹, և համոզիչ փաստերով ապացուցում է, որ մարդկանց հիշողության և ընդհանրապես պատմության մեջ մնալու կարևոր նախապայմաններից է եղել ճիշտ ու կազմակերպված PR-ը: Դառնանք մեր «PR օբյեկտին»՝ Նազարին:

Նախ անդրադառնանք նրա մականվանը՝ «Քաջ»: Թումանյանը հեքիաթի սկզբում նշում է, որ իրենց գյուղում նա հայտնի էր որպես անշնորհք, ա-

¹⁰ Почепцов В. Г. Паблик Рилейшнз для профессионалов. М., 2006, с. 14.

¹¹ Мединский Вл., նշվ. աշխ., էջ 12:

լարկոտ ու վախկոտ մարդ, այդ պատճառով էլ անունը դնում են Վախկոտ Նազար: Կնոջ կողմից տնից վռնովելուց ու ճանճերին սպանելուց հետո հերոսի ճակատագրի մեջ էական փոփոխություններ են տեղի ունենում: Անդրադառնալով Նազարի «ճանճասպան քաջագործության» պատկերին՝ Ս. Աղաջանյանը գրում է. «Սա հերոսի պատրանքային ինքնաճանաչման, ինքնաարժևորման դրսևորումն է: Ինքը լավ գիտի, որ անօրինակ վախկոտ է: Դրա համար էլ առաջին հերթին հենց ինքն իր աչքում, ինքն իր ներաշխարհում ինքնահաստատվելու, ինքն իրեն հակառակն ապացուցելու կարիք ունի: Լավ գիտի նաև, որ իր կոտորածն ընդամենը մի քանի ճանճ է: Բայց «մտածում է, որ հազարից պակաս չի լինի»: Սա է Նազարի մասին հյուսվելիք առասպելի առաջին հիմնաքարը: Եվ անպայման նշանակալի է, որ այն դնողը հենց ինքն է: Նա իր մեջ այլ Նազար է հայտնաբերում»¹²: Իսկ Ն. Աղբալյանը հերոսի այս հոգեվիճակն անվանում է ինքնաներշնչում¹³, սակայն մեզ համար առավել ընդունելի է հոգեբան, սոցիոլոգ Մասլոուի՝ մարդկային պահանջմունքների հիերարխիայի այն սանդղակը, որի համաձայն, ի թիվս այլ պահանջմունքների, անձն ունի նաև հարգանքի ու ճանաչման ցանկություն¹⁴, որը ենթադրում է հարգանք ինքն իր նկատմամբ, շրջապատի հարգանքը, ճանաչում և պահանջվածության զգացում, ինչպես նաև հեղինակության, վարկանիշի ու փառքի ձգտում: Վախկոտ ու ալարկոտ լինելը բնավ էլ չի նշանակում զերծ լինել այս հատկանիշներից: Թերևս հենց ինքնահաստատման ու հարգանք վաստակելու բնագրային ձգտումն է Նազարին մղում լաթի կտորի վրա իր քաջագործությունն անմահացնող տողեր գրել տալու:

Անհաղթ հերոս Քաջըն Նազար, Որ մին գարկի ջարդի հազար:

Այստեղ արդեն գործում է PR-ի 12 կանոններից մեկը. հաղթող է համարվում նա, ով առաջինն է հայտարարում իր հաղթանակի մասին¹⁵: Չեղած հաղթանակի մասին ազդարարելը հետագայում իսկապես մեծ արդյունքների է հանգեցնում:

Ուշադրություն դարձնենք այն փաստին, որ Նազար անունը ստանում է երեք, միանգամայն դրական բնորոշում՝ անհաղթ, հերոս և քաջ, ինչն էլ մոգական ազդեցություն է ունենում հարսանքավորների վրա: Վերևում նշել ենք, որ տերտերի՝ Նազարին տված պատվանունը պատահական չէր, թեպետ ծաղրանքով, բայց, այնուամենայնիվ, տերտերը նրան տվեց այն պատվանունը, որը հարգի էր հին ժամանակներում, ընդունելի ու տպավորություն կգործեր միջավայրի վրա: Թեպետ դա արվեց ենթագիտակցորեն, բայց թելադրված էր հասարակական պահանջմունքներով: Եվ այսպես, մեր «PR օբյեկտը» հանրությանը (հարսանքավորներին) ներկայանում է արդեն հարգանքի արժանի ու տպավորիչ պատվանունով: Ժամանակակից տերմինաբանությամբ՝ բրենդն արդեն անվանում ունի՝ Քաջ Նազար:

PR-ի առանցքային հասկացություններից է օբյեկտի դիրքավորումը, որը անհատի կամ ապրանքի այն հատկանիշների ընդգծումն է, որոնք առավել կարևոր են ընտրողների կամ սպառողների համար: Այս երևույթը

¹² Ս. Աղաջանյան, նշվ. աշխ., էջ 144:

¹³ Տե՛ս Ն. Աղբալյան, Ընտրանի, Եր., 2005, էջ 62:

¹⁴ Տե՛ս www.psychologos.ru

¹⁵ Տե՛ս **Королько В.** Основы Паблик Рилейшнз. М., 2006, էջ 23-24:

PR մասնագետ Վ. Շեյնովն անվանում է շահեկան դիրքավորում¹⁶, որի նպատակով հաճախ կիրառվում է օբյեկտի հերոսականացման հնարքը ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր առումներով¹⁷: Ընդ որում, ազդեցության թիրախը հերոսի արքետիպն է: Հեքիաթում *անհաղթ, հերոս, քաջ* հիմնաբառերը բնութագրում էին PR օբյեկտին և ուղղված էին նրա ֆիզիկական հերոսացմանը, ինչը բարձր էր գնահատվում հատկապես հին ժամանակներում: (Մեր օրերում ևս հաճախ կիրառվում են այնպիսի «պիտակային», ուշադրություն գրավող արտահայտություններ, ինչպիսիք են «առաջին», «ամենամեծ», «անզուգական», «ամենալավ» և այլն): Այսպիսով, արվեց առաջին քայլը. PR օբյեկտը՝ Նազարը, ճիշտ դիրքավորված, համապատասխան գրությամբ «պիտակավորված», մտնում է հարսանքատուն, որը պայմանականորեն կանվանենք ընտրազանգված: Նկատենք նաև, որ Նազարի ժամանակաշրջանում առավել գնահատելի էր ֆիզիկական հերոսականացումը, ավելին՝ պաշտամունք կար ֆիզիկական ուժի և բռնության նկատմամբ: Վ. Մեդինսկին, անդրադառնալով այս երևույթին, գրում է. «Հերոսի դաժանությունը պատկառանք էր ազդում մեր ...նախնիների վրա՝ ներշնչելով այն համոզմունքը, որ վերջինս նաև (որքան էլ որ դա անհեթեթ թվա - Հ. Գ.) իմաստուն ու արդարադատ է»¹⁸: Նույն տպավորությունն է թողնում նաև Նազարի դրոշակի գրությունը. 1000 ջարդելու մասին գիրը այնպես է ազդում սեղանակիցների վրա, «որ աշուղը, որ էնտեղ էր, ձեռաց մի երգ է հորինում ու երգում»: Ուշադրություն դարձնենք երգի երկրորդ մասին, երբ Նազարի ուժն ու քաջությունը գովաբանելուց հետո աշուղը շեշտում է նաև նրա արդար լինելու փաստը, երբ այդ մասին որևէ տեղ նշված չէր.

**Խեղճ տրկարին դու ապավեն,
Ազատ կանես ամեն ցավեն,
Մեզ կըփրկես անիրավեն...**

Հարսանքավորները հավատում են իրենց իսկ ստեղծած միֆին, քանի որ մարդիկ հաճույքով հավատում են այն բանին, ինչին ցանկանում են հավատալ (Հուլիոս Կեսար): Ավելին, հարսանքատանը նույնիսկ հայտնվում են մարդիկ, ովքեր իբր ճանաչում են Նազարին ու սկսում պատմել նրա քաջագործությունների մասին: «Առասպելը նախաձեռնողների վարքագծում կարելի է ցույց տալ սեփական շահի ակնկալիք. ով գիտի, թե «է-գուց-էլօր» ինչ կստանան Նազարից իրենց անմոռաց ակտիվության դիմաց: Եթե դա էլ չլինի, գոնե շրջապատի աչքում կամրապնդեն իրենց հարզը...»¹⁹, - նշում է Ս. Աղաջանյանը: Ընդունելով այս տեսակետը՝ հավելենք, որ այստեղ, թեպետ ինտուիտիվ, բայց գործում է PR-ում բավականին կիրառելի **միավորում** կամ **նույնականացում** մեթոդը. մարդիկ ցանկանում են կապեր տեսնել ուժեղների, հաջողակների ու հայտնի անձանց հետ: Հարսանքավորներից մի քանիսը դիմում են այս մեթոդին: Նրանք հայտարարում են, որ ճանաչում են Նազարին և սկսում են պատմել նրա քաջագործությունների մասին, ինչը ոչ միայն բարձրացնում է նրանց

¹⁶ Տե՛ս **Шейнов В. П.** Пиар «белый» и «черный». М.–Минск, 2005, էջ 246:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 245:

¹⁸ **Мединский В.л.**, նշվ. աշխ., էջ 65:

¹⁹ **Ս. Աղաջանյան**, նշվ. աշխ., էջ 151:

վարկը մյուսների աչքին, այլև հաստատում է դրոշակի վրայի գրությունը:

Չեքիաթի բոլոր ուսումնասիրողները առանձնահատուկ ուշադրություն են դարձրել հարսանքատան տեսարանին: Նրանք միակարծիք են այն հարցում, որ Նազարի «հաղթանակների» մեջ վճռական դերը պատկանում է միջավայրին, շրջապատի մարդկանց և ոչ թե հերոսին: Լ. Չախվերդյանը Նազարի թագավորությունն անվանում է մարդկային հիմնարկություն վրա բարձրացող թագավորություն²⁰, իսկ հարսանքավորների պահվածքը՝ համաժողովրդական համաճարակ-հիմնարացման²¹ հետևանք: «Թունանյանի մեկնաբանության մեխը հարսանքատան պատկերն է, որ հիմնարկության համաճարակի, բազմության հիմնարացման թեմայի բացահայտումն է»²², - հավելում է Լ. Չախվերդյանը: Ս. Աղաբաբյանը հարսանքավորների պահվածքը բնութագրում է որպես «ամբոխային հոգեբանություն»²³: Բնավ էլ պատահական չէ հարսանքատան տեսարանը հեքիաթի «մեխը» անվանելը, քանի որ հենց այս դրվագն է հիմք դնում Նազարի ճանաչմանը, վերելքին ու փառքին: Ընդ որում, ինչպես վկայում է Ն. Աղբալյանը, «Թունանյանը հեքիաթի մշակության ժամանակ մտցրել է մի քանի մանրամասներ հարսանիքի տեսարանում»²⁴: Փաստորեն, բանաստեղծի համար ևս այս տեսարանը առանցքային է եղել: Նա ոչ միայն հրաշալի գիտակցել է միջավայրի դերը, այլև մեծապես կարևորել է խոսքի զորավոր ուժը անձի ճանաչման հարցում: Պատահական չէ, որ նա այս թեմային անդրադարձել է նաև «Չախվախ թագավորն» ու «Ամբան Յուռին» հեքիաթներում, որտեղ երկու հերոսին էլ բարձրացնում, բախտի են արժանացնում նրանց մտերիմների գովքն ու փառաբանությունը:

Վերևում նշեցինք, որ հանրության քողարկված կառավարման երկրորդ օղակը ազդեցության թիրախներն ու խայծերն են: Դրանք թիրախային լսարանի անձնային այն առանձնահատկությունները, թուլությունները, պահանջումներն ու ցանկություններն են, որոնց վրա ներգործելով՝ նախաձեռնողը խթանում է նրան՝ ընդունելու անհրաժեշտ որոշումը: Խայծերը այն հատկություններն են, որոնք գրավում են թիրախի ուշադրությունը, արթնացնում են նրա հետաքրքրությունը իր համար շահեկան գործի նկատմամբ²⁵: Այս պարագայում ազդեցության թիրախը հարսանքավորների՝ ինչ-որ առանձնահատուկ, բացառիկ երևույթի նկատմամբ ձգտումն է, ինչպես իրավացիորեն նկատում է Ս. Աղաջանյանը, «հերոսականությունից զուրկ և հերոսականության կարոտ հասարակությունը կարիք ունի առասպելի»²⁶: Մասնագիտական գրականության մեջ քաղաքական գործչին ներկայացվող պահանջներից կարևորվում է այն, որ գործիչը հերոսական իմիջ ունենա: «Չերոս-ահա հաղթող քաղաքագետի ամենավառ բնութագիրը: Նրա անունը կապում են նախորդող ձեռքբերումների՝ նվաճումների և հաղթանակների հետ»²⁷, - գրում է Վ. Շեյնովը՝ հավելելով, որ գործչին

²⁰ Տե՛ս Լ. Չախվերդյան, նշվ. աշխ., էջ 400:

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 405:

²² Նույն տեղում, էջ 401:

²³ «Չայ մոր գրականության պատմություն», հ. V, էջ 333:

²⁴ Ն. Աղբալյան, նշվ. աշխ., էջ 61:

²⁵ Տե՛ս Շեյնով Բ. Ս., նշվ. աշխ., էջ 11-12:

²⁶ Ս. Աղաջանյան, նշվ. աշխ., էջ 150:

²⁷ Շեյնով Բ. Ս., նշվ. աշխ., էջ 330-331:

պետք է վերագրվի նաև հայրական գծեր: «Այս պահանջը առաջնորդության հայացքների վերաբերյալ ֆրեյդիստական հայացքների արտացոլումն է, որը դժվար է հերքել: Ըստ Ֆրեյդի՝ զանգվածը պարզապես կարիք ունի առաջնորդի, ինչպես ընտանիքը կարիք ունի հեղինակավոր հոր: Հայրը պաշտպանված լինելու, կայունության գրավականն է: Նա կարող է ստանձնել պատասխանատվությունը: Նա թույլ չի տա ընտանիքին վիրավորել: Նա խիստ է, կարող է պատժել, սակայն կպաշտպանի: Դատողությունների տրամաբանությունը մոտավորապես այս է: Մեր ժողովրդի մեջ մշտապես եղել է հավատը առ այն, որ կգա նոր, ավելի լավ թագավոր (գլխավոր քարտուղար, նախագահ, նահանգապետ), և բոլորի համար լավ կլինի: Նա՛ հայրը, և՛ կպաշտպանի, և՛ տեր կկանգնի, և՛ կքչի թշնամական ուժերին, վատ իշխանավորներին, կռուսկացված չինովնիկներին, և՛ կարգուկանոն կհաստատի: Այս կայուն սոցիալական սպասումներն էլ հենց դարձել են իմիջի հանդեպ կարևորագույն պահանջներից մեկի հիմքը»²⁸:

Հեքիաթում խայծը Նազարի «հերոսական» կերպարն է, որը գրավում է թիրախային լսարանի (հարսանքավորների) ուշադրությունը, արթնացնում նրա հետաքրքրությունը: Հարսանքավորները, «իրենց ձայնը տալով» Նազարին, ոչ միայն նպաստում են դեպքերի հետագա զարգացմանը, այլև նախապատրաստում նրա վերելքը: Ուստի անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հենց հարսանքավորների վարքին ու հոգեբանական առանձնահատկություններին: Նախ փորձենք պարզել՝ հարսանքավորների խումբը ժողովրդի կայուն, կազմակերպված մի հատված էր, թե՞ ամբոխ: Չկա այն բանի հստակ սահմանումը, թե երբ է մարդկանց խումբը (հանրությունը, ժողովուրդը, հարսանքավորները) վերածվում ամբոխի²⁹: Ժողովուրդ-ամբոխ տարբերակմանն ու առանձնահատկություններին անդրադարձել է նաև Թումանյանը հրապարակախոսական մի շարք հոդվածներում: «...Շատերը ժողովուրդն ու ամբոխը շփոթում են իրար հետ,- գրում է նա,- սրանք իրար հակառակ բաներ են: Ժողովուրդն իմաստուն է, ամբոխը հիմար: Ժողովուրդը ծանր է, ամբոխը թեթև: Ժողովուրդը մեծահոգի ու բարի է, ամբոխը դյուրագրգիռ, վտանգավոր, չար»³⁰: Ըստ այսմ՝ պարզ է դառնում, որ Թումանյանը հարսանքավորներին վերագրել է ամբոխին բնորոշ հատկանիշներ: Նախ՝ «հարսանքավորները գեղջկական պարտադիր հետաքրքրությամբ» ցանկանում են իմանալ անձանոթի ով լինելը: Սեղանի գլխին նստած տերտերը կարդում է դրոշակի գրությունը և «զարհուրած հայտնում իր կողքի նստածին, սա էլ՝ իր կողքի նստածին, սա էլ՝ երրորդին, ...ու ամբողջ հարսանքատունը դրմբում է թե՛ բա չես ասիլ, նորեկ դոնախն է ինքը՝ Անհաղթ հերոս Քաջըն Նազար, Որ մին գարկի՝ ջարդի հազար»³¹:

Հայտնի է, որ ամբոխի մեջ մարդու վարքը փոխվում է, նա իրեն պահում է բոլորովին այլ կերպ, քան երբ մենակ է: Նույնիսկ ամենավառ անհատականությունն ունեցող անձը ենթարկվում է ամբոխի հիպնոսող ազդեցությանը, և որքան շատ են ունկնդիրները, այնքան արագ են նրանք վերածվում զանգվածի³²:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 14:

³⁰ **Յ. Թումանյան**, ԵԼԺ, 10 հատորով, հ. 7, եր., 1995, էջ 506:

³¹ Նույն տեղում, հ. 5, էջ 239:

³² Տե՛ս **Шейнов В. П.**, մշվ. աշխ., էջ 14:

Հաշված թուպենների ընթացքում, առանց որևէ փաստ ճշտելու, պարզապես գրությունը կարդալով, մեկը մյուսի խոսքով ներշնչված, հարսանքավորներն ընդունում ու հավատում են, որ իրենց հյուրը մի երևելի քաջ է: Ըստ ֆրանսիացի գիտնական, սոցիալական հոգեբան Գյուստավ Լեբոնի՝ «Ամբոխի կազմում անհատն ընկնում է նրա ներշնչումների և կրքերի ազդեցության տակ, նրանում ուժեղանում են բնագոյային, իռացիոնալ ուժերը: Ամբոխը չի դատում իրական փաստերով, այլ իրական է համարում այն ամենը, ինչ ստեղծվել է իր մտածողությամբ»³³: Հեքիաթում մենք հանդիպում ենք հոգեբանական հենց այս վիճակին, այսինքն՝ հարսանքավորները դրսևորում են ամբոխին հատուկ վարք, և Լ. Հախվերդյանի բնորոշումները՝ «հարբած ոգևորություն», «հիմարության վարակ» և այլն, ոչ այլ ինչ են, եթե ոչ ամբոխին բնորոշող իմպուլսիվ և բնագոյային վարքի բնութագրումներ:

Հարսանքատանը, իհարկե, գտնվում են նաև սթափ մտածողներ, ովքեր հարցնում են. «Հապա ինչպե՞ս է, որ էսպես մարդը հետը ոչ մի ծառաչունի», կամ՝ «...ինչպե՞ս է, որ մի կարգին թուր չունի, էս ժանգոտ երկաթի կտորն է մեջքին կապել»: «Բանականության ծայրն իսկույն լռեցվում է, քանի որ ամբոխում գիտակից անհատականությունը անհետանում է,- շարունակում է Գ. Լեբոնը,- նրանք ժամանակավորապես դադարում են անհատականություններ լինելուց, չեն մտածում իրենց գործողությունների հնարավոր հետևանքների մասին»³⁴: Այսպիսով, ամբոխը, Նազարին ընդունելով խանդավառությանը, նրա նկատմամբ դրսևորում է որոշակի ատրակցիա, որը քողարկված կառավարման երրորդ փուլն է: Այն նպատակ ունի ստեղծելու պայմաններ թիրախային լսարանի կողմից PR օբյեկտին դրականորեն ընկալելու համար:

Տեղին է հիշել PR-ի 12 կանոններից ևս մեկը. «Ցանցից ընտրել մի անվճար հիմարի և սկսել լուրջ վերաբերվել նրան: Դա հնարավորություն կտա դիտելու վերջինիս որպես կարևոր խաղացողի»³⁵: Ինչո՞վ Նազարը «անվճար հիմար» չէ: Թեև պետք է նշել, որ բավականաչափ խորամանկ է, մի հատկություն, որը դրսևորվեց հենց հարսանքատան տեսարանից: «Խորամանկությունը աստիճանաբար բացահայտվում է և վաղ թե ուշ շրջվում հենց խորամանկի դեմ: Այդ պատճառով էլ խորամանկությունը ստիպված է թաքնվել»³⁶: Նազարն իր էությունը թաքցնում է լռելով, միայն ժամանակ առ ժամանակ ինչ-որ ժեստերով արտահայտում է իր հույզերն ու զգացումները, որոնք, սակայն, միջավայրում դարձյալ «թարգմանվում» են հոգուտ նրա: Հետաքրքիր է էդ. Ջրբաշյանի դիտարկումը. «Թունանյանի գրեթե բոլոր արձակ երկերի մեջ շատ մեծ է հերոսների ուղղակի խոսքի տեսակարար կշիռը»³⁷: Ջարմանալի կերպով այս ստեղծագործության մեջ լռակյաց է հենց գլխավոր հերոսը, փոխարենը երկրորդական կերպարներն են խոսում՝ նախապատրաստելով Նազարի վերելքն ու ամեն կերպ նպաստելով նրա հաղթարշավին: «...Նազարի բոլոր «հաղթանակների» մեջ վճռական դերը պատկանում է միջավայրին, շրջապատի մարդկանց և

³³ Лебон Г. Психология народов и масс. royallib.ru

³⁴ Նույն տեղում:

³⁵ Королько В., նշվ. աշխ., էջ 24:

³⁶ Лихачев Д. С. Письма о добром и прекрасном. Ер., 2006, с. 15.

³⁷ Յ. Թունանյան, ԵԼԺ, հ. 5, էջ 732:

ոչ թե հերոսին: Նրանք են հորինում ու տարածում «անհաղթ հերոսի», ժողովրդի և երկրի համար ամեն մի փորձության ընդառաջ գնացող մարդու առասպելը, թեև դրա համար ոչ մի իրական հիմք չկար: Ինքը՝ Նազարը, բավական պասիվ է դեպքերի մեջ, նա ոչ մի հատուկ ջանք չի գործադրում բարձրանալու, հռչակվելու համար, չի էլ ձգտում թաքցնել իր իսկական էությունը: Նա միայն հաճույքով օգտվում է կատարվածի արդյունքներից: Եվ, այնուամենայնիվ, հանգամանքներն առնում են նրան իրենց ուսերին ու բարձրացնում հասարակական աստիճաններով: Ստացվում է այնպես, որ ամենից անարժան մարդը, ինքնաբերաբար, ակամա, պատրաստի ստանում է բոլոր իրավունքներն ու բարիքները»³⁸: Սակայն չպետք է մոռանալ կարևոր մի հանգամանք՝ Նազարի դրոշակի գրությունը, որը մոգական ազդեցություն է ունենում հարսանքավորների վրա: Հարկ է նկատի ունենալ ևս մեկ էական փաստ՝ հավատն ու վստահությունը, հին ժամանակներում նաև պաշտամունքը գրավոր խոսքի նկատմամբ և դրա մեծ ազդեցությունը հասարակական գիտակցության վրա: Ս. Աղաջանյանն իրավացիորեն նշում է. «...Հարկ է չանտեսել հեքիաթի մեկնաբանությունների մեջ ամրակայված այն մոտեցումը, ըստ որի Նազարի կյանքում ճակատագրական փոփոխությունների կարևորագույն նախադրյալը տերտերի երկտողն է»³⁹:

Համապատասխան գրականության մեջ ընտրական տեխնոլոգիաների շարքում առանձնացվում է տպագիր խոսքի մեծ ազդեցությունը, մասնավորապես կարևորվում է թռուցիկների, պաստառների, թերթիկների դերը բոլոր ժամանակներում: Հեքիաթում դրոշակի երկտողը կարելի է համեմատել թերթիկների, թռուցիկների հետ և նույնիսկ դիտել որպես քաղաքական տեխնոլոգիա: «Թերթիկների օգնությամբ ընտրողները ծանոթանում են թեկնածուի կենսագրությանը, ծրագրերին: Կենսագրությունը ոչ այնքան միջոց է թեկնածուի հետ ընտրողների ծանոթանալուն, որքան ատրակցիայի միջոց նրա նկատմամբ»⁴⁰, - գրում է Վ. Շեյնովը: Իսկ ձգողականության կամ համակրանքի ձևավորման համար մեծ նշանակություն ունի թեկնածուի անցած ուղին: Դրոշակի «անհաղթ», «հերոս», «քաջ» հիմնաբառերից բացի, «մին զարկի, ջարդի հազարը» արդեն դրոշակի պատկերացում է տալիս նրա անցած «հերոսական» ուղու մասին: Այն նույնիսկ համապատասխանում է նմանօրինակ թերթիկներին ներկայացվող պահանջներին. «Տեքստը պետք է հասկանալի լինի ընտրողների մեծ մասին, նույնիսկ 6-րդ դասարանի կրթություն ունեցողներին և չպարունակի ավելորդ որևէ արտահայտություն»⁴¹:

Այսպիսով, դրոշակ-«տեղեկատվական թերթիկը» համապատասխան բարյացակամ վերաբերմունք է առաջացնում Նազար-թեկնածուի նկատմամբ՝ նախապատրաստելով դեպքերի հետագա զարգացումը: Եվ թեպետ «բոլոր շրջադարձային պահերին Նազարը բացահայտորեն դրսևորում է իր առասպելական վախկոտությունը, անշնորհքությունը», այնուհանդերձ «...մարդիկ ոչ միայն չեն տեսնում դա, այլ «տեսնում են» ճիշտ հակառակը՝ հերոսի նորանոր «քաջագործությունները», և շտապում են ավելի բարձ-

³⁸ «Հայ նոր գրականության պատմություն», հ. V, էջ 333:

³⁹ Ս. Աղաջանյան, նշվ. աշխ., էջ 145:

⁴⁰ Шейнов В. П., նշվ. աշխ., էջ 291:

⁴¹ Նույն տեղում, էջ 293:

րացնել նրան»⁴²: Բանն այն է, որ վճռորոշ նշանակություն ունի տվյալ անձի կամ երևույթի մասին հաղորդված առաջին տեղեկությունը. հաջող արդյունքի համար չափազանց կարևոր է, որ այն դրական կողմերով ներկայացնի PR օբյեկտին: Այստեղ գործում է առաջին դրական կարծիքի ֆե-նոմենը. «PR- ում շատ կարևոր է, որ առաջին հրապարակումը լինի բար-յացական: Այսպիսին է մարդկային խառնվածքը. հաջորդող հրապարա-կումները ավելի քիչ ազդեցություն են ունենում»⁴³: Դրանից բացի, ինչպես նկատում է Ս. Աղաջանյանը, «Անգրագետ ու թերևս դրա պատճառով գրի խորհրդավոր, պաշտամունքային ընկալմամբ առանձնացող նահապետա-կան-ավանդական նիստուկացի այս հանրությունը չի կարող անտարբեր լինել այն արձանագիր տեքստի նկատմամբ, որից զարհուրում է իրենց մի-ջից գիր իմացող միակ մարդն անգամ»⁴⁴:

«Ընտրազանգվածի» ջերմ վերաբերմունքին արժանանալուց հետո Նազարը շարունակում է իր ճանապարհը: Սակայն նրանից առաջ են ընկ-նում ու գործողությունների բարեհաջող ընթացքին նպաստում են նրա մա-սին տարածված լուրերը: Մասնագիտական գրականության մեջ նշվում են չվերահսկվող և արդյունավետ տեղեկատվություն կամ ասեկոսեներ տա-րածելու մի շարք միջոցներ: Դրանք կոչվում են նաև PR-ի ստանդարտ գործիքներ: Դրանցից է «աներևույթ ռադիոն կամ փչացած հեռախոսը», երբ լուրերը տարածվում են տարերայնորեն՝ ապահովելով համակիրների մեծ բանակ: Ի դեպ, այս գործիքը PR-ի 30 ստանդարտ գործիքների շար-քում գտնվում է առաջին տեղում և հեքիաթում էլ կիրառվում է հոգուտ Քաջ Նազարի: Հեքիաթի հաջորդ հատվածներում արդեն մեր PR օբյեկտը քաղում է այս հնարքի պտուղները. հսկաները, որ լսել էին հարսանքավոր-ների տարածած լուրը, խոնարհվում են նրա առջև, տանում իրենց ամբողջ ու «էնքան են խոսում նրա քաջագործություններից, էնքան են գովում, որ իրենց գեղեցիկ քույրը սիրահարվում է վրեն»: Նույն կերպ, թշնամու զոր-քերը, որ «առաջուց համբավը լսել էին», տեսնելով գերանաչափ ճյուղը գրկած Նազարին, փախչում են: Իսկ ժողովուրդը «առքով-փառքով էլ բե-րում, հռչակում են իրենց թագավոր ու բազմեցնում թագավորի թախտին»: Սրանով ավարտին է հասցվում քողարկված կառավարման մոդելի վերջին օղակը՝ նախաձեռնողի հաղթանակը: Միայն այստեղ, ինչպես արդեն նշել ենք, նախաձեռնության հեղինակը հիմնականում հանրությունն էր, հերոսի միջավայրը, որի գործողությունները սկզբից մինչև վերջ լավագույնս ար-տացուցում են քողարկված կառավարման մոդելի բոլոր օղակները: Նազա-րը, որպես սուբյեկտ, նախաձեռնություն է ցուցաբերում միայն երկրորդ փուլում՝ գրել տալով ճակատագրական երկտողը, որի միջոցով էլ գործի են դրվում հաջորդ օղակները, որոնցում արդեն մեծ է միջավայրի դերը:

Ամփոփելով նշենք, որ «Քաջ Նազարը» հեքիաթը լինելով բազմակող-մանիորեն հետազոտված ստեղծագործություն, չափազանց ուշագրավ նյութ է նաև PR տեխնոլոգիաների կիրառման դիտանկյունից քննելու ա-ռունով: Այստեղ հրաշալիորեն ներկայացված են հանրության քողարկված

⁴² «Հայ նոր գրականության պատմություն», հ. V, էջ 333:

⁴³ Шейнов В. П., նշվ. աշխ., էջ 42:

⁴⁴ Ս. Աղաջանյան, նշվ. աշխ., էջ 149:

կառավարման մոդելի ձևերը և դրսևորումները: Հատկապես կարևոր տեղ է հատկացվում անհատի հանիրավի հերոսացմանն ու բարձրացմանը և դրանում ամբողջի դերին:

Բանալի բառեր – *PR-օբյեկտ, ազդեցության թիրախ, քողարկված կառավարում, տեղեկատվության հայթայթում, ատրակցիա, առաջին կարծիք, օբյեկտի դիրքավորում, հնարք, միավորում, նույնականացում, չվերահսկվող տեղեկատվություն*

ГАЯНЕ АКОПЯН – *Модель скрытного управления обществом (PR) в сказке О. Туманяна «Храбрый Назар».* – Сказка О. Туманяна проанализирована в статье с точки зрения применения PR-технологий. Раскрываются пять отразившихся в ней элементов модели неявного управления обществом. В статье утверждается, что в основе сказки лежит механизм, благодаря которому во все времена (в старину, возможно, на примитивном уровне, а в наши дни системно и повсеместно) действуют PR-структуры. Подчеркивается также роль среды, которая невольно способствует успеху замаскированного управления обществом.

Ключевые слова: *PR-объект, мишень воздействия, скрытное управление, сбор информации, аттракция, первоначальное мнение, позиционирование объекта, приём, отождествление, неконтролируемая информация*

GAYANE HAKOBYAN – *Disguised Public Management Model (PR) in the Fairy Tale “Nazar the Brave” by H. Tumanyan.* – The author of the article has discussed H. Tumanyan’s work from the aspect of using PR technologies revealing the five links of disguised public management model, which are reflected in the fairy tale. The author believes that the mechanism which is on the basis of the fairy tale, perhaps randomly in the past, but nowadays is put to practice in a systematized and very successful way by PR structures. The author highlights the role of the environment which in its turn intuitively contributes to the realization of the disguised public management model.

Key words: *PR-object, a target of influence, disguised management, getting information, attraction, first opinion, object positioning, trick, unification, identification, uncontrolled information*

ԲԱՅԵՐԻ ՍԵՌԱՅԻՆ ԱՆՅՈՒՄՆԵՐ ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆՈՒՄ

ԼԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Բոլոր կենդանի լեզուները, պայմանավորված լեզվական և արտալեզվական գործոններով, պարբերաբար ենթարկվում են ինչ-ինչ փոփոխությունների, որոնք արտահայտվում են լեզվի տարբեր համակարգերում: Եվ ժամանակ առ ժամանակ ոչ միայն անհրաժեշտություն է առաջանում դրանց անդրադառնալու որպես լեզվական շեղումների, այլև ինչ-որ առումով պարտադիր են դառնում որակական այդ փոփոխությունների դիտարկումը, համակարգային կանոնարկումն ու ամրագրումը: Ժամանակակից հայոց լեզվի տարբեր համակարգերում (հոլովական, խոնարհման և այլն) նկատվող տեղաշարժերը դիտարկվել են լեզվաբանական տարբեր աշխատություններում¹:

Մեր քննության նյութը բայի խնդրառական համակարգում վերջին 1-2 տասնամյակներում կատարվող տեղաշարժերն են, իսկ ավելի որոշակի՝ մի քանի **բայերի սեռային անցումները**², որոնք այսօր գրական լեզվի գործող կանոնից զգալիորեն շեղված և զարգացման այլ ընթացք ստացած ձևեր են: Հայ քերականագիտության մեջ խնդրին տարբեր առիթներով անդրադարձել են տակավին անցյալ դարի կեսերից, տրվել են տարաբնույթ մեկնաբանություններ³, որոնց ըստ անհրաժեշտության կանդրադառնանք:

Հայտնի է, որ քերականական համակարգը համեմատաբար կայուն է և շատ դանդաղ է ենթարկվում փոփոխությունների. հաճախ քերականական մի ձևից մյուսի անցումը կատարվում է դարի (եթե ոչ դարերի) ընթացքում: Այսուհանդերձ, համակարգի կայունությունը չի ենթադրում անշարժություն, և ամենատարբեր գործոններով պայմանավորված՝ լեզվական նոր որակներ մուտք են գործում նաև քերականություն՝ վերածվելով կա-

¹ Արդի գրական հայերենի ձևաբանական համակարգի տեղաշարժերը քննվում են Լ. Խաչատրյանի «Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ» (Եր., 1985) աշխատությունում: Արտասանական և խոնարհման համակարգի տեղաշարժերը մանրամասն ներկայացվում են Յու. Ավետիսյանի «Տեղաշարժեր արդի գրական հայերենում» (Եր., 2011) ուսումնասիրության մեջ:

² Հոդվածում չենք անդրադառնում խնդրառական այն դրսևորումներին, որոնք՝ **1.** ակնհայտ սխալ են, ինչպես, օրինակ՝ Կծանոթացնեն գործերի *ընթացքը*, թշնամին **գրոհում է քաղաքը** և այլն, **2.** կրկնասեռ բայերին բնորոշ խնդրառություն են, ինչպես՝ **սովորել դասը, սովորել կլիմային, լավ ապրել**, անոռանալի *օրեր ապրել, տիրել* (գրավել) *աշխարհամասը, լռություն տիրել* և այլն, **3.** բայի՝ միայն համատեքստում փոխաբերական գործածությամբ պայմանավորված խնդրառություն են՝ *լաց լացել, երգ ճոնչալ, քայլ քայլել, վիշտ կարկաչել, կարոտներ հեկեկալ* և այլն:

³ Տես **Մ. Արեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, **Ա. Աբրահամյան**, Բայը ժամանակակից հայերենում, գիրք I, Եր., 1962, **Մ. Ասատրյան**, Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Եր., 1959, **Գ. Ջահուկյան**, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, **Հ. Հարությունյան**, Կառավարումը ժամանակակից հայերենում, Եր., 1983, և այլք:

նունական ձևերի: Այս առումով հետաքրքիր անցումներ են նկատվում խնդրառության մեջ:

Խնդրառական (սեռային) տեղաշարժերը պայմանավորող գործոնները տարբեր են՝ **բազմիմաստություն, իմաստի փոփոխություն, լեզվի տարբերակային ձևերի և օտար լեզուների ազդեցություն, քերականական ձևերի իմաստային առնչակցություն, սխալակազմություն, տարածվածություն հանրային գործունեության բոլոր ոլորտներում, խոսքի տնտեսման միտում, համաբանություն** և այլն: Եվ սրանք լեզվի զարգացման տարբեր փուլերում այս կամ այն չափով են ներգործում լեզվամիավորների որակական անցումների վրա (թեև հաճախ թվարկված գործոններից մի քանիսը միասնաբար են դառնում տեղաշարժի պատճառ):

Խնդրառական տեղաշարժերը բնորոշ էին մեր լեզվի դեռևս նախորդ փուլերին. գրաբարից միջին հայերեն անցման ընթացքում բազմաթիվ բայեր կրել են սեռային փոփոխություններ: Պատճառները տարբեր են: Լեզվաբան Վ. Առաքելյանը նշում է, որ գրաբարում սեռային անցումները հիմնականում **իմաստային փոփոխության** հետևանք են: Օրինակ՝ անդրադառնալով գրաբարի **ե** խոնարհման ներգործական սեռի մի քանի բայերի՝ **բուրեմ, գայթակղեմ, խոտորեմ, խուճապեմ, շտապեմ, զիջեմ, ազդեմ, աշխատեմ** և այլն, գրում է. «Գրաբարի զարգացման ընթացքում **ե** խոնարհման ներգործական բայերի մի մասը սկսում է չեզոք դառնալ: Այս չեզոքացումը կատարվում է ամենից առաջ այն բայերի հետ, որոնք գործողության իմաստի հետ համատեղում են նաև շարժման դրության, վիճակի գաղափարը: Սկզբնապես նրանց մեջ արդեն չեզոք բայերի նախադրյալներ առկա են եղել... Հետագայում սեռացուցիչի թուլացման հետևանքով դրանք աստիճանաբար շարահյուսական նոր գործածություն են ձեռք բերում, այսինքն՝ կիրառվում են չեզոք բայերի խնդրառությամբ»⁴: Կամ՝ Ռ. Իշխանյանը նշում է, որ նախկինում **ծեռնարկել** բայը չեզոք սեռից բաղադրիչների իմաստի մթազմման պատճառով դարձել է ներգործական: Այն գրաբարում գործածվել է «**ծեռք գցել**» նշանակությամբ և կապվել միայն տրական հոլովով դրված լրացման հետ: Իսկ հետագայում բաղադրիչների այդպիսի ըմբռնումը չի գիտակցվել, որի պատճառով փոխվել է նաև խնդրառությունը, և ներկայումս բայը դարձել է անցողական՝ գործածվելով ուղղական հոլովով դրված լրացումների հետ⁵, ինչպես՝ **ծեռնարկել** նոր *գործ, ձեռնարկել* գրքի *հրատարակումը* և այլն:

Համանման փոփոխության հետևանք է **ունկնդրել** բայի անցումը **չեզոքից ներգործականի**: Գրաբարում և լեզվի զարգացման հետագա փուլերում ընդհանրապես այս բայը գործածվել է «**ականջ դնել**» իմաստով և դարձյալ հանդես եկել միայն տրական հոլովով դրված խնդրի հետ, ինչպես՝ «...**ունկն դնել** այսուիկ *բանին*» (Հ. Տերզնցի), «Հովի *գրույցին ունկն դնելով*» (Ավ. Իսահակյան), բայց՝ **ունկնդրել են** *երեխաներին, երգը,*

⁴ Վ. Առաքելյան, Սեռի քերականական կարգը և բայածանցները գրաբարում, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1980, № 2, էջ 73-74:

⁵ Տե՛ս Ռ. Իշխանյան, Բայի սեռի կարգը արդի հայերենում, «Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի տեղեկագիր. հասարակական գիտություններ», Եր., 1959, № 11-12, էջ 79:

գրույցը: Հարադրականից համադրական անցումը աստիճանաբար թուլացրել է բաղադրիչների վերը նշված ընկալումը և, ըստ էության, ամրապնդվել է **ունկնդրել** բային գրեթե նույնանիշ **լսել** բայի խնդրառությունը: Սրանով պայմանավորված՝ տեղի է ունեցել նաև սեռային անցում չեզոքից ներգործականի: Արդի արևելահայերենում նշված երկու բայերի սեռային անցումը վերջնական է, և եթե **ունկնդրել երգին** կամ **ծեռնարկել գործի** կապակցությունները անցյալ դարի կեսերին ընկալվում էին որպես խնդրառական տարբերակներ, այսօր արդեն պատկերն այլ է: Վստահ կարող ենք ասել, որ այս ձևերը հնացած են, գրեթե անգործածական, ինչն⁶ ոչ, նաև սխալ խնդրառությամբ կառույցներ են:

Ինչպես նշեցինք, գրաբարի և միջին հայերենի շրջանում սեռային անցումները մեծ մասամբ **բառիմաստի** փոփոխության հետևանք են, և սեռի խնդրի **միակերպ** արտահայտությունը չի ազդում սեռային փոփոխության վրա: Այս հանգամանքը հարկ է հատուկ շեշտել, նաև մի քանի խոսքով անդրադառնալ դրան, որովհետև խնդրառական տեղաշարժերը պայմանավորող գործոնները ժամանակակից հայերենում գրաբարի համեմատությամբ փոքր-ինչ այլ են:

Հայտնի է, որ գրաբարում **բայ+ուղիղ խնդիր** հարաբերության մեջ չկա **անծի** և **իրի** քերականական տարբերակում, ինչպես՝ «Եւ անդէն թագաւոր ի ներքն կոչեցեալ **զդայրապետս...**» (Փավստոս Բուզանդ, V դ.), «Եւ թագաւորն սպառազինէ **զգօրսն...**» (Սեբեոս, VII դ.), «...մտին ի քաղաքն և առեալ **զգերին** և **զկապուտ** զքաղաքին, ելին ի տեղուղէն» (Արիստակես Լաստիվերցի, XI դ.): Կարծիք կա, որ անծի և իրի քերականական տարբերակումը սկսվում է 18-րդ դարի առաջին կեսերից⁶, սակայն դրա սաղմերը նկատվում են դեռևս 15-17-րդ դդ. գրավոր աղբյուրներում, որոնցում անծի առման ուղիղ խնդրի տրականով արտահայտությունները, մեծ մասամբ զիջելով ուղղականաձև հայցականի կիրառություններին, գործածվում են դրանց հետ կողք կողքի, ինչպես՝ «զԱստուած կ'ողորմի ամէն **ղարիպի**, ...**զսուրբն** քեզ եղբայր շինէ ու **զիրեշտակքն** արա սիրելի» (Մկրտիչ Նաղաշ, XV դ.)» և այլն⁷:

18-րդ դարի երկրորդ կեսից հստակ տարբերակվող անծի և իրի առումները, իսկ ավելի ստույգ՝ դրանց քերականական արտահայտությունները, այսօր արդեն զգալի ազդեցություն ունեն **բայի սեռային անցումների վրա**: Այլ կերպ ասած՝ գրաբարի համեմատությամբ արդի հայերենում խնդրառական տեղաշարժերի վրա մեծացել է հատկապես քերականական տարբեր ձևերի **իմաստային նույնության** և խոսողի **վերաբերմունքի ներգործման դերը**: Ներկայումս շարժը կատարվում է առավելապես **բայ + ուղղական հոլովով դրված ուղիղ խնդիր** և **բայ + տրական հոլովով դրված անուղղակի խնդիր** հարաբերությունների տիրույթում⁸:

⁶ Տե՛ս **Հ. Պետրոսյան**, Գոյականի առումները հայերենում, Եր., 1960, էջ 140-141:

⁷ Միջին հայերենում սեռային անցումները պայմանավորող լեզվական գործոնները առանձնակի չենք կարևորում: Ինչպես հայտնի է, այս փուլում հայերենը ներկայացնում է չկանոնարկված ու «խայտաբղետ» լեզվական համակարգ՝ հագեցած բարբառային տարբեր իրողություններով: Այս պատճառով քննվող խնդրի վերաբերյալ դժվար է հիմնավոր և որոշակի եզրահանգման գալ:

⁸ **Բայ+ուղիղ խնդիր** հարաբերությունը դիտարկելիս շեշտադրում ենք իրի առման ուղիղ խնդրի քերականական արտահայտությունը. ինքնին հասկանալի է, որ ան-

Հետաքրքիր է, որ իմաստափոխությանը պայմանավորված սեռային տեղաշարժեր վերջին 2 տասնամյակներում չեն նկատվում: Ինչ խոսք, նշված շրջանը գուցե փոքր ժամանակահատված է իմաստային և որակական ինչ-ինչ անցումների համար: Սակայն մյուս կողմից չենք կարող չնկատել, որ հենց նույն ժամանակահատվածում կենսապայմանների, բարձր տեխնոլոգիաների, տեղեկատվականության զգալի առաջընթացն ու արագ զարգացումները իրենց արտահայտությունն են գտնում լեզվում, մասնավորապես բառիմաստի փոփոխություններում (օրինակ՝ բազմաթիվ բառեր, ներլեզվական զանազան օրինաչափություններով պայմանավորված, ընդլայնել են իրենց իմաստային դաշտը՝ **պատուհան, մկնիկ, խողովակ, քաշել** և այլն): Այսուհանդերձ, ներկայացվելիք բայերը (**խանգարել, խոչընդոտել, կարոտել** և այլն) թեև սեռային (խնդրառական) ակնհայտ տեղաշարժի են ենթարկվել, սակայն ժամանակակից հայերենի բառարաններում արձանագրված իմաստ(ներ)ի համեմատությամբ իմաստային փոփոխություններ չեն կրել:

Թերևս բացառություն է **բավարարել** բայը, որը իմաստափոխության (իմաստի ընդլայնման) հետևանքով է ենթարկվել տեղաշարժի՝ վերածվելով կրկնասեռ բայի: Ըստ «ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ի՝ այս բայը ունի 2 իմաստ՝ **«1. Հերիք անել, 2. Գոհացնել, գոհացում տալ»**: Երկու իմաստներով էլ **ներգործական** է: Նույն բայի դիմաց էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում նշվում է 4 իմաստ՝ **«1. Կատարել, ի կատար ածել, 2. Բավականացնել, հերիք անել, 3. Գոհացնել, պահանջներին գոհացում տալ, 4. Հայթայթել, ապահովել, մատակարարել»**⁹: Չորս իմաստների դեպքում էլ բայը դարձյալ ներգործական է և գործածվում է ուղղական կամ տրական հոլովով դրված ուղիղ խնդրի հետ: Ի դեպ, այս առիթով Հ. Հարությունյանը նշում է, որ իմաստային տարբերության պատճառով հաճախ անտեսվում են խնդրառական տարբերությունները, և բայը գործածվում է կամ միայն ուղղական, կամ միայն տրական հոլովով դրված խնդրի հետ¹⁰: Սրանից բացի՝ այսօր **բավարարել** բայը սահմանափակ կիրառություններում, կարծում ենք, գործածվում է նաև **համապատասխանել** իմաստով (հաճախ գործածվում է հենց այդ բայի փոխարեն): Այս նշանակությամբ արդեն այն **չեզոք** է և կիրառվում է տրականով դրված հանգման անուղղակի խնդրի հետ, ինչպես՝ «Թուրքիան ստիպված է լինելու **բավարարել** ԵՄ անդամության **չափանիշներին**»¹¹: «ՀՀ-ն **չի բավարարում** ծրագրի **պահանջներին**» (www.operativ.am, 17.10.2013): «Դրանք **չեն բավարարում** մայրաքաղաքի կենտրոնը կանաչապատելու համար սահմանված **չափանիշներին**» (www.hetq.am, 20.07.2011): «Հայաստանը նախ և առաջ պետք է **բավարարել**

ծի առման ուղիղ խնդիրը և հանգման անուղղակի խնդիրը **ձևային** տարբերակվածություն չունեն:

Առավելապես առաջնորդվում ենք նշված երկու բառարաններով, քանի որ սրանք են դեռևս արտացոլում ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի հարաբերական ամբողջությունը:

¹⁰ Տե՛ս Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 220:

¹¹ «Նոյյան տապան», www.nt.am, 11.10.2008: Այսուհետև էլեկտրոնային պարբերականներից հղումները կտրվեն շարադրանքում. փակագծերում կնշվեն կայքի հասցեն և հրատարակման ամսաթիվը:

րարի (=համապատասխանի- L. Ս.) եվրագոտի մտնելու տարրական օրենքներից» («Առավոտ», 08.03.2004): «Ատենախոսությունը **բավարարում է** (=համապատասխանում է) ԲՈՅ-կողմից սահմանված *չափանիշներին*»: Փաստորեն բայը դարձել է կրկնասեռ՝ **ներգործական** և **չեզոք**:

Վերջին տասնամյակներում, կախված խոսողի վերաբերմունքից, շատ են «չարաշահվում» ոչ միայն անձի և իրի առման փոխնիփոխ գործածությունները, այլև տրական հոլովով դրված խնդրի փոխարեն ուղղականով (և հակառակ) դրսևորումները, որոնք հետևանք են և՛ որոշակիորեն փոխված լեզվամտածողության, և՛ իմաստային դրսևորումների քերականական նույնության: Այս առումով առանձնացրել ենք մի քանի բայեր՝ **կարոտել**, **տենչալ**, **դավաճանել**, **դավանել**, **խանգարել**, **խոչընդոտել**, **խթանել**¹², որոնք, գրական լեզվի կանոնի համաձայն, պետք է գործածվեին կամ տրականով դրված անուղղակի խնդրի, կամ ուղղականով դրված ուղիղ խնդրի հետ, սակայն այսօր զգալի չափով փոխվել է դրանց խնդրառությունը:

Այսպես, **կարոտել** բայը, ըստ վերը նշված բառարանների, **չեզոք է** և անցյալում դրսևորում էր առավելապես չեզոք սեռի բայերին բնորոշ խնդրառություն՝ **բայ+ տրական հոլովով դրված անուղղակի խնդիր**, ինչպես՝ «Բայց սիրտս, որ տարիներ **Կարոտել էր** մոր *գրկի*» (Յ. Շիրազ), «Թե *դաշտերին ես կարոտել...*» (Ս. Կապուտիկյան) և այլն: Սակայն նույն ժամանակահատվածում նշված կառույցին զուգահեռ գործածվել է նաև **բայ+ուղղական հոլովով դրված ուղիղ խնդիր** կաղապարը: Դժվար և ինչ-որ առումով արդեն անկարևոր է հստակ նշել, թե առաջին անգամ երբ է հանդիպում այս շեղումը, և կամ թե պնդել, որ սա անվերապահորեն սխալ կիրառություն է: Փաստ է, որ **կարոտել + իրի առման ուղիղ խնդիր** կառույցները (իհարկե, ոչ այնքան հաճախ) հանդիպում են դեռևս Ա. Բակունցի, Դ. Դեմիրճյանի և այլոց գործերում՝ «**Կարոտում է** Կաքավ գյուղի *աղբյուրը*» (Ա. Բակունց), «**Կարոտել էր** հայրենի *տունը*» (Դ. Դեմիրճյան): Ժամանակի ընթացքում այսպիսի գործածությունները դառնում են գերակա: Լեզվի զարգացման արդի փուլում սովորական և շատ տարածված են **կարոտում են** *օրերը, հայրենիքը, մթնոլորտը, տունը, մանկությունը* և այլն: Մեկ-երկու բնագրային օրինակ՝ «**Կարոտել են** *ազգականներիս ու ընկերներիս*, բայց ոչ *Հայաստանը*» (www.news.am, 10.08.2010): «**Կարոտում են** «Առավոտ» *օրաթերթը*» (www.aravot.am, 19.05.2004): «Մեսրոպը **կարոտել էր** իր *հողը*» (Յ. Մաթևոսյան): «**Կարոտել են** *Գյումրիս*» (www.wordpress.com, 25.03.1998), «Գերմանիայում եղած ժամանակ շատ **էի կարոտել** հատկապես *ընտանիքս, տունս, երեխաներիս*» («Արմենիա» ԶԸ, 15.07.2014) և այլն:

Ստացվում է, որ **կարոտել** բայը, պայմանավորված խնդրի հետ ունեցած հարաբերությամբ, արևելահայերենում ենթարկվել է սեռային երկփեղկման: Ավելին, հենց այդ նույն հարաբերությամբ էլ առավել հստակ է

¹² Այս բայերի խնդրառական տեղաշարժերին անդրադարձել են տարբեր լեզվաբաններ՝ Ա. Աբրահամյան, Յ. Հարությունյան, Ս. Ասատրյան և այլք: Նրանց վերը նշված աշխատություններում, սակայն, դրանք դիտվում են որպես խնդրառական տարբերակներ, և սեռային անցումը, պայմանավորված ժամանակաշրջանով և հատկապես երեվույթի ոչ այնքան տարածվածությամբ, չի որոշարկվում:

դառնում խնդրառական միակերպության միտումը, և ակնհայտ նկատվում է անցում չեզոքից ներգործականի: Ի դեպ, այս բայի (ոչ միայն) սեռային տեղաշարժին անդրադառնում է դեռևս Ա. Աբրահամյանը՝ նշելով, որ առաջին ոչ այնքան ցայտունությամբ, բայց նկատվում է «չեզոք հատկանիշի թուլացում, և բայը տատանումներ է տալիս անանցողականության (չեզոքի) ու անցողականության (ներգործականի) միջև»¹³: Լեզվի արդի փուլում այս բայի սեռային նշանակության մեջ տիրապետող է դարձել ներգործականության իմաստը, և լեզվաբանի նշած «տատանումները» զգալի չափով թուլացել են: Համենայն դեպս, պատկերն այդպիսին է ըստ մեր կատարած վիճակագրության, որին կանդրադառնանք ստորև:

Նույն փոփոխությունն է նկատվում նաև **տենչալ** բայի դեպքում: Պայմանավորված խնդրի հետ ունեցած հարաբերությամբ՝ այն հիմնականում դրսևորում է ներգործական սեռի իմաստ: Ա. Աբրահամյանը, անդրադառնալով այս բայի խնդրառական շարժին, այն կարծիքին է, որ բայը չեզոքից ներգործական սեռային անցման գործընթացի մեջ է¹⁴: Կես դար է անցել այս դիտարկումից, և հիմա թեև այս բայի համար հնարավոր չէ բայասեռի վերջնական անցում արձանագրել, սակայն **ուղղական հոլովով դրված խնդրի** հետ գործածվելու հաճախականությունը նկատի առնելով՝ կարելի է ասել, որ այն ոչ թե գտնվում է սեռային երկփեղկման մեջ, այլ ամրապնդվում է դրա ներգործական նշանակությունը: Համենայն դեպս, լեզվի զարգացման ընթացքի վրա էականորեն ազդող միջոցների (մամուլի, հեռուստատեսության, գրականության) լեզվում առավել հաճախադեպ և գերիշխող են դարձել **տենչալ + ուղղական հոլովով դրված խնդիր** կառույցները: Օրինակ՝ «Հայ ծերուկը, ցուպը ձեռքին, լալով **տենչում է** հայրենիքի *ազատություն...*» («Ազգ», 30.11.1999): «Ինչո՞ւ **են** այդ խենթ հայերը կյանքի գնով *տուն տենչում*» («Հայոց աշխարհ», 21.10.2009): «Ցմահ ազատագրվածը **տենչում է** *ազատություն և արդարադատություն*» («Իրավունք», 18.09.2013), «...**տենչում է** մի *ուս*՝ հենվելու համար» (Հ. Էդոյան) և այլն: Այսպիսի փոփոխության պատճառը, կարծում ենք, **տենչալ** բայի սերտ հոմանշությունն է **փափագել, ցանկանալ, ըղձալ** ներգործական բայերի հետ¹⁵: Ընդ որում, այն գործածվում է ոչ միայն նշված հոմանիշ բայերի փոխարեն, այլև հաճախ հանդես է գալիս հենց դրանց հետ կողք կողքի՝ հայտնվելով քերականական-իմաստային նույն տիրույթում: Կարելի է ասել, որ այս բայի դեպքում սեռային անցման առաջնային գործոն է դարձել **իմաստային համաբանությունը** (ապա նաև **տարածվածությունը** կիրառության տարբեր ոլորտներում):

Նույնպիսի փոփոխության է ենթարկվել նաև **դավաճանել** բայը, որը չեզոք սեռի է¹⁶: Վերջին 2-3 տասնամյակներում տարածվում և գերիշխող են դառնում այս բայի **ուղղականով դրված խնդրի** հետ գործածությունները: Կանոնավոր կառույցների կողքին՝ **դավաճանել հայրենիքին**,

¹³ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 689:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 694:

¹⁵ Տե՛ս Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., 2009:

¹⁶ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Եր., 1969, կամ՝ **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:

սկզբունքներին, գաղափարին և այլն, հաճախադեպ են ման ուղղականով դրված ուղիղ խնդրի կիրառությունները, ինչպես, օրինակ՝ «Պետք է **դավաճանել** հերոսների *հիշատակը*» («Ազգ», 18.10.2002): «Մի քանի անգամ է **դավաճանել** *հայրենիքը*» («Առավոտ», 03.08.2005): «Քվեարկել է առանց իր *սկզբունքները դավաճանելու*» (www.lragir.am, 01.10.2013): «Եթե մեկը այսօր **դավաճանում է** իր *կրոնը*, նա պատրաստ է **դավաճանել** անգամ իր սեփական *ընտանիքը* և *հայրենիքը*» (www.operativ.am, 08.01.2014): Համընդհանուր դարձող այս իրողությունը թույլ է տալիս ասել, որ առաջացել է չեզոքի և ներգործականի **սեռային երկփեղկում**՝ ներգործականի գերակայությամբ: Այսպիսի տեղաշարժի համար, թերևս, ամենակարևոր գործոնը **խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքն է**, գուցե նաև **համաբանությունը** (չենք բացառում նաև սխալը): Խնդրառության ավանդական և նոր գործածությունները տարբերվում են միայն ձևով, և ինչպես նշում է Հ. Հարությունյանը, սրանք մակերեսային կառուցվածքով տարբեր, իսկ խորքային կառուցվածքով նույն ձևերն են¹⁷: Բացի այդ՝ այս բայերի արտահայտած իմաստներն այնպիսին են, որ կարող են պահանջել գործողությունն իր վրա կրող առարկա՝ ուղիղ խնդիր: Եվ եթե չանտեսենք գործողության և օբյեկտի հարաբերության բազմազանությունը¹⁸, ապա ըստ էության որևէ հակասություն չի ստեղծվում խնդրառական տարբերակի և եղած լեզվական կանոնի միջև: Երևույթը գնահատելիս զերծ ենք մնում կան մեկը, կան մյուսը ընտրելու ծայրահեղությունից: Կարծում ենք, որ հիմնականում խոսակցական տարբերակից գրական լեզու ներթափանցած այս գործածությունները հասկանալի են, բնավ **չեն հակասում** հայերենի քերականական օրինաչափություններին: **Դավաճանել** բայը ուղղակի համալրում է այն ներգործականների շարքը, որոնց կրավորականի կազմությունները կան արհեստական են, կան չկան, ինչպես, օրինակ՝ **աղալ-աղացվել, ունեմ - Փ**, ուստի և ընդամենը կարող են համակարգվել, կանոնարկվել հենց այդ օրինաչափությունների շրջանակում:

Դավանել, խոչընդոտել և խանգարել բայերի խնդրառության յուրահատկությունները մախորդների հակառակ պատկերն են ներկայացնում: Երեք բայերն էլ, ըստ վերը նշված բառարանների, ներգործական են և պետք է գործածվեն ուղղականով կամ տրականով դրված ուղիղ խնդրի հետ, ինչպես՝ «Ես դեռ **դավանում եմ** այն օրերի իմ *հավատը...*» (Շ. Թաթևյան), «...Ես **չեմ դավանում** *օրենք* անիրավ...» (Հ. Թումանյան), «...փորձում են **խանգարել** Մացակի արքայական *քունը...*» (Հ. Մաթևոսյան), «Եվ նրա այդ *որոշումը* ոչ մեկը չէր կարող **խոչընդոտել...**» (Վ. Խեչումյան) և այլն: Խնդրառական այս ձևերի կողքին հատկապես վերջին տասնամյակներում հաճախական են դարձել իրի առման ուղիղ խնդրի փոխարեն տրական հոլովով դրված խնդրի (հանգման խնդրի) գործածությունները: Օրինակ՝ «Հորդառատ անձրևները **խանգարել են** ծաղկած ծառերի լիարժեք *փոշոտմանը*» (www.azg.am, 05.04.2001): «Հայաստանն ու Իսպանիան **դավանում են** նույն *արժեհամակարգին*» (www.tert.am, 22.09.2006): «Շտապողաբար կեղծելով՝ նշում է, որ ինքը **դավանում է** իս-

¹⁷ Տե՛ս Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 212:

¹⁸ Տե՛ս Մ. Ասատրյան, Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Եր., 1959, էջ 87-90:

լամին...» («Ավանգարդ», 10.07.2014): «Մոսկվան փորձել է **խանգարել** ԵՄ հետ Ասոցացման համաձայնագրի *նախաստորագրմանը*» (www.168.am, 13.02.2014): «Քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ *իրականացմանը* կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի *աշխատանքին խոչընդոտելը* պատժվում է տուգանքով» (ՀՀ քրեական օրենսգիրք, Հոդված 149) և այլն: Նշված բայերի դեպքում թերևս նկատելի է տեղաշարժը պայմանավորող մի քանի գործոնների միաժամանակյա ազդեցությունը. մի կողմից՝ խոսակցական լեզվում սխալակազմությունը աստիճանաբար ձեռք է բերում տարածվածություն, մյուս կողմից՝ քերականական ձևերի իմաստային առնչակցության և պարզ համաբանության փոխկապակցվածությունը ըստ էության անխուսափելի է դարձնում նման փոփոխությունը:

Հարցի քննության կամայական մոտեցումից խուսափելու, հնարավորինս օբյեկտիվ և հիմնավոր պատկեր ստանալու ակնկալիքով նշված (նաև ներկայացվելիք) բայերի խնդրառական-սեռային փոփոխությունների վերաբերյալ անցկացրել ենք հարցում: Հարցմանը մասնակցել է 70 մարդ (բարձրագույն և միջնակարգ կրթությամբ 18-60 տարեկան անձինք՝ բացի բանասերներից): Հարցվածներից 11-ը (≈15.8 %) **կարոտել** բայի համար ճիշտ է համարել **կարոտել տանը, հայրենիքին** խնդրառական ձևերը: 38 մարդ (≈54.2 %) ընտրել է **կարոտել տունը, հայրենիքը** կառույցները՝ որպես ճիշտ տարբերակ: Իսկ 21-ը (≈30 %) նշված երկու տարբերակներն էլ համարել է հավասար գործածվող ձևեր:

Համանման պատկեր ունենք նաև **տենչալ, դավանել, դավաճանել, խոչընդոտել**¹⁹, **խանգարել** բայերի դեպքում: Ներկայացնենք միայն վիճակագրության արդյունքները: Այսպես, **1. տենչալ** արդարության - **9 (≈12.8 %)**, տենչալ արդարություն - **46 (≈65.8 %)**, տենչալ արդարություն//արդարության - **15 (≈21.4 %)**, **2. դավանել** սկզբունք, կրոն - **16 (≈22.9 %)**, դավանել սկզբունքի, կրոնի - **41 (≈58.6 %)**, դավանել սկզբունքի, կրոնի // սկզբունք, կրոն - **13 (≈18.5 %)**, **3. դավաճանել** հայրենիքին, սկզբունքներին - **12 (≈17.1 %)**, դավաճանել հայրենիքը, սկզբունքները - **44 (≈62.9 %)**, դավաճանել հայրենիքին, սկզբունքներին//հայրենիքը, սկզբունքները - **14 (≈20 %)**, **4. խոչընդոտել** (խանգարել) ստորագրումը, աշխատանքը - **18 (≈25.7 %)**, խոչընդոտել (խանգարել) ստորագրմանը, աշխատանքին - **44 (≈62.9 %)**, խոչընդոտել (խանգարել) ստորագրմանը, աշխատանքին // ստորագրումը, աշխատանքը - **8 (≈11.4%)**:

Ուզում ենք շեշտել մի հանգամանք. ներկայացված խնդրառական տարբերակներից առաջին ձևերին նախապատվություն տված անձինք հիմնականում միջինից բարձր տարիք ունեցողներն են (կրթական մակարդակը այս դեպքում էական դեր չի կատարել): Ի մի բերելով հարցման արդյունքները և դրանք համեմատելով մեր ձեռքի տակ եղած տարբերակային տեքստերից քաղված օրինակների հետ, ինչպես նաև հաշվի առնելով դրանց գործածության հաճախականությունը (նաև հեռուստառադիո-

¹⁹ **խոչընդոտել** և **խանգարել** բայերի վերաբերյալ վիճակագրության արդյունքները, ինչպես և սպասելի էր, գրեթե նույնական են. տրված 3 հնարավոր տարբերակների հարցման թվերը միմյանցից ավել կամ պակաս էին 1-2-ով: Ուստի այս բայերի վերաբերյալ հարցման արդյունքները ներկայացնում ենք միասնաբար:

թերում)՝ ըստ էության ստանում ենք լեզվական իրողության փոփոխության գրեթե նույն պատկերը:

Հարկ է նշել, որ ոչ բոլոր դեպքերում է հնարավոր գրական նորմից շեղումները դիտարկել որպես տեղաշարժ (կամ փոփոխություն) և կամ կանոնարկման խնդիր դնել: Լեզվի զարգացման արդի փուլում որոշ բայերի դեպքում նկատվում են խնդրառական ինչ-ինչ փոփոխություններ, որոնք համեմայն դեպս արդի լեզվավիճակի համար առայժմ սխալ կիրառություններ են, հիմնականում գուցե չինացության հետևանք: Այսպես, **խթանել** բայը **ներգործական է**, այսինքն՝ կապվում է ուղղական հոլովով դրված ուղիղ խնդրի հետ՝ **խթանել զարգացումը**, **խթանել արտադրությունը**, **խթանել մարդկային ռեսուրսների աճը** և այլն: Սակայն հատկապես վերջին 4-5 (գուցե ավելի շատ) տարիների ընթացքում պարբերական և էլեկտրոնային մամուլի, ռադիոհեռուստատեսության տարաբնույթ հաղորդումների լեզվում ժամանակ առ ժամանակ սկսել են գործածվել **խթանել + տրականով դրված ուղիղ խնդիր** կառույցները: Օրինակ՝ «...**խթանում է** մազերի *սնուցմանը*՝ տալով յուրօրինակ փայլ» («Հայկական երկրորդ հեռուստաալիք» ՀԸ): «...**խթանում է** հողացավերի *բուժմանը*...» («Արմնյուզ» ՀԸ): «Այն ճանապարհային այդ հատվածում **խթանում է** երթևեկության *թեթևացմանը*» (www.tert.am, 11.04.2010): Այսպիսի կառույցները առայժմ զիջում են առաջին կանոնավոր ձևերին՝ մոտ 18-20/21 հարաբերությամբ: Բացի այդ՝ հարցման արդյունքները (70-ից 54-ը) նույնպես խոսում են հոգուտ կանոնական **խթանել+ ուղղականով դրված ուղիղ խնդիր** կառույցի գերակայության: Ուստի նշված իրողությունը փաստում է, որ, ի տարբերություն վերոհիշյալ բայերի, այս դեպքում գործ ունենք ոչ այնքան լեզվական տեղաշարժի, որքան խնդրառական սխալի հետ, որը, սակայն, տարածվելու միտում ունի:

Սրանից բացի՝ տարբեր բայեր (անկախ սեռից), կախված խոսողի լեզվամտածողությունից, առարկայի (երևույթի) նկատմամբ ունեցած անհատական վերաբերմունքից, նաև իրավիճակից, հնարավոր է՝ հանդես գան խնդրառական անճիշտ հարաբերությամբ, որը, սակայն, խոսողի նախընտրությունն է: Խոսքը մեծ մասամբ իրի առման փոխարեն անձի առման գործածության մասին է, որը մեր նշած դեպքերում առավելապես ոճական միավորի՝ **անձնավորման** արժեք ունի, ինչն ուղղակի արտահայտվում է քերականական ձևերի փոփոխության միջոցով, ինչպես՝ **ափսոսալ ծառերին, ողջունել հաղորդաշարին, մորթել խոզին, միացնել ռադիոյին** («Միացրե՛ք Ձեր ռադիոյին, և նա կապահովի Ձեր հաճելի ժամանցը») և այլն: Այսպիսի գործածությունները տարածված են հատկապես խոսակցական լեզվում (հանդիպում են նաև գեղարվեստական, հրապարակախոսական ոճերում): Այսօրինակ կիրառությունները որքան էլ եզակի չեն, այնուամենայնիվ ընդհանրապես չեն կարող նմանատիպ քննության նյութ դառնալ: Հակառակ դեպքում հնարավոր է հայերենի բայերի մի զգալի մասի համար արձանագրել սեռային-խնդրառական ինչ-ինչ փոփոխություններ:

Այսպիսով, գրական լեզվի զարգացման արդի փուլում մի շարք բայեր, պայմանավորված տարբեր գործոններով, ենթարկվում են խնդրառական-սեռային տեղաշարժերի: Դրանք բնականոն զարգացման արդյունք

են, որևէ կերպ չեն հակասում մեր լեզվի քերականական օրինաչափություններին, բացատրվում, համակարգվում և կանոնարկվում են հենց այդ օրինաչափությունների հիման վրա:

Բանալի բառեր – *խնդրառություն, ներգործական սեռ, տեղաշարժ, ուղիղ խնդիր, տրական հոլով, բառիմաստի փոփոխություն*

ЛИАНА САРКИСЯН – *Сдвиги в системе глаголов в современном восточноармянском языке.* – В статье рассматриваются некоторые сдвиги в системе переходных и непереходных глаголов и в системе глагольного управления, обусловленные лингвистическими и экстралингвистическими причинами. Эти сдвиги возникли в результате естественного развития восточноармянского языка, не противоречат его грамматическим закономерностям и в рамках этих закономерностей систематизируются и нормируются.

Ключевые слова: *управление, переходный глагол, сдвиг, прямое дополнение, дательный падеж, изменение значения слова*

LIANA SARGSYAN – *Gender Transition of Verbs in Modern Eastern Armenian.* – The article discusses some of the changes in the system of transitive and intransitive verbs, which are conditioned by linguistic and extralinguistic factors. Presented gender transitions are the result of natural development of language. They by no means contradict the grammatical regularities of our language and can be explained, systematized and standardized within the framework of these regularities.

Key words: *direction, transitive verb, shift, direct object, dative, change of word definition*

ՌՈՒՄԻՆԱՐԱՅ ՅԱՄԱՅՆՔԸ 1989 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

ԱՐՄԵՆ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

20-րդ դարի վերջում Արևելյան Եվրոպայում սոցիալիստական կարգերի դեմ հեղափոխությունները կտրուկ փոխեցին մի շարք երկրների քաղաքական իրադրությունը: Լուրջ ցնցումներ ապրեց նաև Ռումինիան. 1989 թ. դեկտեմբերի 16-27-ը ավելի քան հազար մարդ զոհվեց, իսկ երեք հազարից ավելին վիրավորվեց: Այս պայքարը ամբողջովին փոխեց երկրի ներքաղաքական իրավիճակը, ընդունվեց նոր սահմանադրություն, ինչպես նաև նոր օրենքներ, որոնք հստակ որոշեցին երկրի զարգացման ուղին դեպի Եվրոպական միություն: Այս ամենը դրական ազդեցություն ունեցավ Ռումինիայի ազգային փոքրամասնությունների վրա, որոնք հնարավորություն ստացան ազատ կազմակերպելու իրենց ներհամայնքային կյանքը, ստեղծելու կամ վերստեղծելու կազմակերպություններ (կոմունիստական ռեժիմի օրոք դրանք արգելված էին): Սա լուրջ խթան էր Ռումինիայում ապրող շուրջ երկու տասնյակ ազգային փոքրամասնությունների համար:

Գրեթե մեկ հազարամյակի պատմություն ունեցող հայկական համայնքն ամենաազդեցիկ ազգային փոքրամասնություններից էր՝ չնայած որպես պաշտոնական կազմակերպություն գրանցվելու իրավունքից մի քանի տասնամյակ զրկված լինելուն: Դարեր շարունակ հայերը եղել են Ռումինիայի երեք պատմական իշխանությունների՝ Մոլդովայի, Վալախիայի և Տրանսիլվանիայի արժանավոր քաղաքացիներ, մեծ նպաստ ունեցել քաղաքաշինության գործում, ինչպես օրինակ՝ Տրանսիլվանիայում Գեռլա (Արմենոպոլիս)¹ և Դումբրըվեն (Եղիսաբեթուպոլիս)² քաղաքների դեպքում: Ինչպես ռումինացի պատմաբան Նիկոլաե Յորգան է նշում, «Մոլդովայի իշխանությունը ստեղծվել է առևտրի միջոցով, և հենց առևտրականները համագործակցեցին՝ ստեղծելու Մոլդովայի իշխանությունը: Այսպիսով, հայերը Մոլդովայի, այսպես կոչված, հայերն են»³: Հայերը կազմակերպում էին համայնքային կյանքն իրենց քաղաքներում, սակայն Ռումինիայում սփռված հայությանը միավորող մեկ ընդհանուր կազմակերպություն գոյություն չուներ:

Իրավիճակը փոխվում է 1915 թ. Հայոց ցեղասպանությունից հետո, երբ տասնյակ հազարավոր հայեր ապաստան են գտնում Ռումինիայում: Գաղթականների նման հոսքից հետո անհրաժեշտություն է առաջանում

¹ Տե՛ս **Ք. Շոնգոտ**, Ազատ թագավորական քաղաք Գեռլա (1700-1900), Բուխարեստ, 2012, էջ 59 (ռումիներեն):

² Տե՛ս **Գ. Գովրիկյան**, Հայք ի Եղիսաբեթուպոլիս Տրանսիլվանիո. գաղթավայրի պատմությունը, հատոր Ա, Վիեննա, 1893, էջ 69:

³ **Ն. Յորգա**, Պատմական գրություններ հայերի մասին, Բուխարեստ, 1999, էջ 249 (ռումիներեն):

ստեղծելու մի մարմին, որը կզբաղվեր գաղթականների փաստաթղթային և սոցիալական խնդիրներով, ինչպես նաև կհամախմբեր ողջ երկրով մեկ սփռված հայերին: Այսպիսի պայմաններում 1919 թ. հունվարի 25-ին ստեղծվում է Ռումինահայոց միությունը (ՌՀՄ), որի առաջին նախագահ է դառնում Գրիգորե Տրանկու-Յաշը (1919-1924): Մինչև 1948 թ.՝ կոմունիստական ռեժիմի կողմից կազմակերպության գործունեության կասեցումը, Միությունն ունեցավ մի քանի նախագահներ՝ Արմենակ Մանիսայան (1924-1927), Դերենիկ Դանիելյան (1928-1934), Արիս Ֆեսճյան (1935-1937), իսկ Լևոն Զոհրապը, Լևոն Շահազիզյանը և Արտաշես Գասարճյանը ՌՀՄ վերջին նախագահներն էին⁴:

1989 թ. հեղափոխությունից հետո հայկական համայնքն իրավունք է ստանում վերակազմավորելու Ռումինահայոց միությունը: Նախաձեռնողները հավաքվում են ղեկավար կազմ ընտրելու և ՌՀՄ գործունեության ուղորտները որոշելու համար, ինչը, սակայն, հարթ չի ընթանում, քանի որ նրանց միջև ծագում են բազմաթիվ հակասություններ: Զննարկումների շնորհիվ որոշվում է նախապատվությունը տալ երիտասարդ սերնդին: 1990 թ. մարտի 11-ին Ռումինահայոց միության առաջին կոնգրեսում ՌՀՄ նախագահ է ընտրվում 31-ամյա Վարուժան Ոսկանյանը (պաշտոնավարում է մինչև այսօր), փոխնախագահներ՝ Վարուժան Փամբուկչյանը և Նշան Բոգդան Կըուշը, գլխավոր քարտուղար՝ Սեթին Մագանյանը: 1990 թ., չնայած ստացած 399 քվեներին, ՌՀՄ-ն և 11 այլ ազգային փոքրամասնություններ, համաձայն Ազգային միասնության ժամանակավոր խորհրդի (Ռումինիայի ղեկավար մարմինը 1990 թ. փետրվար-մայիս ամիսներին) ընդունած ղեկրետի, երկրի խորհրդարանում ստացան մեկական տեղ⁵:

Վ. Ոսկանյանը դառնում է ՌՀՄ ներկայացուցիչ-պատգամավորը Ռումինիայի օրենսդրական մարմնում՝ երկպալատ խորհրդարանում, որը բաղկացած է Սենատից և Պատգամավորների պալատից: 1992 թ. ՌՀՄ-ն արդեն ստանում է 7.145 քվե, որ բավական էր Վ. Ոսկանյանին պատգամավորական մանդատը պահպանելու: Ըստ այդ ժամանակ ընդունված Սահմանադրության 59.2 հոդվածի՝ խորհրդարան կարող էր անցնել այն ազգային փոքրամասնության ներկայացուցիչը, որը ընդհանուր հաշվարկով կստանար մեկ պատգամավորի ընտրության համար քվեարկված ձայների թվի ամենաքիչը 5%-ը⁶: 1992 թ. թիվը 1.336-ն էր: 1996 թ. արդեն հայկական համայնքը խորհրդարանում ունեցավ երկու ներկայացուցիչ. խորհրդարանական ընտրությունների արդյունքներով Վ. Ոսկանյանը դարձավ սենատոր (Ռումինիայի Յաշ քաղաքից), իսկ ՌՀՄ փոխնախագահ Վ. Փամբուկչյանը փոխարինեց Վ. Ոսկանյանին՝ ստանալով 11.543 քվե (անցողիկ թիվը՝ 1.494), և մինչև օրս պաշտոնավարում է որպես ՌՀՄ ներկայացուցիչ-պատգամավոր: 1992 թ.-ից ՌՀՄ ներկայացուցիչը պատգամավորների պալատի ազգային փոքրամասնությունների խմբի ղեկավարն է: Հունգարացիներն ընդգրկված չեն այս խմբում, քանի որ, կազմելով Ռումինիայի բնակչու-

⁴ Տե՛ս **Յ. Գալփագեան**, Ռումանահայ գաղութը, Երուսաղեմ, 1979, էջ 167:

⁵ Տե՛ս **Մ. Ս. Կազազյան**, Հայկական համայնքի ժամանակագրությունը 1989-2009 թթ., Ազգային փոքրամասնությունների ուսումնասիրության ռումինական ինստիտուտ, (ռումիներեն), <http://ispmn.gov.ro/node/cronologia-minoritii-armene-1989-2009>

⁶ Տե՛ս նույն տեղը:

թյան 7%-ը, ունեն այլ կարգավիճակ:

Ռումինիայի ներքաղաքական կյանքում նշված երկու հայ գործիչներն էլ հայտնի են ակտիվ գործունեությամբ: 1996 թ. Վ. Ոսկանյանը երկու այլ անձանց հետ ստեղծեց «Ռումինիայի այլընտրանք կուսակցությունը» և 2001 թ. դարձավ նրա նախագահը (կուսակցությունը վերանվանվել էր «Աջ ուժերի միություն»): 2003 թ. այն միացավ ավանդական «Ազգային ազատական կուսակցությանը», որի փոխնախագահներից մեկը ինքն է 2007 թ. մինչև օրս: 1996-1998 թթ. և 2004-2006 թթ. Ոսկանյանը նախագահել է Սեմատի կապիտալ շուկայի և բանկային գործունեության, ֆինանսների, բյուջեի հանձնաժողովը, իսկ 2008-2012 թթ.՝ ծառայությունների, արդյունաբերության և տնտեսական հանձնաժողովը: 2004-2006 թթ. և 2012 թ. եղել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) անդամ: 2006-2008 թթ. պաշտոնավարել է սկզբում որպես առևտրի և էկոնոմիկայի, ապա ֆինանսների և էկոնոմիկայի նախարար, իսկ 2012-2013 թթ.՝ էկոնոմիկայի նախարար: Բացի քաղաքական գործունեությունից, Վ. Ոսկանյանը Ռումինիայում հայտնի է որպես լավագույն գրողներից մեկը, 2005 թ. մինչև այսօր Ռումինիայի գրողների միության առաջին փոխնախագահն է, իսկ նրա՝ Հայոց ցեղասպանության մասին պատմող «Շշուկների մատյան» վեպը 2009 թ. Ռումինիայում ճանաչվել է տարվա լավագույն գիրք, և ամենաշատ վաճառված գրքերից է: Այն թարգմանվել է շուրջ մեկ տասնյակ լեզուներով և Ռումինիայի, Իսրայելի ու Հայաստանի գրողների միությունների կողմից ներկայացվել 2014 թ. գրականության նոբելյան մրցանակի:

Վ. Փամբուկչյանը 2000-2008 թթ. նախագահել է պատգամավորական պալատի ինֆորմացիայի և կապի տեխնոլոգիայի հանձնաժողովը, որը ստեղծել է հենց ինքը և որի անդամ է առ այսօր:

2000 թ. խորհրդարանական ընտրություններում ՌՀՄ-ն ստացավ 21.302 քվե (անցողիկ թիվը՝ 1.273)՝ գրանցելով մինչ այդ ամենաբարձր ցուցանիշը, որն ընտրություններին մասնակցող 69 քաղաքական ուժերի շարքում 23-րդն էր, իսկ ազգային փոքրամասնությունների մեջ՝ 4-րդը⁷: Հաշվի առնելով անցողիկ թվի և ստացած քվեների մեծ տարբերությունը (ինչը վերաբերում էր ոչ միայն ՌՀՄ-ին, այլև մնացած բոլոր ազգային փոքրամասնություններին)՝ ընտրական օրենսգիրքը փոփոխությունների ենթարկվեց, և սկսած 2004 թ. խորհրդարանական ընտրություններից՝ 5%-անոց շեմը բարձրացվեց 10%-ի: Այնուամենայնիվ, դա էլ չխանգարեց, որ ազգային փոքրամասնությունները ներկայացնող բոլոր կազմակերպություններն անխտիր անցնեն խորհրդարան: Այսպես, 2004 թ. ՌՀՄ-ն ստացավ 9.850 քվե (անցողիկ թիվը՝ 2.841), 2008 թ.՝ 13.829 քվե (անցողիկ թիվը՝ 2.179), իսկ 2012 թ.՝ 10.761 (անցողիկ թիվը՝ 2.300)⁸:

Այստեղ ահա հարց է ծագում, թե որքան է հայ բնակչության թիվը Ռումինիայում, որ ՌՀՄ-ն կարողանում է այդքան ձայներ ապահովել, և հետևաբար արդյոք միայն հայերն են քվեարկում ՌՀՄ-ի օգտին, թե ռումի-

⁷ Տե՛ս ՌՀՄ պաշտոնական կայքէջ, Ռումինիայի հայկական համայնքի կարճ ներկայացում (ռումիներեն), http://uniuneaarmenilor.ro/index.php?option=com_content&view=category&layout=blog&id=36&Itemid=57

⁸ Տե՛ս Մ. Ս. Կազազյան, նշվ. աշխ.:

նացիներն ու այլ ազգի ներկայացուցիչները ևս:

Ռումինիայում հայերի թվաքանակի մասին պատկերացում կազմելու համար առաջին հերթին պետք է դիտարկել մարդահամարների տվյալները: Երբեմնի մի քանի տասնյակ հազար հայություն ունեցող համայնքը կոմունիստական ռեժիմի օրոք աստիճանաբար նոսրացավ: Ռումինահայերի մեծ մասը մեկնեց Արևմտյան Եվրոպա և Չյուսիսային Ամերիկա, և մի պահ այնպես ստացվեց, որ միայն Ամերիկայի Միացյալ Նահանգներում ավելի շատ ռումինահայեր կային, քան Ռումինիայում: Հայ բնակչության թվի առ այսօր շարունակվող նվազման պատճառներից է նաև ծնելիության ցածր մակարդակը:

1989 թ. հեղափոխությունից հետո տեղի է ունեցել երեք մարդահամար⁹: Ստորև ներկայացված են Ռումինիայի՝ ազգությամբ հայ քաղաքացիների վերաբերյալ տվյալները.

Աղյուսակ 1

Թվական	1992	2002	2011
Ընդհանուր քանակ	1.957	1.780	1.361
Քաղաքային բնակչություն	1.936	1.751	1.295
Բուխարեստ	909	821	627
Կոնստանցա	532	422	263
Կլուժ	97	63	66
Արջեշ	47	45	35
Տիմիշ	38	32	30
Տուլչա	36	10	58
Սուչավա	26	36	22
Պրահովա	24	25	14
Դուլժ	22	15	-
Վրանչա	22	22	9
Բոտոշան	21	29	21
Բրաշով	21	15	7
Բակըու	18	55	29
Գալաց	18	45	29
Բրըիլա	14	20	10
Մուրեշ	13	12	15
Յաշ	11	24	14
Սիբիու	7	2	18
Քըլրաշ	3	1	17
Այլ մարզեր	78	86	77

Հետաքրքիր է, որ 1992 թ. Ռումինիայի 41 մարզերից միայն մեկում հայ չի նշված, իսկ 2002 թ.՝ երկու մարզում: Սա վկայում է այն մասին, որ հայերը փոքր խմբերով սփռված են ողջ երկրով: 2011 թ. տվյալներով արդեն 13 մարզերում հայ բնակիչ չի նշվում: Պետք է ուշադրություն դարձնել նաև այն փաստին, որ հայերի գերակշիռ մասը բնակվում է քաղաքներում և սոցիալապես ապահովված է: 2011 թ. մարդահամարը ցույց տվեց, որ

⁹ Տե՛ս Ռումինիայի ազգային վիճակագրության ինստիտուտի կայքէջ (ռումիներեն), 1992, 2002 և 2011 թթ. մարդահամարների տվյալները՝ ըստ ազգային պատկանելության, <http://www.insse.ro/cms/>

գյուղական համայնքներում ապրող հայերի քանակը 1992 թ.-ից հետո աճել է շուրջ երեք անգամ՝ 21-ից հասնելով 66-ի: 1992 թ. համեմատ ամբողջ երկրի հայ բնակչությունը 2002 թ. նվազել է 177-ով, իսկ 2011 թ.՝ 596-ով: Դա հիմնականում բացատրվում է Ռումինիայից դեպի արևմտյան երկրներ արտագաղթի մեծ չափերով: Արտագաղթողների զգալի մասը երիտասարդներն են, ինչը հանգեցնում է հայ բնակչության շրջանում ծնելիության ցածր մակարդակի:

Այնուամենայնիվ, չնայած մարդահամարի տվյալներին՝ բավականին դժվար է պարզել, թե իրականում քանի հայ է այսօր ապրում Ռումինիայում: Դժվար է որոշել հայ լինելու չափորոշիչն առհասարակ: Առաջին հերթին պետք է հասկանալ, թե ով է համարվում կամ իրեն համարում հայ. շատ-շատերի մի կողմի պայքը կամ տատն է հայ, բայց նրանց միայն մի մասն է իրեն համարում հայ, մասնակցում համայնքային միջոցառումներին և ներդրում ունենում համայնքի զարգացմանը:

Հայկական արմատներ ունեցողների թիվն անհամեմատ մեծ է և տարբեր հաշվարկներով հասնում է 10.000-ի, հնարավոր է և ավելի: Հատկանշական է հատկապես խորհրդարանական ընտրություններում Ռումինահայոց միությանը տրված քվեների քանակը, որը վերջին չորս ընտրություններում մի քանի անգամ գերազանցել է պաշտոնական մարդահամարի տվյալների հայ բնակչության թիվը (որտեղ, բնականաբար, ներառված են նաև ընտրելու իրավունք չունեցող՝ Ռումինիայի հայ երեխաներն ու պատանիները, ինչն ավելի է մեծացնում տարբերությունը): Որքան էլ որոշ այլազգիներ համակրելով կամ այլ պատճառներով խորհրդարանական ընտրություններում քվեարկեին ՌՅԱ-ի օգտին, այնուամենայնիվ քիչ հավանական է, որ, օրինակ՝ 2000 թ. ընտրություններում (որտեղ ՌՅԱ-ն ստացավ 21.302 քվե) ՌՅԱ-ի օգտին քվեարկել են շուրջ 20.000 ռումինացիներ կամ այլազգի քաղաքացիներ: Համեմատության համար պետք է նշել, որ դրան հաջորդած վերջին երեք ընտրություններում միջինը շուրջ 10.000 «այլ» քվեների մասին է խոսքը, ինչից նույնպես կարելի է եզրակացնել, որ հայերն անհամեմատ ավելի շատ են, քան ներկայացված է պաշտոնական մարդահամարի տվյալներով: Իսկ թե ինչու մարդահամարի ժամանակ լրացվող թերթիկների վրա նրանք չեն նշում իրենց հայ լինելը, կարող է բացատրվել տարբեր պատճառներով: Հայկական արմատներ ունեցողները, որոնք սփռված են ամբողջ երկրով, ներառյալ Տրանսիլվանիայի հունգարաբնակ շրջանները, մեծ մասամբ արդեն ձուլվել են ռումինացիներին և հունգարացիներին, և որքան էլ այսօր նրանք մասնակցեն հայկական եկեղեցական և այլ միջոցառումներին, միևնույն է, իրենց ռումինացի կամ հունգարացի են համարում: Նրանց մեջ հայկական ինքնությունն արթնացնելու խնդիրը մասամբ կարող են լուծել Հայաստանի Հանրապետության իշխանությունները՝ նպատակաուղղված քաղաքականությամբ, Հայաստան-Սփյուռք ծրագրերի իրականացման միջոցով: Այսօր քայլեր են արվում նրանց մեծ մասին, հատկապես երիտասարդներին և երեխաներին, վերադարձնելու իրենց արմատներին: Ոչ պակաս կարևոր է հենց Ռումինիայում ՀՀ-ից ժամանած մտավորականների ու երիտասարդների մասնակցությամբ մշակութային միջոցառումներ և տարբեր գիտաժողովներ կազմակերպելը, որն ավելի կխթանի միջանձնային շփումը ռումինահայե-

րի և հայաստանցիների միջև: Այդպիսի միջոցառումների օրինակ է 2013 թ. հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 3-ը Բուխարեստում կայացած «Չայ-ռումինական մշակութային ժառանգությունը» խորագրով միջազգային գիտա-ժողովը, որի ժամանակ քննարկվել է Ռումինիայում հայկական հոգևոր և նյութական մշակութային արժեքների պահպանման խնդիրը:

Ինչպես նշում են բազմաթիվ ռումինահայեր, հայ լինելը մեծ պատիվ ու հպարտություն է Ռումինիայում, որտեղ բոլոր հայաշատ քաղաքներում հայերն ավանդաբար ընկալվել են որպես օրինակելի քաղաքացիներ: Եթե դրան զուգարկվում է այն հանգամանքը, որ կրոնական տարբերությունը մեծ չէ, ապա պարզ է դառնում, որ ձուլումը տեղացիների հետ անխուսափելի է եղել և ներկայումս էլ շարունակում է մնալ ամենից հուզող խնդիրը: Պետք է հաշվի առնել այն, որ այն երկրները, որտեղ հայկական համայնքը կարողացել է պահպանել իր ինքնությունը և չձուլվել կամ մասամբ ձուլվել տեղի բնակչությանը, հիմնականում իսլամական երկրներն են եղել: Այնուամենայնիվ, ձուլման պատճառներից ամենակարևորը, թերևս, կարելի է դիտել հայկական դպրոցի բացակայությունը: Կոմունիստական ռեժիմի օրոք փակվեցին վերջին մի քանի հայկական դպրոցները, և մայրենին պահպանել հնարավոր էր միայն ընտանիքի և հայ ընկերների հետ շփումների միջոցով: 1970-ական թթ. վերջին Վ. Ոսկանյանը նախաձեռնեց հայոց լեզվի ոչ պաշտոնական դասավանդում, և հենց ինքն էլ անցկացնում էր դասերը համայնքի երիտասարդության հետ:

Ստորև ներկայացված աղյուսակում նշված է, թե վերջին երեք մարդահամարների ժամանակ Ռումինիայի հայ քաղաքացիները որ լեզուն են համարել մայրենի¹⁰.

Աղյուսակ 2

Թվական	1992	2002	2011
Ընդհանուր քանակ	1.957	1.780	1.361
Ռումիներեն	973	976	578
Հայերեն	878	694	705
Հունգարերեն	82	52	57
Այլ լեզուներ	24	58	21

Ինչպես երևում է աղյուսակից, միայն վերջին մարդահամարի արդյունքներով է նվազագույն դրական հաշվեկշիռ գրանցվել հօգուտ հայերենի: Այնուամենայնիվ, իմ անձնական հանդիպումների և ուսումնասիրության արդյունքներով այսօր հայկական համայնքի շատ փոքր մասն է փաստացի տիրապետում հայերենին, իսկ դա էլ հիմնականում 1980-ականներից հետո Հայաստանից և այլ երկրներից հայերի՝ Ռումինիա տեղափոխվելու հաշվին: Նրանց թիվը տատանվում է 100-150-ի սահմաններում: Այսինքն՝ Ռումինիայի հայախոս քաղաքացիների իրական թիվը ոչ միայն 705 չի կարող լինել, այլև կեսից էլ պակաս է: Այդ պատճառով լեզվի պահպանման խնդիրը ամենակարևորն է համայնքի առջև ծառայած մարտահրավերներից: Իսկ թե ինչու են մի քանի հարյուրով ավելի մարդիկ

¹⁰ Ռումինիայի ազգային վիճակագրության ինստիտուտի կայքէջ (ռումիներեն), 1992, 2002 և 2011 թթ. մարդահամարների տվյալները՝ ըստ մայրենի լեզվի, <http://www.inssse.ro/cms/>

նշել հայերենը որպես մայրենի լեզու, ունի պարզ պատճառ. նրանք հիմնականում այն հայերն են, ովքեր, չտիրապետելով մայրենիին, այդուհանդերձ իրենց լիովին հայ են զգում, պահպանում ազգային ավանդույթները, սովորում հայերեն տարբեր արտահայտություններ, և որ ամենակարևորն է՝ երիտասարդ սերնդի մեջ սերմանում են ազգային ինքնության գիտակցություն:

Դժվար է ասել, թե քանի հայախոս մարդ կմնար, եթե կոմունիստական ռեժիմը շարունակեր իշխել Ռումինիայում: Հարկ է նշել, որ այսօր ամեն շաբաթ և կիրակի օրերին անցկացվում են արևմտահայերենի և արևելահայերենի դասընթացներ, ինչը որոշակի հետաքրքրություն է առաջացնում երիտասարդների շրջանում և հնարավորություն տալիս երեխաներին փոքրուց տիրապետելու մայրենի լեզվին: Ռումինահայ որոշ երիտասարդներ, ովքեր տարբեր ծրագրերով արդեն եղել են Հայաստանում, ձգտում են մշտապես պահել Հայաստանի հետ կապը կամ չեն բացառում որոշ ժամանակ անց այնտեղ հաստատվելու հնարավորությունը:

Հատկանշական է այն փաստը, որ հայերենը որպես մայրենի լեզու նշել են նաև այլ ազգություն ունեցողները¹¹.

Աղյուսակ 3

Թվական	1992	2002	2011
Ընդհանուր քանակ	40	27	30
Ռումինացի	36	16	25
Այլ	4	11	5

Իհարկե, թվաքանակը բավականին փոքր է, և դժվար է պատկերացնել, որ իր ազգությունը ռումինացի նշողը մայրենի լեզու համարեր հայերենը, այնուամենայնիվ պետք չէ բացառել, որ այլազգիները լոկ հայերի հանդեպ համակրանքի բերումով են նշում հայերենը:

Լեզվի և ավանդույթների պահպանման ամենամեծ ջատագովներից է Հայ առաքելական եկեղեցին, որը ռումինահայերի կյանքում և առհասարակ մտահոգ է համայնքի խնդիրներով: 1960-2010 թթ. թեմի առաջնորդն էր եպիսկոպոս Տիրայր Մարտիկյանը, որին փոխարինեց եպիսկոպոս Տաթև Հակոբյանը: Եկեղեցին այսօր գործում քայլեր է ձեռնարկում պահպանելու այն հսկայական հոգևոր ժառանգությունը, որը հայերը թողել են Ռումինիայի ամենատարբեր բնակավայրերում: Աստիճանաբար մեծանում է այն քաղաքների թիվը, որտեղ հայկական եկեղեցիներում ամեն շաբաթ կամ երկու շաբաթ մեկ մատուցվում է պատարագ: Հարկ է նշել, որ Տրանսիլվանիայի հայկական եկեղեցիները կաթոլիկ են: Տրանսիլվանիայի տարբեր ազգերին հայ բնակչության ձուլումը հանգեցրեց հայոց լեզվի մոռացվելուն, այդ պատճառով հայկական եկեղեցիներում պատարագները մատուցվում են լատիներեն և հունգարերեն:

ՌՀՄ-ի և եկեղեցու հետ մեկտեղ ՀՀ դեսպանությունը (դեսպան՝ Համլետ Գասպարյան) նույնպես աջակցում է համայնքի խնդիրների լուծմանը և կապող օղակ է ռումինահայերի և Հայաստանի միջև: Դեսպանությունն

¹¹ Ռումինիայի ազգային վիճակագրության ինստիտուտի կայքէջ (ռումիներեն), 1992, 2002 և 2011 թթ. մարդահամարների տվյալները ըստ մայրենի լեզվի, <http://www.insse.ro/cms/>

ակտիվորեն ներգրավված է հայ-ռումինական գիտաժողովներում և մշակութային միջոցառումներում, ինչպես նաև նպաստում է Ռումինիայի և Հայաստանի տարբեր քաղաքների միջև հարաբերությունների ամրապնդմանը: Վերջին շրջանում երկու երկրների միջև կնքված պայմանագրերի, ինչպես նաև տարբեր ծրագրերի շնորհիվ Ռումինիա են ժամանում հայաստանցի ուսանողներ, որոնք իրենց հերթին նպաստում են համայնքի և Հայաստանի միջև կապի ամրապնդմանը:

Ամեն տարի ապրիլի 24-ին տեղի է ունենում ցույց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Ռումինիան դեռ չի ճանաչել այն՝ բազմաթիվ այլ երկրների պես հաշվի առնելով տնտեսական խորը կապերը թուրքական և ադրբեջանական ընկերությունների հետ: Հայկական համայնքը նշում է ՀՀ գրեթե բոլոր տոները, իսկ ամռանը Բուխարեստի Հայկական փողոցում կազմակերպվում է «Հայկական փողոց» կոչվող եռօրյա բացօթյա միջոցառումը, որն ուղեկցվում է հայկական երգերով ու պարերով, տարբեր հանդեսներով, որոնց մասնակցում են ինչպես հազարավոր ռումինացիներ, այնպես էլ այլ ազգային փոքրամասնություններ: Օգոստոսի կեսերին ռումինահայ երիտասարդները կազմակերպում են ճամբար երկրի հյուսիսում գտնվող Սուչավա քաղաքում, որտեղ հայերը դարեր շարունակ մեծ ազդեցություն են ունեցել, և որտեղ մինչև օրս գործում են երկու հայկական եկեղեցի և մեկ վանք, իսկ քաղաքից 3 կմ հեռավորության վրա գտնվում է Արևելյան Եվրոպայում բավականին հայտնի Հաճկատար հայկական վանքը (1512 թ.), որն ուխտատեղի է ոչ միայն հայերի ու ռումինացիների, այլև ուրիշ ազգերի համար:

ՌՀՄ-ն ունի 12 մասնաճյուղ Ռումինիայի տարբեր քաղաքներում՝ սփռված երեք պատմական իշխանություններում՝ Տրանսիլվանիա (Կլուժ, Գեռլա, Դումբրովեն), Մոլդովա (Յաշ, Բոտոշան, Սուչավա, Բակըու, Ֆոքշան, Գալաց), Վալախիա (Կոնստանցա, Տուլչա, Պիտեշտ): Նշված քաղաքներից միայն Կոնստանցան է, որ ունի 100-ից ավելի հայ բնակիչ, մյուսներում թիվն անհամեմատ փոքր է, ընդ որում՝ բոլոր քաղաքներում երիտասարդները միայն մի փոքր մասն են կազմում: ՌՀՄ մասնաճյուղերն իրենց հիմնական գործունեությունը ծավալում են մշակութային միջոցառումներ կազմակերպելով, գրքեր տպագրելով, որոնք մեծ մասամբ վերաբերում են հայկական համայնքի անցյալին: Ռումինիայում պահպանված է մեծածավալ արխիվային նյութ մի քանի դար շարունակ այնտեղ բնակված հայերի մասին, ինչպես նաև ձեռագիր և հնատիպ բազմաթիվ արժեքավոր գրքեր: Աստիճանաբար ուսումնասիրվում և տպագրվում են տարբեր քաղաքներում պահպանված արխիվները:

Այսօր Ռումինիան այն երկրներից է, որտեղ ազգային փոքրամասնություններն ունեն լայն իրավունքներ և Ռումինիայի հասարակության լիիրավ քաղաքացիներ են: Սրա մասին նշում են նաև բազմաթիվ ռումինահայեր՝ հատկապես ընդգծելով Ռումինիայի հանդուրժող վերաբերմունքը ազգային փոքրամասնությունների նկատմամբ և օրենքի տեսանկյունից իրենց պաշտպանված զգալը:

Քննարկվում է նաև այն հարցը, թե որքան կգոյատևի ռումինահայ համայնքը կամ ինչպիսին կլինի այն, օրինակ, հիսուն տարի հետո: Համայնքն այսօր ունի բոլոր նախադրյալները՝ Ռումինիայի հայկական մշակութային

հսկայական ժառանգությունը պահպանելու, ինչպես նաև իր ազդեցիկ ձայնն ունենալու ինչպես քաղաքական ասպարեզում՝ խորհրդարանում, այնպես էլ այլ ոլորտներում: Այս հնարավորություններից չօգտվելու պարագայում հնարավոր է ստեղծվի այնպիսի իրավիճակ, ինչպիսին այսօր Ռոմանում է. քաղաքի կենտրոնական այգիներից մեկում գտնվում է հայկական մեծ եկեղեցի (1609 թ.)՝ հայերեն բազմաթիվ արձանագրություններով, որոնք արդեն տասնյակ տարիներ սրբորեն պահպանում է ռումինացի քահանան, իսկ քաղաքում չկա և ոչ մի հայ, մինչդեռ 16-րդ դարում քաղաքի բնակչության կեսը հայեր էին:

Բանալի բառեր – *Ռումինահայոց միություն, Վարուժան Ոսկանյան, ազգային փոքրամասնություն, խորհրդարանական ընտրություններ, մարդահամար, մայրենի լեզու, ազգային ինքնություն, եկեղեցի*

АРСЕН АРЗУМАНЯН – Армянская община Румынии после революции 1989 года. – Во времена Чаушеску национальные организации в Румынии находились под запретом. Сразу после падения коммунистического режима новосозданный Союз армян, объединивший маленькие общины разных городов, активно включился в общественную и политическую деятельность; его представителю было выделено место в парламенте страны.

В статье рассматриваются национальное сознание румынских армян, ассимиляция и утрата ими родного языка в отсутствие национальных школ. Анализируется роль исторической родины и Апостольской церкви в сохранении армянской общины. Прослеживается также демографическая динамика путём сопоставления данных за каждые десять лет о проживающих в стране армянах. Анализ текущей ситуации даёт основание для прогноза на будущее. При этом использована не только научная литература и интернет-ресурсы, но также информация, собранная автором во время интервью с представителями общины.

Ключевые слова: *Союз армян Румынии, Варужан Восганян, национальное меньшинство, парламентские выборы, перепись, родной язык, национальная идентичность, церковь*

ARSEN ARZUMANYAN – The Armenian Community in Romania after the Revolution of 1989. – The article provides with an insight into the life of the Armenian community in Romania after the fall of the Communist regime in that country. Not having had an opportunity to have national organizations during the regime, however, having great cultural heritage as well as social inclusion in the country, the Armenian community experienced a prominent uprising in the early 1990s. A new era started for the Romanian Armenians' Union who soon secured a seat in the Romanian Parliament.

The article examines the Armenian community through different aspects – decennial alterations in the numbers of Armenians living in Romania; the national identification problem within the community; the representation of the community in the high political instances.

The article also explores such issues as the assimilation of Armenians with Romanians, the lack of Armenian schools with the Armenian language gradually not being practiced.

The role of the Armenian Church and the Republic of Armenia in keeping the Romanian Armenian community alive is discussed in the article. The Romanian Armenians' Union is seen as the main actor in bridging smaller Armenian communities of

different cities and uniting them through different activities.

The article also envisages the future of the Armenian Community in Romania by analyzing the current situation.

The article is not only based on academic literature and online resources but also on the personal meetings and interviews of the author with many members of the Armenian community.

Key words: *The Romanian Armenians' Union, Varujan Vosganian, national minority, parliamentary elections, census, mother tongue, national identity, church*

ՀՈՎՅԱՆՆԵՍ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԲՆԱՆԿԱՐՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼԻԼԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բնանկարչությունը՝ որպես գեղանկարչական առանձին ժանր, յուրահատուկ տեղ է զբաղեցնում համաշխարհային արվեստում: Դեռ նախնադարյան համայնական հասարակարգի ժայռապատկերներում հանդիպում են որոշ բույսերի և ծաղիկների պատկերներ: Հին աշխարհի արվեստում բնության նախնական, պարզունակ պատկերումները եղել են խորհրդանշական, ծիսական-կրոնական և մոգական բնույթի: Միջնադարում ստեղծված որմնանկարները, խճանկարները և գրքարվեստի օրինակները լեցուն են խորհրդանշական բնույթի բուսական պատկերներով: Մարդիկ բնության երևույթներն ընկալում էին կրոնական հավատալիքներին և գաղափարներին համապատասխան, հետևաբար բնության ամեն դրվագ ներկայացվում էր որոշակի խորհրդանշանի տեսքով: Միջնադարի վարպետները սահմանափակված էին կրոնական պատկերագրության կանոնակարգված և նախասահմանված սկզբունքներով: Այնուամենայնիվ, անգամ կղերական խիստ օրենքների և հսկողության պայմաններում ժամանակի լավագույն վարպետները կարողանում էին իրենց անհատականության դրոշմով օժտել նույնիսկ ծիլն ու ծաղիկը: Հայկական մանրանկարչության մեծանուն վարպետները խորանների և տոնական շարքի տեսարաններում մեծ ուշադրություն են դարձրել կենդանական և բուսական յուրաքանչյուր նախշի: Մանրանկարչության նմուշներում բուսական մոտիվները ռեալիստական են, սակայն միևնույն ժամանակ համապատասխանեցված են ձեռագրի դեկորատիվ հորինվածքին: Բուսական հրաշագեղ նախշերով և պատկերներով են պատված նաև հայկական միջնադարյան քանդակագործության բացառիկ նմուշները՝ խաչքարերը: Բացառություն չեն նաև միջնադարյան վանքերի որմնանկարները և բարձրաքանդակները:

Հատկանշական է, որ հայ և համաշխարհային արվեստում մինչև Վերածնության ժամանակաշրջանը գերիշխող էր բնության առավել միատիկ ընկալումը. մարդը միաժամանակ և՛ ականածանք ուներ բնության հանդեպ, և՛ վախենում էր բնության արհավիրքներից: Աստիճանաբար, բնության երևույթների ավելի խորը ճանաչողության և մարդու հնարավորությունների ընդլայնմանը զուգընթաց, փոխվում է մարդկության վերաբերմունքը բնության հանդեպ: Այն այլևս դադարում է ընկալվել որպես անճանաչելի ուժերի և տարերքների աշխարհ. մարդը սկսում է բացահայտել բնության առեղծվածները: Այսօր էլ, երբ մենք զնայլվում ենք բնության գողտրիկ տեսարաններով, շատ հաճախ ծառերի ու ծաղիկների մեջ տեսնում ենք աստվածային էության արտահայտումներ, քանի որ մեր բանականությունը տե-

ղեկությունը խորհրդանշանների վերածելու բնածին հատկություն ունի¹: Նախավերածնության շրջանի նշանավոր հունամիստ, բանաստեղծ Պետրարկան առաջիններից էր, որ բնանկարչության հիմքում կարևորեց քաղաքային եռուզեռից դեպի գյուղական անդորր փախչելու ծագումը: Ինչպես հայտնի է, նա առաջիններից էր, որ սար բարձրացավ՝ զնայվելու վերևից բացվող հրաշագեղ տեսարանով²: Հյուսիսային Վերածնության հռչակավոր վարպետներից Ալբրեխտ Դյուրերը ստեղծել է հայրենի Ինսբրուկ քաղաքի ջրաներկ պատկերը՝ որպես համաշխարհային արվեստում առաջին «քաղաքային դիմանկար»³: Դյուրերի բարձրարվեստ բնանկարները արժեքավոր են կատարման հմտությամբ: Դրանք հեռու են մեր այժմյան գեղագիտական նախասիրություններից: Վենետիկյան դպրոցի փայլուն ներկայացուցիչ և բոլոր ժամանակների լավագույն բնանկարիչներից մեկը՝ Ջիովաննի Բելլինի, փառավորում է բնանկարչության ժանրը և Վենետիկյան դպրոցը լույսի զգացմունքային ընկալման իր բացառիկ ունակությամբ: Վերածննդի գեղանկարչության մեջ լույսի պատկերումը աստվածային ամենագոր և ամենափրկիչ սիրո գերագույն արտահայտությունն էր: Հայկական միջնադարյան որմնանկարներում և մանրանկարներում լույսի պատկերումը՝ հաճախ ոսկյա թիթեղներով դրվագված, նույնպես խորհրդանշում է Աստծո ամենագոր սերը: Նոր ժամանակաշրջանի արվեստում լույսի պատկերումը վերածվում է գեղանկարչական ընդունված հնարքի, և հետագա դարերի վարպետներն արդեն այլ կերպ են օգտագործում ու մեկնաբանում այն:

Բնանկարչության ժանրը քսաներորդ դարում դառնում է արվեստի առաջատար ուղղություններից մեկը և մշակում իր գեղագիտությունը: Այս գեղանկարչական ուղղությունն ամենից քնարականն է և մոտենում է պոեզիային ու երաժշտությանը: Ինչպես երաժշտության, այնպես էլ բնանկարչության մեջ մարդը կարող է «լսել» իր իսկ հոգևոր աշխարհում ստեղծված մեղեդիները: Այս ժանրում մշտապես դրսևորվել է տարբեր ազգությունների վերաբերմունքը դեպի հայրենի բնությունը: Նկարչին հնարավորություն է ընձեռվում արտահայտելու ինչպես իր, այնպես էլ ժողովրդի փիլիսոփայական-գեղագիտական ընկալումը, արթուն պահելու հայրենասիրական զգացումները: Բնանկարչության մեջ մարդկայինը և ազգայինը ներկայացվում են բնության տարբեր երևույթների ու հույզերի տեսքով: Մարդկային իդեալները, աշխարհայացքը արտահայտվում են բնանկարչության մեջ՝ դառնալով ժամանակաշրջանի հոգևոր մթնոլորտի հայելի:

XX դ. առաջին տասնամյակներում բնանկարչության ժանրով էին ստեղծագործում ժամանակի տարբեր նորարարական գեղանկարչական հոսանքների անվանի ներկայացուցիչներ Անրի Մատիսը, Ալբեր Մարկեն, Մորիս Վլամինկը, Անդրե Դերենը, Ռաուլ Դյուֆին: Նրանց համար բնությունը ծառայում էր իբրև ոգևորության անսպառ աղբյուր: Պատմական այդ շրջանում աշխարհում տիրող գաղափարական բազմազանությունը հաճախ վերածվում էր քաոսի, ավանդական կրոնական հավատալիքները ժխտվում էին: Բնության հանդեպ ունեցած անկեղծ հավատը դառնում է կրոնի ձև:

¹ Տե՛ս **Кларк К.** Пейзаж в искусстве. СПб., 2004, էջ 19:

² Տե՛ս նույն տեղը, էջ 26:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 57:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին բնանկարչության ժանրով ստեղծագործում են մի շարք հայ արվեստագետներ, այդ թվում՝ Հարություն Շամշինյանը (1856-1914 թթ.), Ստեփան Աղաջանյանը (1863-1940 թթ.), Փանոս Թերլեմեզյանը (1865-1941 թթ.), Եղիշե Թադևոսյանը (1870-1936 թթ.), Յնայակ Հակոբյանը (1871-1939 թթ.), Յնայակ Արծաթպանյանը (1876-1920 թթ.), Մարտիրոս Սարյանը (1880-1972 թթ.) և ուրիշներ: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո բնանկարչությունն այն գեղարվեստական ուղղությունն էր, որի միջոցով հայ նկարիչները կարողացան կապ հաստատել նոր իրականության հետ⁴:

Գեղանկարիչ Հովհաննես Աբրահամի Ասատրյանը երկարատև կյանքի ընթացքում (1914-2006 թթ.) նախ ստեղծագործել է Մերձավոր Արևելքում (Սիրիա, Լիբանան, 1932-1946 թթ.), ապա՝ Խորհրդային Հայաստանում (1946-1974 թթ.) և ի վերջո՝ ԱՄՆ-ում (1975-2006 թթ.)՝ մշտապես աշխարհասփյուռ հայությանը ու առհասարակ արվեստասեր մարդկանց ներկայացնելով իր արվեստը՝ հայկական եկեղեցական ճարտարապետության և հայրենի բնության իր ընկալումը:

Բնակություն հաստատելով Լոս Անջելեսում՝ Հովհաննես Ասատրյանը ԱՄՆ է տեղափոխել իր գեղարվեստական ժառանգության զգալի մասը, որն այժմ պահպանվում է նկարչի ամերիկաբնակ ժառանգների մոտ: Արվեստագետի բազում գործեր գտնվում են Հայաստանի ազգային պատկերասրահի գլխավոր և այլ մասնաճյուղերում, Էջմիածնի պետական թանգարանում, Երևանի ժամանակակից արվեստի թանգարանում, Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում, Հալեպում գտնվող Սարյանի ակադեմիայի թանգարանում, Բուդապեշտի հայ կաթողիկե եկեղեցու թանգարանում, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության թանգարանում (Անթիլիաս, Լիբանան), Մխիթարյան միաբանության Վենետիկի Ս. Ղազարի և Վիեննայի թանգարաններում, Անգլիայի, Ֆրանսիայի և Եվրոպական այլ մասնավոր հավաքածուներում:

Նկարչի ինքնակենսագրական նյութերից տեղեկանում ենք, որ նա ծնվել է 1914 թ. Ամանոսի լեռներում գտնվող Հասանապեյլի կոչվող բնակավայրում⁵: Ասատրյանի ծնողները զոհվել են Հայոց ցեղասպանության օրերին: Որբահավաքներն այլոց հետ փոքրիկ Հովհաննեսին ևս տեղավորել են Բեյրութի Քելեկյան որբանոցում: Ասատրյանը 1926 թ. տեղափոխվել է Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատություն, որտեղ էլ ձեռք է բերել մասնագիտական հմտություններ: Տասնութամյա երիտասարդը մեկնում է ժամանակին Սիրիայի տարածքի մաս կազմող Ալեքսանդրեթ քաղաք և հաստատվում այնտեղ: Արդեն հինգ տարի անց նկարիչն իր անդրանիկ ցուցահանդեսն է կազմակերպում Հալեպում՝ ներկայացնելով ութսուն յուղաներկ և ջրաներկ ստեղծագործություն: Ասատրյանը նշել է, որ ամենից շատ սիրում ու զնահատում է գյուղական, աշխատունակ, պարզ և դրանով իսկ բազմաբեղուն կյանքը, որի սերը կուզեր ներշնչել ամեն մի հայի⁶:

⁴ Տե՛ս **Մ. Ա. Այվազյան**, Բնապատկերը սովետահայ գեղանկարչության մեջ, Եր., 1978, էջ 7:

⁵ Տե՛ս **Հ. Ասատրյան**, Ինքնակենսագրություն, Եր., 10 օգոստոսի, 1946 թ., Հայաստանի նկարիչների միության արխիվ, ֆոնդ 1352, անձնական գործ № 19, էջ 15:

⁶ Տե՛ս «Արև» օրաթերթ, Հալեպ, 23 սեպտ., 1937 թ., անստորագիր:

Կյանքին և բնությանը սիրահարված Ասատրյանը տարված էր արվեստի պատմության ուսումնասիրությամբ՝ ներառյալ քսաներորդ դարի արվեստը, հետաքրքրվում էր գեղանկարչական արդի հոսանքներով, որը հետագայում դրսևորվում է գեղանկարչի գործերում: Արվեստագետը մեծ ոգևորությամբ նկարչություն էր դասավանդում Հալեպի ազգային դպրոցում:

Թեև Հալեպում և Բեյրութում Ասատրյանի ցուցադրությունները մեծ հաջողություն են ունենում, այնուամենայնիվ 1946 թ., երբ հայերի բազում քարավաններ բռնեցին հայրենիք դարձի ուղին, նա կնոջ և զավակի հետ գալիս է Խորհրդային Հայաստան: Հայրենիքում, չնայած կյանքի և ապրուստի դժվարություններին, Ասատրյանը լիովին տրվում է սիրելի մասնագիտությանը: Դառնալով նկարիչների միության անդամ՝ 1946 թ. ի վեր նա մասնակցել է հանրապետական բոլոր և համամիութենական կարևորագույն ցուցադրություններին:

Բաղձալի հայրենիքում ապրելիս և ստեղծագործելիս նկարիչը, ծանոթանալով հայրենի չքնաղ բնությանը և ազգային ճարտարապետության գոհարներին, կերտել է հայաստանյան բնության անզուգական պատկերներ: Ասատրյանը նաև հայկական եկեղեցիներ պատկերող մի քանի տասնյակ գործեր է ստեղծել, որոնք, ըստ մեր ունեցած տվյալների, երբևէ միասնական ցուցադրության շրջանակներում չեն ներկայացվել: Դրանց ստեղծումը համակարգված բնույթ է ունեցել և ուղղորդվել է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի պատվերով, ում համար առաջնային էր Ասատրյանի բացառիկ օժտվածությունը ջրաներկի տեխնիկայում և մեծագույն նվիրումը, որով համակվել էր նկարիչը՝ պատկերելու հայկական եկեղեցական ճարտարապետության գոհարները:

1965 թ. նկարչի տան սրահներում բացվում է արվեստագետի ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը, որը ներկայացնում էր գեղանկարչի քսանամյա ստեղծագործական ուղին: Արվեստագետը կարողանում է ճանաչում ձեռք բերել նաև ԱՄՆ-ում՝ անհատական ցուցադրության մեծ հաջողության շնորհիվ: 1967 թ. հունվարի 8-ին Ֆրեզնոյի նահանգային քոլեջի արվեստի սրահում բացված ցուցահանդեսը բացառիկ երևույթ էր ամերիկահայության համար: Տեղական «Նոր օր» պարբերականում ամերիկահայ հայտնի գրող Վահե Հայկը նշել է, որ Ս. Էջմիածնի տաճարը, գեղատեսիլ Սևանը և այլ կոթողներ հայ կառավարության և ժողովրդի հոգածության տակ պահպանվում են իբրև անցյալից մնացած թանկագին գանձեր, և սրանք կարծես ծովեր ու լեռներ կտրել, ելել, եկել էին Ֆրեզնո՝ քաղցրագույն հիշատակներ բերելու քաղաքի հայերանկարտ հայությանը⁷: Ասատրյանի հերթական ցուցադրությունը կազմակերպվեց 1968 թ. հունիսի 10-ին Բեյրութի «Կալըրի Մանուկ» սրահում⁸:

Խորհրդային Հայաստանում նկարչի գործունեությանը խոչընդոտող գաղափարական հարատև ճնշումը և կյանքի դժվարությունները ստիպում են Ասատրյանին լքել հայրենիքը և 1975 թվականից ընդմիջտ հաստատվել Լոս Անջելեսում: Արվեստագետի վրձինն ԱՄՆ-ում բոլորովին այլ կտավներ

⁷ Տե՛ս **Վահե Հայկ**, Հայաստանէն բերուած նկարներու մեծարէնք ցուցահանդես մը, «Նոր օր», Ֆրեզնո, հունվ. 31, 1967 թ.:

⁸ Տե՛ս **Ս. Պ.**, Հայրենի գեղանկարիչ Հովհաննես Ասատրյան, «Այգ» օրաթերթ, Բեյրութ, 2 հուն., 1968 թ.:

է ծնունդ, որոնք արդեն մտային են, և բնությունը այլևս ներկա չէ դրանց մեջ. երազային նկարներ են, իրականից հեռու, գույները և ձևերը յուրահատուկ ոճով միաձուլվել են իրար, և ստեղծվել են նոր պատկերներ⁹: Յոթանասուն-մեկամյա նկարիչը վերստին ներկայանում է ամերիկահայ արվեստասեր հանրությանը, երբ Հայկական բարեգործական ընդհանուր միության ջանքերով կազմակերպվում է ցուցահանդես՝ նվիրված վաստակաշատ արվեստագետի ստեղծագործական հիսնամյա ուղուն՝ 1935-1985 թթ.: Հոբելյանական այս ցուցադրությունից հետո ամերիկահայ և խորհրդահայ մամուլում այլևս որևէ տվյալ չկա նկարչի հետագա գործունեության մասին: Հովհաննես Ասատրյանը կյանքից հեռացել է 2006 թ. հուլիսի 28-ին՝ ավելի քան յոթանասունամյա ստեղծագործական ուղի անցնելով Հալեպում*, Բեյրութում, Երևանում և Լոս Անջելեսում**:

Ստեղծագործական առաջին քայլերից Հովհաննես Ասատրյանը ցուցաբերել է իր նախասիրությունը բնանկարչական ժանրի հանդեպ: Տակավին երիտասարդ նկարիչը դեռ Հալեպում բնակվելու տարիներին մշտապես շեշտել է, որ բնությունն է իր արվեստի գլխավոր միջավայրը: Պատահական չէ, որ քնարերգու բնանկարիչը որակվել է որպես «ներ նկարչության Մեծարեմք»¹⁰: Իսկապես, արևմտահայ անվանի գրողի բանաստեղծությունների մասն Ասատրյանի բնապատկերներն օժտված են հավիտենական լույսով և բարի հույզերի առատությամբ, ծիլերով ու ծաղիկներով, բնության հուզական ներկայությամբ: Խորհրդահայ արվեստաբան Մարիամ Այվազյանը ժամանակին գրել է. «Հովհաննես Ասատրյանը քնարերգու նկարիչ է: Նրա նկարները կարծես վարպետորեն գրված քառյակներ են, որոնք դիտողին փոխադրում են նկարչի բանաստեղծական, անկեղծ ու պարզ ապրումների աշխարհը»¹¹:

Հայոց ցեղասպանության հետևանքով անժամանակ որբացած Հովհաննեսը դեռ մանկուց անձնական մեծ վիշտը փարատելու և միայնությունը սփոփելու լավագույն միջոցը գտել է բնության գեղեցկության, ներդաշնակության և կատարելության մեջ: Սիրիայում և Լիբանանում ստեղծագործելու տարիներին Ասատրյանի ցուցադրություններում ներկայացված ստեղծագործությունների մեծ մասը յուղաներկ կամ ջրաներկ պատկերներ էին: Սրանք հաճախ տիպիկ սիրիական, արևելյան տեսարաններ էին: Երբեմն էլ նկարչի արվեստում զգացվում էր XX դ. եվրոպական գեղանկարչական հոսանքների, հատկապես ֆովիզմի ներգործությունը: Այդ օրերին Սիրիան գտնվում էր ֆրանսիական իշխանությունների հոգածության ներքո, ուստի զարմանալի չէ, որ Ասատրյանի արվեստը լուսաբանվել է նաև ֆրանսիական մամուլի էջերում:

⁹ Տե՛ս «Գեղանկարիչ Հ. Ասատրյանի ցուցահանդեսը», «Նոր օր», Լոս Անջելես, 1 հոկտ., 1985 թ.:

* Պահպանվել են երկու հազվագյուտ հողվածներ Հալեպի "L'éclair du nord" թերթի 1943 և 1944 թթ. համարներում (ՀԱՊ արխիվ):

** Տարիներ առաջ նկարչի արվեստի ուսումնասիրման համար մեկնակետ հանդիսացավ արվեստագիտության դոկտոր Լ. Չուզասզյանի կողմից ԱՄՆ-ից նկարչի ինքնակենսագրականը և նկարների պատճենները Երևան բերելու հանգամանքը:

¹⁰ «Առավոտ» թերթ, Հալեպ, 1943 թ., անստորագիր (ՀԱՊ արխիվ):

¹¹ Մ. Այվազյան, Անհատական ցուցահանդես, «Սովետական արվեստ» ամսագիր, 1965, № 12, էջ 12:

1946 թ. Ասատրյանը արվեստագետներ Գրիգոր Ահարոնյանի (1896-1980 թթ.), Բարդուղ Վարդանյանի (1897-1987 թթ.), Հարություն Կալենցի (1910-1967 թթ.), Արմինե Կալենցի (1920-2007 թթ.), Պետրոս Կոնտուրաջյանի (1905-1956 թթ.), և այլոց հետ վառ երազներով և լավագույն սպասումներով գալիս է Խորհրդային Հայաստան, ուր վերածնվում է նկարչի հայրենակարոտ և անսփոփ հոգին: Հայրենիք վերադառնալուց և Հայաստանի նկարիչների միության շարքերը համալրելուց հետո անձնվիրաբար տրվում է սիրելի մասնագիտությանը և Խորհրդային Հայաստանում ապրած ու ստեղծագործած երեք տասնամյակներում վրձնում հայրենի բնաշխարհը պատկերող մի քանի տասնյակ անզուգական նկարներ: Որպես նկարիչների միության անդամ և ազգային ու համամիութենական ցուցադրությունների մշտական մասնակից՝ Ասատրյանը հաճախ էր մեկնում Հայաստանի տարբեր շրջաններ՝ ստեղծելու խորհրդահայ մարդու կենցաղը և աշխատանքը գովերգող բնապատկերներ: Քանի որ գեղանկարչի պատանեկությունը, ինչպես ասվեց, անցել էր Արևելքում, ուստի Ասատրյանն այս գործուղումները ընկալում է որպես բացառիկ հնարավորություն՝ տեսնելու և ճանաչելու Հայաստանը, և մեծ ոգևորությամբ ձեռնամուխ է լինում հայրենի բնության պատկերմանը: Տարիներ անց՝ 1968 թ. բեյրության ցուցահանդեսից հետո, նկարիչը հպարտորեն բարձրաձայնում է. «*Հայրենի հողը իմ ոտքերի տակ, կապույտը իմ գլխի վերև, վերածնված կյանքն իմ հոգում, իրականացված երազներ իմ բարախող սրտում, ես էլ ինձ նման շատերի պես մեկ անգամ ընդմիջտ և կյանքում առաջին անգամ լինելով ճանաչեցի այն միակ ու ճշմարիտ իրողությունը, ինչքան չէ իրականությունը, թե մարդ արարածին միայն ու միայն Մայր Հայրենիքն է երջանկացնում, իրական մարդու աստիճանի բարձրացնում: Առանց հայրենիքի չկա մարդկային ու մարդու չափանիշ*»¹²:

Հովհաննես Ասատրյանին վիճակվեց ապրել և ստեղծագործել Հայաստանում այն տարիներին, երբ բազում տաղանդավոր և արդեն ճանաչում ձեռք բերած գործընկերների կողքին Գրիգոր Խանջյան (1926-2000 թթ.), Մինաս Ավետիսյան (1928-1975 թթ.), Ալեքսանդր Գրիգորյան (1928-2007 թթ.), Հենրիկ Սիրալյան (1928-2001 թթ.), Լավինիա Բաժբեուկ-Մելիքյան (1922-2005 թթ.), Վրույր Գալստյան (1924-1996 թթ.), Աշոտ Հովհաննիսյան (1929-1997 թթ.), Մարտին Պետրոսյան (ծնվ. 1933թ.), Վալենտին Պողոսյան (1924-1998 թթ.), Ռուդոլֆ Խաչատրյան (1937-2007 թթ.), Գայանե Խաչատրյան (1942-2009 թթ.) նա պետք է հարթեր ուրույն ճանապարհ, քարոզեր իր գեղարվեստական աշխարհայացքը, բնության ու հայրենիքի սեփական ընկալումը: Նկարիչը մեծարում էր Մարտիրոս Սարյանին, և ինչպես այդ տարիների շատ նկարիչներ, Ասատրյանը ևս կրել է սարյանական արվեստի ազդեցությունը: Ինչպես մեծ վարպետի կտավներին, այնպես էլ Ասատրյանի բնապատկերներին բնորոշ են հունամիզմը, ժողովրդի և հայրենիքի հանդեպ ունեցած անսահման սերը, բնության հանդեպ մեծ հետաքրքրությունը, պատկերված տեսարաններում տարածված կարծրատիպերի բացակայությունը, լույսի պատկերմանը մեծ տեղ տալը, գունային ներդաշնակությունը:

¹² Ս. Պ., Հայրենի գեղանկարիչ Հովհաննես Ասատրյան, «Այգ» օրաթերթ, Բեյրութ, 2 հունիսի, 1968 թ.:

1950-1960-ական թվականներին ստեղծված Հայաստանի բնապատկերները ներկայացնում են նկարչի անմիջական ծանոթությունը հայրենի չնաշխարհիկ բնության հետ: Իմպրեսիոնիզմի մեծանուն ներկայացուցիչ Կլոդ Մոնեն ամերիկացի իր աշակերտներից մեկին ասել է, որ «կցանկանար կույր ծնվել և այնուհետև հանկարծակի կարողանար տեսնել, որպեսզի վերստին սկսեր նկարել՝ առանց իմանալու իր առջև գտնվող առարկաների էությունը և բնույթը»¹³: Ճակատագիրը Ասատրյանին նման մի հնարավորություն ընձեռել էր. նկարիչը վրձնելու ընթացքում էր ճանաչում հայրենի բնության ամեն մի անկյուն, որ տեսնում էր առաջին անգամ:

Ասատրյանի բնանկարային արվեստի հատկանշական կողմերն են տպավորությունների թարմությունը, անմիջական ընկալումը, մեծ մասամբ վառ գունային երանգները: Որոշ բնանկարներ մոտ են բնության պատկերման արստրակտ եղանակին: Բնապատկերներն առույգ ու զվարթ շնչով են կենսավորված, հագեցած են լույսով և համակված են քնարական խոր ապրումներով: Այս ստեղծագործությունները պատմում են նկարչի ներաշխարհի մասին, արձագանքում նրա սրտի նվիրական զգացումներին այնպես, ինչպես երաժշտության հնչյունները: Ասատրյանն իր բնանկարների մեջ ցուցաբերում է որոշակի նախասիրություն. գույների ընտրության հարցում նախապատվություն է տալիս թանձր, հագեցած կապույտի, մանուշակագույնի, կանաչի, դեղինի տարբեր երանգներին: Բնապատկերների մեծ մասում նկարիչն աշխատել է խոշոր, հյութեղ վրձնահարվածներով, որոնց շնորհիվ կտավներում զգացվում է բնության տարերային, փոփոխական էությունը: Բնականաբար, այս տեխնիկայով կատարված բնապատկերներն իրենց տրամադրությամբ տարբեր են Մարտիրոս Սարյանի պանթիստական բնանկարներից, որոնցում ժամանակն ասես կանգ է առել՝ հավերժացնելու բնության աստվածային գեղեցկությունը: Գեղանկարչության համար կարևորագույն նշանակություն ունեցող լույսի խնդիրը Ասատրյանի բնանկարներում հետաքրքիր լուծում է ստանում. գունային վառ երանգներով պսպղացող բնապատկերներում խոշոր սպիտակ բծերի օգտագործմամբ նկարչին հաջողվել է կտավները արևային կենսատու ջերմությամբ պարուրել: Սպիտակ գունաբծերի կիրառումը որպես երկնային լույսի արտահայտություն հանդիպում է նաև միջնադարյան որմնանկարչության մեջ, մասնավորապես՝ Բյուզանդիայում ու Կիևյան Ռուսիայում ստեղծագործած, ծագումով հույն, նշանավոր որմնանկարիչ Թեոֆան Գրեկի նկարագարդած Նովգորոդի Սբ. Փրկչի եկեղեցում: Սպիտակ գունաբծերը Ասատրյանի կտավներում ներդաշնակ միահյուսված են հորինվածքի մեջ և երաժշտական-քնարական տրամադրություն են ստեղծում: Դիտակետերի ընտրության հարցում նկարիչն ազատ է եղել և յուրաքանչյուր տեսարանի համար փորձել է ինքնատիպ լուծում ստանալ: Հաճախ տեսարանները կառուցված են մի քանի հարթությունների աստիճանական տեղադրությամբ, երբեմն էլ՝ անկյունագծային կամ պարուրածն ռիթմով: Հայաստանում ստեղծված առավել վաղ ստեղծագործություններում նկարչին զբաղեցրել են գունային վառ երանգների տարբեր համադրությունների, արևային լույսի, հորինվածքի դիտակետի և ներքին տարածության կազմակերպման խնդիրները: Արդեն 1960-ական թթ. որոշ բնապատկերներում

¹³ Кларк К., 2-й. 2-й, с. 207:

զգալի է Ասատրյանի ոճական փոփոխությունը: Գեղանկարիչն իր ստեղծագործություններում մեծ տեղ է սկսում տալ երկրաչափականացված ձևերին. գունաշարը ավելի է հարստանում երանգներով, և անխառն գույնի կիրառումը հազվադեպ է:

Ասատրյանի ստեղծագործությունների շարքում առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում յուրաներկով կատարված մի շարք բնապատկերներ, որոնցում, դիմելով ֆովիստական գեղարվեստական ուղղության հնարքներին նկարչին, հաջողվել է ստեղծել հայրենի բնության գեղանի պատկերներ: Մարիամ Այվազյանն արդարև նկատել է, որ Ասատրյանը բնությանը միշտ նայում է սիրահարվածի աչքով, կարողանում է տեսնել գրեթե անորսալի պահերը, և դրա համար էլ սովորական աչքին աննկատ շատ մանրուքներ նկարչի գործերում հասնում են երփնագրային գեղեցկության և բանաստեղծական ներշնչանքի¹⁴: Ասատրյանի արվեստն ուսումնասիրելիս արվեստաբան Վահան Զարությունյանը ևս նկատել է ֆովիզմին հարելը և հետֆովիզմյան դեկորատիվիստների ազդեցությունը նրա արվեստում¹⁵:

Հիրավի, ասատրյանական մի շարք բնանկարներ օժտված են ֆովիզմին բնորոշ հնարքներով, այն է՝ գեղանկարչության գունային հնարավորությունների առավելագույն արտահայտում, բացառիկ լուսավորվածություն, ոչ դասական-ավանդական լուսաստվերային մոդելավորում, բնության տվյալ տեղանքի պատկերում-ձևավորում բացառապես գույնի միջոցով: Ասատրյանը, սակայն, երբևէ իրեն ֆովիզմի հետևորդ չի անվանել: Վերոնշյալ գեղարվեստական ուղղության որոշակի ազդեցություն տեսանելի է նաև այս շրջանում ստեղծագործող մի շարք արվեստագետների բնապատկերներում (Մարտիրոս Սարյան, Զարություն Կալենց, Ալեքսանդր Գրիգորյան, Հովհաննես Զարդարյան, Մինաս Ավետիսյան, Պետրոս Կոնտուրաջյան, Միեր Աբեղյան): Այս անվանի գեղանկարիչներից յուրաքանչյուրը, օգտվելով XX դարի գեղարվեստական ուղղությունների հարուստ շտեմարանից, յուրացրել, վերաիմաստավորել և իր արվեստում նորովի ու ինքնատիպ ձևով արտահայտել է իր աշխարհայացքը և գեղարվեստական ընկալումը: Գունապաշտների ազդեցությամբ ստեղծված Ասատրյանի բնանկարների նախնական ոճը հստակ ուրվագծվում է 1956 թ. վրձնած երկու նկարներում: Պատկերներից առաջինում սարի ստորոտում ծվարած գյուղական բնակավայր է: Գունաշարում տիրապետող են շագանակագույնի, կանաչի և կապույտի երանգները, որոնք հանդես են գալիս որպես երկնքի, երկրի, գյուղի, ծառի, մարդկանց պատկերելու գլխավոր արտահայտչամիջոցներ: Լուրթ երկնքի ֆոնին հառնում է մի հզոր սար, որն ասես պատսպարել է այդ գյուղական բնակավայրն իր ստորոտում և ապավեն ու պաշտպան է այնտեղ բնակվողների համար: Ներկայացված է խաղաղությամբ ապրող և աշխատող գյուղացիների կենցաղը, սակայն հանգստության մթնոլորտը անսպասելիորեն խախտվում է նկարի ձախ անկյունում քանուկ ճկված հսկա ծառի պատկերով, որն աչքի է ընկնում

¹⁴ Տե՛ս Մ. Ա. Այվազյան, նշվ. աշխ., էջ 12:

¹⁵ Տե՛ս Վահան Զարությունյան, Քննարկում ենք մեր կերպարվեստի հարցերը. Միասնական, բայց ոչ միատարր, «Սովետական արվեստ», 1966 թ., № 6, էջ 15-20:

չքել զմրուխտե սաղարթով: Ծառի էքսպրեսիվ ներկայացմամբ նկարիչը նպատակ է ունեցել ցույց տալու, որ անգամ խաղաղ միջավայրում կարող է անսպասելի քամի փչել և լարում առաջացնել: Այդ ծառն արտացոլում է մարդու տարերային տրամադրությունը, իսկ հեռվում երևացող վեհ սարը հավերժականի, իմաստության խորհուրդ ունի: Նույն թվականին ստեղծված մեկ այլ բնանկարում երկինքը, սարը և բնությունը միախառնվում և ներկայանում են որպես մեկը մյուսից առաջացող տիեզերական ուժեր: Այստեղ Ասատրյանին առանձնակի գրավել է լույսի խնդիրը. անգամ առանց ավանդական լուսաստվերային մոդելավորման նրան հաջողվել է ստանալ գույնի և լույսի փոխհարաբերության հիանալի լուծումներ: Նկարիչը հմտորեն կենսավորում և ներկայացնում է այն տեսակետը, որ լույսի ազդեցությամբ բնությունը և առարկաները երբեմն կարող են ստանալ իրականությունից հեռու գունային երանգավորում: 1958 թ. ստեղծված բնանկարներից մեկում բնությունը և գյուղական բնակավայրը այնքան ներդաշնակ և ընդհանրական են ներկայացված, որ դժվար է որոշել մարդուն և բնությանը զատող գիծը: Ասատրյանական բնանկարները ողողված են արևային լույսով, և կտավից աննկարագրելի ջերմություն է ճառագում: Դա այն ջերմությունն է, որ երկար տարիներ ծվարել էր հայրենիքից հեռու ապրող արվեստագետի հոգում և միայն հայրենի հողում կարողացավ իր լավագույն արտահայտությունը գտնել արվեստագետի գործերում: Ասատրյանն իր բնապատկերներում մարդկանց պատկերել է որպես բնության գեղեցկության անբաժան ուղեկիցներ: Խոշոր պլանով ստեղծված մարդկային ֆիգուրները տարածված չեն եղել նրա բնանկարներում: Այս տեսանկյունից արժեքավոր է 1959 թ. ստեղծված բնապատկերը: Կտավի ներքին տարածության աջ անկյունում մինչև կուրծքը երևացող կնոջ դիմանկար է տեղադրված, որի հագին ազգային տարազ է: Ինչ-որ անբացատրելի թախիծ է պարուրել նրա գեղեցիկ և նուրբ դեմքը, իսկ մտածկոտ հայացքը սևեռված է հեռուն:

Ոճական փոփոխությունն ակնհայտ է նկարչի՝ 1961 թ. ստեղծած բնապատկերում, որում գույները յուրօրինակ երթուղով շարժվում են, միանում, իրար շարունակում, բայց նաև ընդհատվում: Առաջին հայացքից թվում է, թե գունային նկարագարը մի գորգ է ներկայացված, սակայն Ասատրյանը աբստրակտ ոճի ներկայացուցիչ չէ. հիշյալ կտավում նրան զբաղեցրել է գույնի հորինվածքաստեղծ հնարավորության կիրառումը, բայց նա չի ձգտել տարրալուծել այդ գույները և կորցնել կապը իրականության հետ:

Ինչպես վերը նշվել է, Խորհրդային Հայաստանում ստեղծագործելու տարիներին նկարիչը հեղինակել է հայկական եկեղեցիների տասնյակ ջրաներկեր և մի շարք յուղաներկ ստեղծագործություններ, որոնք մեծ արժեք են ներկայացնում հայ արվեստի ուսումնասիրության պատմության մեջ հայկական եկեղեցական ճարտարապետության պատկերման առանձնահատկությունների մասին ավելի լայն պատկերացում կազմելու առումով: Այս ստեղծագործություններում նկարիչը կարևորել է պատմամշակութային և հոգևոր նշանակություն ունեցող հուշարձանների առավել ինքնատիպ հատ-

կանհիշների պատկերումը: Ջարմանալի չէ, որ գեղանկարիչը իր որոշ բնապատկերներում ևս ընդգրկել է եկեղեցական կառույցի պատկեր՝ այս դեպքում իր առջև ունենալով բոլորովին այլ խնդիր: 1962 թ. թանձր գույների խոշոր և էքսպրեսիվ վրձնահարվածներով ստեղծված բնանկարում տեսնում ենք տներից վեր խոյացող եկեղեցու սրածայր գմբեթ: Վերջինս քրիստոնեական հավատքի խորհրդանիշ է և ոչ թե որոշակի եկեղեցու հատված: Նույնիսկ կարևոր չէ, թե այդ բնակավայրում եկեղեցի եղել է, թե ոչ, կամ եթե եղել է, ապա ո՞ր եկեղեցին է: Այս կտավում հետաքրքիր է գունային բաշխման լուծումը: Հետին պլանում գտնվող լեռները ողողված են լույսով և պատկերված են բաց կանաչի, մանուշակագույնի, կապույտի, դեղինի տարբեր երանգներով, իսկ առջևի մասում պատկերված ծառերի սաղարթները կատարված են յուրօրինակ մուգ կանաչակապտաշագանակագույն մի երանգով, որը նախկինում չի կիրառվել:

Ջրաներկի տեխնիկայում նկարիչը մեծ վարպետության է հասել եկեղեցական ճարտարապետության գոհարները պատկերող իր բազմաթիվ ստեղծագործություններում, սակայն այս նույն տեխնիկայով կատարված ասատրյանական բնապատկերները ևս հատկանշվում են գեղանկարչական բարձր որակով: Արդեն իսկ 1950-ական թթ. ջրաներկ բնանկարներում արտահայտվել են Ասատրյան-բնանկարչի գունային և ձևաճանկան նախասիրությունները: Արարատն ու շրջակա տարածությունը պատկերող 1954 թ. ջրաներկում, օգտագործելով այս տեխնիկայի և ջրաներկերի ամենահամեստ հնարավորությունները, նկարիչը կարողացել է հասնել բացառիկ արտահայտչականության: Հետնապատկերում երևացող աստվածաշնչյան լեռը պատկերված է հազիվ նշմարվող ուրվապատկերի տեսքով, որի միջոցով նկարիչը կարևորել է Արարատի խորհրդանշական էությունը մեր ժողովրդի և կրոնի համար: Հեղինակային երկու տարալեզու ստորագրությամբ (ձախ անկյունում՝ 1957 թ. և անգլերեն, աջ անկյունում՝ ռուսերեն և 1958 թ.) ջրաներկ բնանկարում լեռների խորապատկերին դաշտում քրտնաջան աշխատող գյուղացին է, սա բնության գրկում տքնող և հայրենիքը շենացնող մարդու գովերգումն է: 1958 թ. ստեղծված մի քանի ջրաներկերը բնության և մարդու գործունեության ներդաշնակման հերթական ներբողներ են: Այս բնանկարներում տիրապետող են կանաչի, կապույտի և մանուշակագույնի թափանցիկ երանգավորումներով կատարված լեռների, գետերի, դաշտերի, գյուղական ցածրիկ ինքնաշեն տնակների, ձիասայլերի և աշխատանքով տարված գեղջուկների մոտիվները: Կիրառված նուրբ երանգավորումների շնորհիվ այս պատկերները քնարական տրամադրությամբ են համակված, ջերմ ու հյուրընկալ մթնոլորտ են ստեղծում: Ի տարբերություն գունեղ յուղաներկ բնապատկերների, որոնք արևաշատ են և ներքին շարժումով լի, ջրաներկ բնանկարները մեծամասամբ անդորրավետ տեսարաններ են: Այս պատկերներում ցերեկային մեղմ լուսավորությունը ներդաշնակ է բնության գրկում սիրով և խաղաղությամբ աշխատող մարդկանց հոգեվիճակին:

Հովհաննես Ասատրյանն իր յուղաներկ և ջրաներկ բնապատկերների միջոցով արտահայտել և գովերգել է սերը առ կյանք ու բնություն: Բնան-

կարի փայլուն վարպետներ Մարտիրոս Սարյանի, Սեդրակ Առաքելյանի, Հովհաննես Զարդարյանի, Հարություն Կալենցի արվեստի միջավայրում ապրող և ստեղծագործող Ասատրյանն իր յուզաները բնանկարներում աշխատել է հիմնականում ֆովիստական հնարքներով, սակայն այդ գործերը նրա զգացմունքներին համապատասխանող հնչյուններով են ստեղծված և պատմում են հեղինակի հոգու գեղեցկության մասին: Կյանքին, հայրենիքին և բնությանը սիրահարված նկարիչը հայաստանյան բնապատկերներում արտահայտել է բնության, սիրո, աշխատանքի, կենցաղի, գեղեցիկի և արվեստի սեփական ընկալումը: Գեղանկարչի ֆովիստական ոճով կատարված վերը նշված բնապատկերների (1950-60-ական թթ.) հիմնական առանձնահատկություններն են առանց ավանդական լուսաստվերային մոդելավորման գույնի և լույսի փոխհարաբերության հիանալի լուծումները, երբեմն նոր, համարձակ գունաշարի կիրառումը, մարդկային կերպարների հուզական տրամադրության ներկայացումը, բնության տեսարանների «բանաստեղծական» վերարտադրումը: Ասատրյանի բնապատկերները առանձնանում են արտասովոր քնարականությամբ, որով էլ էապես տարբերվում են իր կողքին ստեղծագործող մյուս բնանկարիչների աշխատանքներից:

Քնարերգու բնանկարչի համար հայրենի բնաշխարհը ոգևորության անսպառ աղբյուր էր: Հայրենի արևի ջերմ լույսով ողողված կտավներում Ասատրյանը փորձել է հորինել հայրենիքի բնությանը ներդաշնակ անձնական գունաշարը և իր հոգու տավրի քնարական մեղեդին հյուսելով իր արվեստին փոխանցել է կենսապարզ, սրտապարար, արփիավոր և սիրատուչոր հնչյուններ:

Բանալի բառեր – *Վերածնունդ, բնանկարներ, ցուցահանդես, յուզաներ, ջրաներկ, ֆովիզմ, գունաշար, հորինվածք*

ЛИЛИТ ХАЧАТРИАН – Особенности пейзажей Ованнеса Асатрянна. – В годы геноцида О. Асатрян остался сиротой, жил и творил в Сирии и Ливане, в 1946 г. репатриировался в советскую Армению. Основную часть его наследия составляет пейзажная живопись. Его пейзажи, созданные в молодости, отразили воздействие, которое оказали на художника европейские авангардистские течения, прежде всего фовизм. Армянские пейзажи 1950–1960-х годов запечатлели непосредственное знакомство с природой родины и отмечены свежестью впечатлений. В них преобладает яркая цветовая гамма и слышны отголоски абстрактной живописи. Акварельные работы Асатрянна воспевают крестьянский труд, одухотворены и создают у зрителя лирическое настроение.

Ключевые слова: *Возрождение, пейзажи, выставка, масляная живопись, акварель, фовизм, цветовая гамма, композиция*

LILIT KHACHATRYAN – Features of Hovhannes Asadourian's Landscapes. – The paper is devoted to the description and critical analysis of some features of landscapes of Armenian painter Hovhannes Asadourian. Being an orphan of Armenian Genocide since childhood Asadourian found solace in the beauty of nature, in harmony

and perfection. Asadourian lived and created landscape works in Syria and Lebanon. In these works the impact of European art movements of the XX century and Fauvism in particular, are observed. In 1946 the artist repatriated to Soviet Armenia, where he lived and worked for over three decades. Armenian landscapes of 1950-1960s are direct acquaintance of the artist with marvelous nature of his beloved homeland. These works are marked by freshness of impressions, mostly bright colors are similar to abstract images of nature. Watercolour landscapes praise the peaceful labour of the peasants and are spiritualized with lyrical feelings. They respond to his inner feelings, just as the sounds merge into music.

Key words: *Renaissance, landscape art, exhibition, oil painting, watercolour technique, fauvism, colouring, composition*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

- 1. ԷԼՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ** – ԵՊՀ աստվածաբանության ամբիոնի ասպիրանտ, Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (մատենադարան) ձեռագրագիտության և մայր ցուցակի բաժնի գիտաշխատող
ЭЛЯ САРИБЕКЯН – аспирантка кафедры богословии ЕГУ, научный сотрудник Института древних рукописей – Матенадарана им. Месропа Маштоца
ELYA SARIBEKYAN – PhD student of the Chair of Theology, YSU, researcher of Codicology department of the Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
Էլ. հասցե՝ elenmagistros@yahoo.com
- 2. ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ** – պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայ եկեղեցու պատմության ամբիոնի դոցենտ
АШОТ МАНУЧАРЯН – кандидат исторических наук, доцент кафедры истории Армянской церкви ЕГУ
ASHOT MANUCHARYAN – PhD, Associate Professor of the Chair of History of Armenian Church, YSU
- 3. ՎԻԿՏՈՐՅԱ ՎԱՍԻԼՅԱՆ** – ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի հայցորդ
ВИКТОРИЯ ВАСИЛЯН – соискательница кафедры истории и теории армянского искусства ЕГУ
VICTORYA VASILYAN – Dissertree of the department of History and Theory of Armenian Art, YSU
- 4. ԳԱՅԱՆԵ ՀԱՎՈՐՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, Երևանի Յուրսիսային համալսարանի հայոց լեզվի, գրականության և լրագրության ամբիոնի դասախոս
ГАЯНЕ АКОПЯН – кандидат филологических наук, преподаватель армянского языка, литературы и журналистики Ереванского Северного университета
GAYANE HAKOBYAN – PhD, Lecturer of the Armenian Language, Literature and Journalism, Northern University of Yerevan
- 5. ԼԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ
ЛИАНА САРКИСЯН – кандидат филологических наук, ассистент кафедры армянского языка ЕГУ
LIANA SARGSYAN – PhD, Assistant Professor of the Chair of Armenian Language, YSU
Էլ. հասցե՝ sargsyanlian@mail.ru
- 6. ԱՐՍԵՆ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ** – Բուխարեստի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի դոկտորանտ
АРСЕН АРЗУМАНЯН – докторант факультета политологии Бухарестского университета
ARSEN ARZUMANYAN – Doctoral Candidate of the Faculty of Political Science of the University of Bucharest
- 7. ԼԻԼԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆ** – ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի ասպիրանտ
ЛИЛИТ ХАЧАТРЯН – аспирантка кафедры истории и теории армянского искусства ЕГУ
LILIT KHACHATRYAN – PhD student of Chair of History and Theory of Armenian Art, YSU

**«ԲԱՆՔԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» ՀԱՆԴԵՍԻ «ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ՇԱՐՔԻ 2014 Թ. ՀԱՄԱՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ավետիսյան Յուրի – Լեզվական նորմ. նորմավորման չափանիշները	2.3*
Արզումանյան Արսեն – Ռումինահայ համայնքը 1989 թ. հեղափոխությունից հետո.....	3.55
Դեմիրճյան Պետրոս – Տիրան Չրաքյանի (Ինտրա) մանկավարժական հայացքները	1.30
Ջաքարյան Հովհաննես – Քանդակ և Արձան բառերի ստուգաբանությունը	2.44
Խաչատրյան Լիլիթ – Հովհաննես Ասատրյանի բնանկարների առանձնահատկությունները.....	3.65
Հակոբյան Գայանե – Հանրության քողարկված կառավարման մոդելը (PR) Հ. Թումանյանի «Քաջ Նազարը» հեքիաթում	3.34
Հակոբյան Կարապետ – Ռուս-թուրքական սահմանն անցած առաջին կամավորական խմբերի ազդեցությունը արևմտահայ ազատագրական պայքարի վրա	2.29
Հակոբյան Հայկ – «Աշխարհիկ միաբանների» ինստիտուտը միջնադարյան Հայաստանում.....	2.19
Հարությունյան Գառնիկ – «Խոստովանութիւն Անտիոքայ» գրվածքի հեղինակի հարցի շուրջ.....	2.13
Հարությունյան Ռուզաննա – Մարզպանական Հայաստանի ռազմական ուժը և Սասանյան Պարսկաստանի քաղաքականությունը	1.14
Մանուչարյան Աշոտ – Սյունյաց թագավորության հիմնադիր Սմբատը Սահակի° որդին է, թե° Վասակի	1.22
Մանուչարյան Աշոտ – Թալինի նորահայտ վիմագիրը և հազարապետի պաշտոնի պատմական գործառույթները	3.12
Պողոսյան Վարուժան – Հայոց ցեղասպանության հիմնախնդիրների լուսաբանումը կապիտան Սենյոբոսի կողմից.....	1.3
Սարգսյան Լիանա – Բայերի սեռային անցումներ արդի արևելահայերենում	3.45

* Թվերից առաջինը նշանակում է «Բանբեր Երևանի համալսարանի» «Հայագիտություն» շարքի համարը, իսկ երկրորդը՝ հոդվածի էջը:

Սարիբեկյան Էլյա – Հոբի գրքի՝ Իսիքիոս Երուսաղեմացու և Գրիգոր Տաթևացու մեկնությունների աղերսները **3.3**

Վասիլյան Վիկտորյա – Թագուհիների պատկերագրումը հեղինակական Հայաստանի արվեստում **3.18**

ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑՈՒ ԾՆՆԴՅԱՆ 400-ԱՄՅԱԿԸ

Աղախանյան Հայարիփի – Ոսկան Երևանցին և հայ վաճառականությունը... **1.68**

Միրզոյան Հրաչիկ – Ոսկան Երևանցու ինքնակենսագրությունը **1.43**

Պողոսյան Նորայր – Ոսկան Երևանցու քերականական ժառանգությունը... **1.54**

ԵՊՀ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 95-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Մաղալյան Վլադիմիր – Երևանի համալսարանի գիտական գրադարանի հիմնադրման պատմությունից **2.50**

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ավետիսյան Լևոն – Հայագիտական նոր հանդես **1.76**

Կոստանդյան Էմմա – Հրաչիկ Սիմոնյան, Ազատագրական պայքարի ուղիներում, I-V գրքեր, Եր., 2003-2013 թթ., ընդհանուր ծավալը 5208 էջ **2.58**

Սեֆերյան Սոնա – Անահիտ Բեքարյան, Բայրոնը և հայ իրականությունը (հայերեն և անգլերեն), Եր., ԵՊՀ հրատ., 2013, 404 էջ + 4 էջ ներդիր **2.67**

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Պապոյան Արտաշես – Ալեքսանդր Սիմոնի Մարգարյան (1923-2001) **2.72**

Սմբատյան Նելլի – Հայ-ռուսական առաջին միջազգային գիտաժողովը Բուխարեստում **1.81**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

- Էլյա Սարիբեկյան** – Հոբի գրքի՝ Իսիքիոս Երուսաղեմացու և Գրիգոր Տաթևացու մեկնությունների աղերսները..... **3**
- Эля Сарибекян** – Соотношение между толкованиями Исихиоса Иерусалимского и Григора Татеваци книги Иова
- Elya Saribekyan** – Correlation of the Book of Job by Grigor Tatevatsi and Isychios of Jerusalem
- Աշոտ Մանուչարյան** – Թալինի նորահայտ վիմագիրը և հազարապետի պաշտոնի պատմական գործառույթները **12**
- Ашот Манучарян** – Новонайденная лапидарная надпись из Талина и исторические функции должности тысяцкого
- Ashot Manucharyan** – Newly Brought to Life Inscription of Talin and the Historical Functions of the Post of Major
- Վիկտորյա Վասիլյան** – Թագուհիների պատկերագրումը հելլենիստական Հայաստանի արվեստում **18**
- Виктория Василян** – Изображение царик в эллинистическом искусстве Армении
- Viktorya Vasilyan** – Depiction of Queens in the Hellenistic Art of Armenia
- Գայանե Հակոբյան** – Հանրության քողարկված կառավարման մոդելը (PR) Հ. Թումանյանի «Քաջ Նազարը» հեքիաթում..... **34**
- Гаяне Акопян** – Модель скрытного управления обществом (PR) в сказке О. Туманяна «Храбрый Назар»
- Gayane Hakobyan** – Disguised Public Management Model (PR) in the Fairy Tale “Nazar the Brave” by H. Tumanyan
- Լիանա Սարգսյան** – Բայերի սեռային անցումներ արդի արևելահայերենում **45**
- Лиана Саркисян** – Сдвиги в системе глаголов в современном восточноармянском языке
- Liana Sargsyan** – Gender Transition of Verbs in Modern Eastern Armenian
- Արսեն Արզումանյան** – Ռումինահայ համայնքը 1989 թ. հեղափոխությունից հետո **55**
- Арсен Арзуманян** - Армянская община Румынии после революции 1989 года
- Arsen Arzumanyan** – The Armenian Community in Romania after the Revolution of 1989
- Լիլիթ Խաչատրյան** – Հովհաննես Ասատրյանի բնանկարների առանձնահատկությունները **65**
- Лилит Хачатрян** – Особенности пейзажей Ованнеса Асатрянна
- Lilit Khachatryan** – Features of Hovhannes Asadourian’s Landscapes

Տեղեկություններ հեղինակների մասին..... 77
Сведения об авторах
Information about the authors

«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի «Չայագիտություն» շարքի
2014 թ. համարների տարեկան բովանդակությունը..... 78
Содержание журнала "Вестник Ереванского университета", серия "Арменове-
дение" за 2014 г.
The annual contents of the "Armenian Studies" issues of the "Bulletin of Yerevan
University" in 2014

Դասիչ՝ 77716

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Սանուկյան փող., 1, 106
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 106
Address: 1, 106, Alek Manoukian str., Yerevan, Republic of Armenia

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Կայք՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 21. 10. 2014:
Տպաքանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ:

.....
«Լիմուշ» ՍՊԸ, Երևան, Պուշկինի փող., 40-76: